



Տ Ո Ն Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԵՍԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ,
ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ
(ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)



ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Տ Ո Ն Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԵՍԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ,
ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ
(ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ - 2008

շիֆր...

Տպագրվում է

**ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
և Երևանի Պետական Համալսարանի
Գիտական խորհրդների որոշմամբ**

խմբագիր՝ *Սվետլանա Վարդանյան*,
բանասիրական գիտ. թեկնածու

տպարանի անվանումը...

Աշխատությունը վերաբերում է հայկական ավանդական տոների՝ ժողովրդական ծեսերի, սովորույթների և հավատալիքների ամբողջական համալիրով: Տոները ներկայացված են ինչպես ավանդական-ազգաբանական, այնպես էլ՝ արդի-էթնոսոցիոլոգիական տեսանկյուններով:

Այն նախատեսված է՝ ազգագրագետների, սոցիոլոգների, բանագետների, մշակութաբանների, պատմաբանների, գիտա-կրթական ու մշակութային հաստատությունների և ընթերցող լայն հասարակության համար:

շիֆր..

**ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՆԱԽԱԲԱՆ

Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ:

Տոները կատարում են նաև էթնիկ ավանդույթների կողմնորոշման, հասարակական հարաբերությունների կարգավորման և անհատի պահանջների բավարարման գործառույթներ: Այդ իսկ պատճառով տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է:

Առնչվելով տվյալ էթնոսի ծագման և զարգացման որոշակի հիմնախնդիրներին, տոնն արտացոլում է ոչ միայն էթնոմշակութային ինքնատիպությունը, այլև էթնիկ շփումների հետևանքով առաջացած փոխազդեցությունները: Հետևաբար՝ մշակութային այս տարրի ուսումնասիրությունը կարևորվում է նաև միջէթնիկ փոխհարաբերությունների տեսանկյունից:

Տոնն իրենից ներկայացնում է յուրատեսակ միկրոհամալիր, ուր առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչները՝ բնակավայր, բնակարան, ազգակցական, դրացիական, ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ, ամուսնական ծիսաշար, երաժշտական ստեղծագործություններ, խաղեր, ուտեստ և տնտեսական գործունեության ավանդական փուլեր՝ դրանց հաջողություններն ապահովող ծեսերով ու սովորություններով: Նշված տարրերի նույնիսկ այս ոչ ամբողջական ցանկը բավական է՝ հիմնավորելու տոներում առկա կենցաղամշակութային բազում շերտերը: Բնականաբար, հարուստ է նաև մշակութային այս երևույթն ուսումնասիրող գիտությունների տեսականին: Տոների և ծեսերի հետ առնչվող առանձին հիմնահարցեր են շոշափում ազգագրությունը, բանագիտությունը, կրոնագիտությունը, մշակութաբանությունը, սոցիոլոգիան, տոնարագիտությունը, գեղագիտությունը, հոգեբանությունը և գիտության այլ բնագավառներ:

Հայագիտության մեջ ավանդական կենցաղում տարածված տոները հիմնականում ուսումնասիրվել են ազգագրական և բանագիտական տեսանկյուններով: Այս առումով մեծ ներդրում ունեն Գրիգոր Խալաթյանը և Ստեփան Լիսիցյանը՝ մասնավորապես

իրենց կազմած ազգագրական հարցարաններով: Վերջիններիս կիրառումը հարցադրումների ողջ համալիրով կարելի է համարել տոների (ինչպես նաև կենցաղամշակութային մյուս բոլոր տարրերի) ամբողջական և գիտական-համակարգված հետազոտության նախափորձ:

Սույն գրքում օգտագործվել են հայոց կենցաղում տարածված տոների վերաբերյալ ազգագրական և բանագիտական հիմնական աղբյուրները¹, ինչպես նաև տարբեր հիմնահարցերի հետ առնչվող առանձին հեղինակների ուսումնասիրություններ², ուր գրեթե ամբողջությամբ ներկայացված է հայոց ավանդական տոնածիսական համալիրը:

Վերջին շրջանում հայագիտության մեջ տոներին նվիրված աշխատությունները հիմնականում վերաբերում են անցյալին և ունեն ինչպես տեսական, այնպես էլ ճանաչողական ուղղվածություն:

Մեծ արժեք են ներկայացնում Ասյա Օդաբաշյանի ուսումնասիրությունները³:

Հարկ է նշել Սարգիս Հարությունյանի աշխատությունները⁴, ուր հայոց հին հավատալիքների, կրոնի, պաշտամունքի, հեթանոսական դիցարանի, առասպելների և այլ էթնիկ զուգահեռների համատեքստում քննարկվում է հայոց կրոնա-ավանդական տոների ծագումնաբանությունը:

Պետք է առանձնացնել նաև Ռաֆիկ Վարդանյանի «Հայոց տոնացույցը» խորագիրը կրող աշխատանքը, որտեղ մատենագրական աղբյուրների հիման վրա ամբողջությամբ դիտարկվել և քննարկվել է հայոց տոնացույցի զարգացումը 4-18-րդ դդ.-ում:

¹ Այս առումով շատ գնահատելի ծառայություն է մատուցել Երվանդ Լալայանը, որը հանգամանալից ներկայացնելով Հայաստանի մի շարք գավառների տոնական համակարգերը, անդրադարձել է դրանց առնչվող ծիսապաշտամունքային, տոմարագիտական, լեզվաբանական և այլ հիմնահարցերի:

Այդ ժամանակաշրջանի հայոց տոնական համակարգի վերաբերյալ արժեքավոր տեղեկություն հաղորդող հեղինակներից են նաև Հ. Մալխասյանը, Հ. Մուրադյանը, Ե. Շահագիզը, Քաջբերունին, Ե. Պողոսյանը, Ա. Ալպոյաճյանը, Գ. Հալաջյանը և ուրիշներ, որոնց գործերի աշխարհագրությունը գրեթե ամբողջությամբ ընդգրկում է պատմական Հայաստանը և հայկական առանձին գաղթօջախները:

² Հենվելով պատմական և ազգագրական հարուստ աղբյուրների վրա, իրենց ուսումնասիրություններում ավանդական տոնական համակարգի հետ առնչվող ծիսապաշտամունքային, ժամանակագրական, տոմարագիտական, լեզվաբանական, կրոնափիլիսոփայական, գեղագիտական կարևորագույն հիմնահարցեր են շոշափել Ղ. Ալիշանը, Ա. Ամատունին, Գիսակը, Մ. Օրմանյանը, Հ. Նազարյանը, Խ. Սամվելյանը, Լ. Սեմյոնովը, Ն. Ադոնցը, Գ. Ղափանցյանը, Ա. Մնացականյանը, Վ. Բոյանը, Ա. Մանուկյանը և ուրիշներ:

³ Արժեքավոր է հատկապես նրա՝ «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում» և «Հայոց Նավասարդը» աշխատությունները, որոնցում տրված է ավանդական Ամանորի ծիսական համալիրի ամբողջական վերլուծությունը: Կարևորում ենք նաև «Հայոց ժողովրդական հավատալիքներ» աշխատությունը, որում՝ տոների հետ առնչվող զուտ պաշտամունքային հիմնահարցերի հետ միասին, դիտարկվում է նաև տոնացույցի համակարգային-կողային համալիրը:

⁴ *Ս. Հարությունյան*, Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987: *Նաև՝* Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001:

Կարևորում ենք Հրանուշ Խառատյան-Առաքելյանի «Հայ ժողովրդական տոները» աշխատությունը, ուր հեղինակը զուտ ազգագրական տեսանկյունով է ներկայացրել հայոց ավանդական կենցաղում տարածված ժողովրդական տոների ընդհանուր համալիրը:

Արժեքավոր են նաև Լևոն Աբրահամյանի ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հնագույն շրջանին. դրանցում ամենից ուշագրավը հեղինակի կողմից՝ նախնադարյան ծեսի և 1988 թ. փետրվարին սկիզբ առած դարաբաղյան շարժման միջև զուգահեռների անցկացումն է⁵:

Հայոց ավանդական կենցաղում տարածված տոները գրականության մեջ և կենցաղային ընկալումներում շատ հաճախ ներկայացված են՝ **ազգային, ավանդութային, ժողովրդական, կրոնական, քրիստոնեական** և այլ հոնանիշ անվանումներով, որոնք համակողմանիորեն արտացոլում են մշակութային այդ երևույթի էությունը: Որակավորումների այդ համատեքստում իրոք, երբեմն դժվար է սահմանազատել **կրոնականը՝ ժողովրդականից** կամ՝ **ազգայինից**, քանի որ նշված հատկանիշները դարերի ընթացքում միահյուսվելով, կազմել են գրեթե անբաժանելի ներդաշնակ միասություն: Կենցաղում տոնական խորհրդի կամ իմաստի՝ **էթնիկական, կրոնական և ավանդական** նմանակերպ ընկալումները նկատելի են նույնիսկ մեր օրերում:

Ավանդութային տոներում առկա հավատալիքների հիմնական շերտերն իրենց ծագմամբ առնչվում են երկու պատմական փուլերի հետ. **առաջին՝ մինչքրիստոնեական**, երբ բնության ու հասարակության մեջ կատարվող երևույթները կապվում էին առանձին ոգիների ու աստվածների հետ, և **երկրորդ՝ քրիստոնեական**, երբ արդեն նոր՝ քրիստոնեական կրոնի տեսանկյունով էր բացատրվում այդ երևույթները:

Ավանդութային-կրոնական տոներն արդեն շուրջ մեկ և կես հազարամյակ գոյատևում են շնորհիվ եկեղեցու, որոնք ամրագրված են նրա կողմից մշակված տոնացույցերում: Բնական է, որ եկեղեցին զուտ քրիստոնեական տեսանկյունով է ներկայացնում այդ տոների տիպաբանությունը: Վերջինս՝ **Սրբոց և Պահոց օրերի** հետ միասին որպես եկեղեցական օրերի առանձին խումբ, դասակարգում է նաև **տոները՝** հետևյալ ենթախմբերով. **1. Տերունի տոներ, 2. Աստվածածնի տոներ, 3. Խաչի տոներ, 4. Եկեղեցական**

⁵ Հեղինակի «Քառուր և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում» խորագիրը կրող հոդվածում ներկայացված են բոլոր այն հատկանիշները, որոնք բնութագրական են նախնադարյան տոնին (նախատոնին) և արցախյան շարժմանը: Արժեքավորն այստեղ, ոչ միայն ազգային այդ շարժման տիպաբանությունն է կամայն որպես ծես ներկայացնելը, այլև՝ համազգային զարթոնք երևույթը և այն հատկանիշները, որոնք արտացոլում են սերունդների՝ արմատների հետ կապի ժառանգորդությունը:

տոներ, 6. Ազգային կամ կրոնական գաղափարներին նվիրված տոներ⁶:

Այդ տոները, սակայն, ծագումով շատ ավելի հին արմատներ ունեն և առնչվում են հեթանոսական շրջանի հետ, որոնց ծիսասովորության համալիրներում հիմնականում արտացոլվել է երկրագործական-ժողովրդական տոնացույցը: Որոշ հետազոտողներ այս տեսանկյունով տիպաբանելով քրիստոնեական տոնացույցի հենքը հանդիսացող ավանդության տոները, փորձել են դրանցում պահպանված մինչքրիստոնեական տարրերի միջոցով բացահայտել առանձին տոների կամ տոնախմբերի կապը տնտեսական գործունեության ավանդական փուլերի հետ (**ցանքի նախապատրաստում, ցանք, խնամք, բերքահավաք** և այլն): Այս առումով ուշագրավ է Վ. Բոդյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում» աշխատությունը, ուր ավանդության տոների դասակարգումը տրված է ըստ երկրագործական աշխատանքային փուլերի⁷:

Սույն գրքում ներկայացված են հայոց ավանդական կենցաղում առավել տարածված տոները՝ **Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդը, Սուրբ Սարգիսը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Մեծ Պասը, Ծաղկազարդը, Ջատիկը, Համբարձումը, Վարդավառը, Նավասարդը, Սուրբ Աստվածածնի Վերափոխումը և Խաչվերացը**: Ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրի ընդհանուր պատկերն իրենց ծիսասովորության հիմնական բաղադրիչներով, հեղինակը միաժամանակ որոշակի ուշադրություն է դարձրել հայոց քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող հիշյալ տոների ծագումնաբանական խնդիրներին, դրանց քրիստոնեական և մինչքրիստոնեական արմատներին, հեթանոսական զու-

⁶ **Տերունի** տոները նվիրված են Քրիստոսին առնչվող դեպքերին. –Ծնունդ՝ Աստուածայայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի և Մկրտութիւն, Անւանակոչութիւն, Տեառնընդառաջ, Վարդավառ-Այլ-ակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ծաղկազարդ, Աւագ շաբաթ, Ջատիկ կամ Յարութիւն, Համբարձում: **Աստուածածնի** տոներն են.–Յղութիւն յԱննայէ, Ծնունդ, Երից ամաց ընծայումն ի տաճարն, Գիւտ տփոյ, Գիւտ գօտոյ և Վերափոխումն Ս. Աստվածածնի: **Խաչի** տոներն են.–Տօն երևման սրբոյ խաչի, Խաչվերաց, Գիւտ խաչի, Վարագայ խաչ: **Եկեղեցական** տոներն են.–Տօն կաթօղիկէ Սրբոյ էջմիածնի, Տօն Շողակաթի, Աշխարհամատրան Կիւրակի, Յիշատակ տապանակի հնոյ և նորոյ ուխտի: Եկեղեցական կարևոր տոները կոչվում էին նաև **«տաղավար»** (Քրիստոսի Ծնունդ, Ջատիկ, Խաչվերաց, Ս. Աստվածածին, Վարդավառ), որոնց հաջորդ օրը մեռելոց է և կատարվում է գերեզմանօրհներք:

⁷ Հեղինակն ավանդության տոները ներկայացնում է հետևյալ դասակարգմամբ. **1.** Տոներ, որոնք կապված են գարնանացանի նախապատրաստական աշխատանքների հետ (Նոր Տարի-Ամանոր, Քրիստոսի Ծնունդ-Ջրօրհներք, Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ Պաս, Ծաղկազարդ, Ջատիկ և Համբարձում): **2.** Տոներ, որոնք կապված են դաշտերի խնամքի և բերքահավաքի հետ (Վարդավառ, Նավասարդ, Ս. Աստվածածին): Երկրագործական տոնացույցի գրեթե նմանատիպ տիպաբանություն է տվել նաև Ա. Օդաբաշյանը: Հիմնվելով XIX դարի և XX դարասկզբի ազգագրական նյութերի վրա, Վ. Բոդյանն առանձնացնում է ավանդության գլխավոր տոների երկու խումբ՝ ելակետ ընդունելով դրանց քրիստոնեացվածության աստիճանը. **ա/ ժողովրդական (կամ՝ քիչ քրիստոնեացած) տոներ.** Նոր Տարի, Բարեկենդան, Տեառնընդառաջ, Համբարձում և Վարդավառ և **բ/ Քրիստոնեական կամ խստորեն քրիստոնեացված տոներ.** Ծնունդ-Ջրօրհներք, Ս. Սարգիս, Ծաղկազարդ, Ջատիկ:

գահեռներին՝ պայմանավորված տնտեսության, ընտանիքի և անձի բախտն ու ճակատագիրը կանխագուշակող հմայական բնույթի ծեսերով, սովորույթներով ու հավատալիքներով:

Ավանդական կենցաղում տարածված տոների վերաբերյալ օգտագործված աղբյուրներն ու հետազոտությունները տարածական առումով ընդգրկում են Պատմական Հայաստանը և հայկական առանձին գաղթօջախները:

Վերջին հարյուրամյակում հայոց տոնական համակարգի ընդհանուր պատկերն ու էվոլյուցիոն գործընթացն ամբողջությամբ ներկայացված է արխիվային, մամուլի, ինչպես նաև դաշտային ազգագրական և սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով: Ուշագրավ է, որ ժամանակագրական առումով այն ընդգրկում է տոնածիսական առանձնահատուկ համալիրներ ունեցող **Հայոց Առաջին, Երկրորդ (Խորհրդային) և Երրորդ Հանրապետությունները:**

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունքն ամբողջությամբ ամփոփված է հեղինակի կողմից մշակված սոցիոլոգիական աղյուսակներում և գծապատկերներում, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ավանդական տոները այստեղ դիտարկվել են կենցաղում տարածված և գլխավորապես խորհրդային ծագում ունեցող աշխարհիկ բնույթի տոների ընդհանուր համատեքստում:

Պետական-արխիվային և օրենսդրական ու գերատեսչական տարաբնույթ փաստաթղթերի հիման վրա ներկայացվել են նաև **հայկական երեք հանրապետությունների** պետական բոլոր տոները:

ՏՈՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

(XIX դ.վերջ – XX դ.սկիզբ)


8



1. ՆՈՐ ՏԱՐԻ



9



Հազարամյակների ընթացքում, կապված տոմարային փոփոխությունների հետ, հայոց կենցաղում տարբեր ժամկետներում է նշվել **Նոր տարին** կամ **Ամանորը** խորհրդանշող տոնը: Անկախ այդ հանգամանքից, ամանորյա արարողությունները կատարվել են մեծ հանդիսությամբ, որոնք աչքի են ընկնում ժողովրդական ծեսերի, սովորույթների և հավատալիքների բազմազանությամբ:

Այս տոնը դարեր շարունակ ամենասիրվածն ու տարածվածն է եղել հայոց տոնածիսական համալիրում: Տարեմուտին նվիրված ծիսաշարը ժամանակի ընթացքում իր մեջ ներառել է նաև այլեթնիկ միջավայրից եկած առանձին բաղադրիչներ, որոնք էլ ավելի են հարստացրել այդ գեղեցիկ տոնը:

Ինչպես շատ ժողովրդների, այնպես էլ հայերի մեջ տարեսկիզբն անցյալում համընկնում էր տնտեսական տարվա սկզբին՝ առնչվելով գարնանամուտին կամ բնության զարթոնքին: Քրիստոնեության շրջանում դրա առանձին տարրերը մասնավորապես պահպանվել են Բարեկենդանի ծիսաշարում:

Հայկական տոմարի զարգացման հաջորդ փուլում տարեսկիզբ էր համարվում Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը): Այն նշվում էր որպես բերքահավաքի՝ **«Նորոց պտղոց եւ հունձքի տոն»**: Ըստ ավանդության, այդ օրն է տեղի ունեցել Հայկ նահապետի մեծամարտը Բելի դեմ:

XVII դ. կեսերից աստիճանաբար հայ իրականություն սկսեց մուտք գործել **քրիստոնեական Ամանորը**, որը նշվում էր հունվարի 1-ին¹⁰: Սակայն այն դեռևս

⁸ «Տարի» կոչվող ծիսահացը Ախալքալաքի Աբուլ գյուղում. / 20-րդ դ. սկիզբ /

⁹ Ամանորյա մարդակերպ ծիսական հացեր՝ «Վասիլներ». ծախից աջ՝ տղամարդու, կնոջ, տղայի և աղջկա կերպարներ / 20-րդ դ. սկիզբ /

չունենալու գանգաճային բնույթ: Նույնիսկ XVIII դ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից մշակված հայոց եկեղեցական տոնացույցում **տարեմուտ** կամ **քրիստոնեական Նոր Տարի** էր համարվում ոչ թե **հունվարի 1-ը**, այլ **հունվարի 6-ը՝ Քրիստոսի Ծննդյան օրը**:

¹⁰ Հունվարի 1-ը որպես **Ամանոր**, հռոմեացիներն իրենց պետական նոր տոնացույցում ընդունել էին դեռևս Հուլիոս Կեսար կայսեր օրոք՝ մ.թ.ա. 45թ.: Այդ տոմարը կայսեր անունով էլ կոչվեց՝ «**Հուլյան**», որը հետագայում ընդունվել է երկրագնդի շատ ժողովուրդների կողմից և մասամբ կիրառվում է մինչև մեր օրերը: Կան տեսակետներ, որ մեր նախնիները **հուլյան** տոմարին ծանոթ են եղել դեռևս Հուլիոս Կեսարի ժամանակներից: Որոշ տվյալներով, սահմանափակումներով հանդերձ, հայոց արքունական և քրմական նեղ շրջաններում այն ընդունվել է մ.թ. 122թ.: Կան տեսակետներ, որ Հայոց եկեղեցին **հուլյան** տոմարին անցնելու վերաբերյալ որոշում է կայացրել Ադանայի ժողովում (1316թ.): Բայց այդ տոմարը բավական նեղ շրջանակներում է գործածվել, և այն էլ՝ հայոց ավանդական տոմարի զուգադրությամբ:

Հռոմում ժամանակին թեժ բանավեճ էր ընթացել, թե տարվա առաջին ամիսը որ **աստծուն** նվիրել, խաղաղության աստված **Յանուսի**¹⁰՝, թե՛ պատերազմի հովանավոր **Մարսին**: Արդյունքն այն եղավ, որ որոշվեց **նոր տարվա** առաջին ամիսը սկսել **հունվարից**՝ ակնկալելով, որ ամբողջ տարին խաղաղությամբ կանցնի: Ըստ լատինական դիցաբանության, լուսի և արևի աստված Յանուսն էր ստեղծել և շունչ տվել մարդկանց: Խորհրդանշական է, մասնավորապես, Յանուսի երկդիմի կերպարը. նա մի հայացքով նայում է անցյալին, իսկ մյուսով՝ ապագան:

Հուլյան տոմարն ուներ ոչ թե 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան, այլ՝ 365 օր, 6 ժամ: Այսինքն, ճշգրիտ հաշվարկով այն որոշված տարուց երկար էր 11 րոպե 14 վայրկյանով: Անճշտությունը վերացնելու նպատակով 16-րդ դ. Հռոմի Գրիգոր 13-րդ Պապը հրավիրեց հայտնի տոմարագետների, որպեսզի մշակեն նոր տոմար: Ներկայացված նախագծերից ընդունվեց իտալացի աստղագետ Ալոիս Լիլիոյի առաջարկած տարբերակը: Այս նոր տոմարը, որ կիրառվել է 1582թ.-ից, կոչվեց Հռոմի Գրիգոր 13-րդ Պապի անունով՝ «**Գրիգորյան**»: Նոր տոմարը սկսվում է գործել հոկտեմբերի 15-ից: Քանի որ հուլյան տոմարի 11 րոպե 14 վայրկյանի սխալը մ.թ.ա. 45 թ. մինչև 1582 թ. կուտակվել և դարձել էր 10 օր, այսինքն՝ ժամանակը 10 օրով ետ էր ընկել, ուստի սխալն ուղղելու համար որոշվեց 1582 թ. հոկտեմբերի 4-ից հետո ոչ թե հոկտեմբերի 5-ը ընդունել, այլ՝ հոկտեմբերի 15-ը: **Գրիգորյան** տոմարը հետագա տարիներին ընդունեցին երկրագնդի գրեթե բոլոր ազգերը: Ռուսական պետությունը նոր տոմարը կիրառության մեջ դրեց 1918 թ. հունվարի 1-ին, երբ այդ 336 տարիների ընթացքում (1582 թ.-ից մինչև 1918թ.-ը) 11 րոպե 14 վայրկյանի կուտակումն ավելացել էր ևս 3 օրով: Այդ իսկ պատճառով այստեղ **Գրիգորյան** տոմարն ավելացավ ոչ թե 10, այլ՝ 13 օրով: Դրանով էր պայմանավորված հին և նոր տոմարների 13 օրերի տարբերությունը: Ի դեպ, ռուսական և ուղղափառ շատ այլ եկեղեցիներ առ այսօր մերժելով նոր տոմարը, կիրառում են հինը՝ Հուլյանը: 13 օրերի այս հաշվարկը հայոց մոտ էլ մինչ այժմ ընկալվում է որպես հին և նոր տոմարների տարբերության ժամկետ, չնայած հայոց կրոնական, իսկ հետագայում՝ նաև պետական շրջանակներում վաղուց արդեն ընդունվել էր **Գրիգորյան** տոմարը: Հայերն առաջիններից էին, որ (թեև սահմանափակ) դեռևս 16-րդ դ. գործածել են նոր տոմարը: Հայ իրականության մեջ այդ տոմարն առաջինն ընդունել են իտալահայերը (1584թ.), ապա՝ Ամստերդամի հայ կաթոլիկները (17-րդ դ.), հետագայում՝ Կոստանդնուպոլսի հայ կաթոլիկները, իսկ 1783թ.՝ նաև լեհահայերը:

Խորհրդային Հայաստանը **Գրիգորյան** տոմարը պաշտոնապես ընդունել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին):

Պատմական Հայաստանում և հայոց գաղթօջախներում XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին տարեմուտի տոնը հայտնի էր «Նոր Տարի», «Ամանոր»¹¹, «Կաղանդ», մասամբ՝ նաև «Նավասարդ», «Տարեզուլխ» և «Ավետիս» անուններով:

Բավական տարածված էր Նոր Տարվա կամ Կաղանդի¹² նախորդ երեկոյան կամ գիշերը երեխաներից կազմված խմբերով տնետուն ման գալու, երգերի և

¹¹ «Ամանոր»-նշանակում է՝ «Նոր Տարի»: Այդ տոնը հին Հայաստանում մեծ հանդիսությամբ էր կատարվում, որի առթիվ հավաքված բազմությունն իր հետ բերում էր Նոր Տարվա պտուղների առաջին բերքը՝ **երախայրիքը**: Ամանորը հայոց հեթանոսական շրջանի նշանավոր տոնն էր, որի ժամանակ կատարվում էին մեծամասշտաբ արարողություններ: Կազմակերպվում էին ձիարշավներ, եղջերուների վազք և բազում այլ մրցույթներ ու խաղեր: **Ամանորի աստվածը՝ Վանատուրը**, հայ դիցաբանության մեջ համարվում էր պտուղների պահապանը և մարդկանց կերակրողը: Վերջինիս մեղանը գտնվում էր Բագրևանդի Բագավան դիցավանդում, որը հեթանոսական Հայաստանի նշանավոր ուխտավայրերից էր, ուր հայոց Տիգրան Գ թագավորը հատուկ հյուրատուն էր կառուցել և իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանի վրա մեղան կանգնեցրել: Այստեղ իջևանում և հյուրասիրվում էին նույնիսկ օտարերկրացի անցորդները: Պատահական չէ, որ **Ամանորը**, նախ և առաջ, ճանաչվում էր որպես **հյուրընկալ աստված**: Իսկ տոնը տևել է Նավասարդ ամսի 1-ից մինչև 6-ը, որի բազմահազար մասնակիցները ոչ միայն Հայաստանի տարբեր գավառներից էին, այլև՝ հարևան երկրներից:

Տարեզուլխի ուրախությունները մարմնավորող **Ամանոր-Վանատուրը**՝ այգիների, պարտեզների և պտուղների խնամակալն էր:

Ամանոր աստվածանունը կազմված է **ամ=տարի** և **նոր** բառերից, որը նշանակում է՝ **նոր տարի, տարին նորոգող**: **Վանատուր** անունը՝ **վանք** և **տուր** բառերից է կազմված, որը նշանակում է՝ **«հյուրընկալ, հյուրասիրություն ցույց տվող»**: **Ամանոր-Վանատուր** անուններից բացի գործածվել է նաև **Ամենաբեղ** ձևը:

Ամանոր-Վանատուրի այդ երկվության մեջ Ղևոնդ Ալիշանը տեսնում է երկու տարբեր աստվածություններ՝ միևնույն դերով: Նա Ամանոր-Վանատուրը համեմատում է լատինացիների Պոնոնա դիցուհու և նրա փեսա Վերտունոսի հետ: Վերջինս՝ լինելով պարտեզների պահապան, ուներ ծաղկեպսակ և ձեռքին՝ առատության եղջյուր: Պոնոնան ևս պսակված էր որթով և ողկույզներով ու ամենաբեր էր՝ դարձյալ առատության եղջյուրը ձեռքին: Այդ երկվության և դրա զուգահեռների վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ Ամանոր-Վանատուրը միևնույն աստվածությունն էր՝ արական և իգական աստվածությունների միասնական դերով: Ամանորի հետ որոշակի աղերսներ կան՝ կապված հայոց հեթանոսական դիցարանի գլխավոր աստծո՝ Արամազդին նվիրված տոնի հետ, որը բազում տիտղոսների հետ միասին ուներ նաև **հյուրընկալ** անունը: Արամազդի գլխավոր մեղանը գտնվում էր Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Հանի կամ Անի բնակավայրում:

Այսպիսով, Արամազդին նախորդող հայոց գերագույն աստվածը եղել է Վանատուրը: Հետագայում, Արամազդի (նրա օտար զուգահեռներն էին, օրինակ՝ հնդկական Ինդրան, հռոմեական Յուպիտերը և այլն) գերիշխանության պայմաններում, Վանատուրն աստիճանաբար կորցրեց իր երբեմնի տիտղոսը՝ պահպանելով միայն **հյուրընկալ** աստվածության հատկանիշը:

Նավասարդյան տոները մ.թ.ա. 3-րդ հազարամյակում նվիրված են եղել Հայկ նահապետին:

Քրիստոնեության շրջանում Գրիգոր Լուսավորիչն այդ տոնը փոխարինեց Հովհաննես Կարապետի և Աթանազիների տոնով:

¹² Հայոց ավանդական կենցաղում, ընդհանուր առմամբ, գերակայում էր տոնի՝ **Նոր Տարի** անվանաձևը, սակայն արևմտահայ շրջաններում, առավելապես, տարածված էր **Կաղանդ** անվանումը, որը հունա-հռոմեական ազդեցության արդյունքն էր: Ինչ վերաբերում է **Կաղանդ** բառի ստուգաբանությանը, այն հայ իրականություն է մուտք գործել լատիներեն «*calendae*» արտահայտությունից (որը նշանակում է՝ **ամսագլխի օր**) և հուններեն «*kalan-*

խաղիկների միջոցով տան անդամների Նոր Տարին շնորհավորելու ու փոխարենը նվերներ ստանալու սովորույթը: Երեխաները երգիկներից և բուխարիկներից շնորհավորական բարենաղթանքներ հղելով, միաժամանակ տոպրակ, կողով, գուլպա կամ այլ հարմարանքներ էին **կախում**, որոնց մեջ տանտիրուհիները նվերներ էին դնում (սովորաբար՝ չիր, չամիչ, գաթա և այլն): Երբեմն տանտիրուհիները երգիկից իջեցրած կողովի մեջ կատակով կոշիկ կամ կատու էր տեղադրում, որն էլ ավելի գվարճալի էր դարձնում տոնական ուրախ մթնոլորտը: Ամանորյա այս գեղեցիկ ծեսը հայտնի էր «**Կախու**», «**Կախուկ**», «**Գոտեկախ**» անուններով:

Շնորհավորելու, նվիրատվական և հյուրընկալման արարողություններում սահմանված էր հստակ կարգ: Շնորհավորում էին նախ, զավակները՝ ծնողներին, արհեստավորները՝ վարպետին, աշակերտներն՝ ուսուցչին, տան մեծը՝ տանուտերին, քահանային և հետո՝ հակառակը: Հիմնականում նվիրում էին մրգեր, չրեղեն, թաշկինակ, գլխարկ, գլխաշոր և այլն:

Տարածված էին նաև տարենուտի քոթուկի (քյոթուկի) հետ կապված ծեսերը: Նահապետը մի մեծ գերան էր դնում գլխատան մեջ, որի ծայրը մեծամասամբ դուրս էր ձգվում տան տարածքից: Այդ քոթուկը կամ գերանը պիտի վառվեր Ամանորի գիշերվանից մինչև Քրիստոսի Ծննդյան տոնի երեկոն: Ծննդյան գիշերը վերցնում էին գերանից մնացած խանձողները ու թաղում հանդերում, որպեսզի նոր տարուն սպասվելիք բերքը առատ լինի և, որ կարկուտը չվնասի արտերին: Խանձողներից պահում էին, որ հետագայում էլ կարկուտ գալու պահին շաղ տան դեպի երկինք՝ այն դադարեցնելու կամ երկինքը խաղաղեցնելու նպատակով: Շատ գավառներում այդ ծեսը ժամանակի առունով, եթե նույնիսկ չէր տևում մինչև Ծննդյան ճրագալույսը, այդուհանդերձ, աշխատում էին, գոնե, Ամանորի գիշերը կրակն անշեջ պահել:

se» բառից (որը ստուգաբանվում է՝ **յուրաքանչյուր ամսվա առաջին օր, ամսագլուխ, ամսամուտ**): **Կաղանդն** ունի նաև **կանչել** կամ **կոչել** իմաստը: Մինչքրիստոնեական ժամանակներում յուրաքանչյուր ամսվա առաջին օրը քրմերը ժողովրդին **կանչում** էին պաշտամունքային արարողությանը մասնակցելու և այդ օրը կոչվում էր **Կաղանդ**: Քրիստոնեության շրջանում, ինչպես հայոց, այնպես էլ այլեթնիկ շատ հանրությունների կենցաղում **Կաղանդը** դարձավ **Նոր Տարվա** հոնամիշ արտահայտություն: **Կաղանդ** բառից էր **Քալանթրիէ=Օրացույց** արտահայտությունը, որն ուներ **մեկ օրը՝ մյուսին կանչելու** իմաստ: **Կաղանդ** բառից է նաև **կաղանդչեքը**, որը նշանակում է **կաղանդի առթիվ տրված նվեր**: Բացի նյութական **կաղանդչեքերից**, կային և բանավոր **կաղանդչեքեր** տալու ավանդույթներ, որոնք ուղեկցվում էին խաղային-ծիսական բարենաղթանք-շնորհավորանքներով:

Նոր Տարին ընտանեկան տոն էր, որը խորհրդանշում էր ընտանիքի ամրությունը, նրա անդամների փոխադարձ հարգանքը, հարգալից վերաբերմունքը տարեցների նկատմամբ: Ընտանեկան տոն էր նաև այն առումով, որ գլխավորապես նշում էին տանը՝ ընտանեկան հարկի տակ: Պատարագի արարողությունից հետո եկեղեցուց վերադառնալով, ընտանիքի հայրն առաջինն իր զավակներից էր աջհամբույրով ընդունում Ամանորի շնորհավորանքները: Երեխաներն ու հարսներն ավագության կարգով մոտենում էին գերդաստանի նահապետին, համբուրում նրա աջը և մաղթում ամենայն բարիք: Առաջին շնորհավորողը նահապետից ստանում էր ամանորյա անդրանիկ նվերը:

Նոր Տարվա հետ կապված հայոց կենցաղում բավականին տարածված էր **«առաջինի»** հմայական խորհրդի հավատալիքը: Նոր Տարին, ինքնին, առաջին օրվա, առաջին հանդիպման, առհասարակ՝ «առաջինի» նկատմամբ ունեցած նախնական հմայական հավատքի ցայտուն արտահայտությունն էր: Մեր նախնիները համոզված էին, որ «առաջինն» ուներ իրենից հետո եկող առարկաների և երևույթների վրա ներգործելու մեծ հատկություն: Ամանորի ծիսական համակարգի մեջ մտնող «առաջինի» մոգական հատկության նկատմամբ ունեցած հավատից բխող գուշակությունները վերաբերում էին ամբողջ տնտեսական տարվան: Տարածված էին առաջին այցելուի հետ կապված ամանորյա գուշակությունները: Հավատում էին, որ եթե տան դուռն առաջինը բացի ուրախ բնավորության տեր անձնավորություն, ապա տարին ուրախ կանցնի: Նույն նպատակով ցանկանում էին, որ առաջինն իրենց տուն մտնի բարի համբավ ունեցող որևէ ծանոթ կամ բարեկամ: Ամեն ընտանիք սպասում էր, որ առաջին դուռ բացողը, իր տուն մտնողը լինի բարի մարդ՝ **«ձեռը թեթև, ոտքը խեղդով»**: Այդ պատճառով, տոնական այդ օրերին տան դուռը միշտ պետք է բաց մնար:

Առավոտյան օջախի դուռն առաջինը բացում էր ընտանիքի մեծը, որ **«այն շատ տարիներ անպակաս լիներ տնեցիների գլխից»**:

Հավատում էին, թե Նոր Տարվա նախորդ գիշերը բոլոր հոսող ջրերը մեկ վայրկյան ոսկեբեր էին դառնում, ուստի պատանիներն ու աղջիկներն այդ երեկո գնում էին իրենց ավանդական ուխտավայրի մոտ գտնվող աղբյուրը՝ սպասելով հրաշալի ակնթարթին, որ ջուր ու ջրի հետ նաև բարիք տանեն տուն: Բարիք ստանալու ակնկալությամբ աղբյուրների գուռերի մեջ նետում էին նաև ցորեն, գարի կամ հաց ու բլիթ:

Տարածված էին անձի ճակատագրի հետ առնչվող բախտագուշակությունները: Տարեվերջի գիշերն աղջիկները ձուն դնում էին թոնրի վրա գտնվող ամանի մեջ՝ տեղավորելով անուխի և հինայի միջև: Առավոտյան, եթե ձուն սևանար՝ տխրում էին իրենց անհաջող բախտից, իսկ եթե կարմրեր՝ հաջողությունը կժպտար նրանց:

Նոր Տարվա ծիսաշարում իրենց ուրույն տեղն ունեին «Ավետիս» կամ «Ալելուիա» հայտնի երգ-խաղիկները: Նախաքրիստոնեական շրջանում ուրախ լուր ազդարարող այս երգերը հիմնականում ուղեկցում էին նավասարդյան տոնահանդեսները: Քրիստոնեության տարածմանը զուգընթաց, նշման ժամկետներով, երբ մոտեցան Ամանորն ու Սուրբ Ծնունդը, դրանք սկսեցին կատարվել նաև քրիստոնեական Նոր Տարվա օրերին:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերի ամանորյա ծիսաշարում **տոնածառն ու Ձմեռ Պապն** աննշան տեղ էին գրավում (երկուսն էլ օտարածին երևույթներ են): Տարածված է այն տեսակետը, որ Ամանորին և Սուրբ Ծննդին եղևնի զարդարելու սովորույթը սկիզբ է առել Գերմանիայում. 1513 թ. այդ ծեսի հիմքը դրել է Մարտին Լյութերը՝ եղևնին զարդարելով մոմերով: Հետագայում այն տարածվել է նաև այլեթնիկ հանրույթների, այդ թվում՝ հայոց կենցաղում: Իրականում, ծառերի (սոսի, բարդի, ձիթենի և այլն) պաշտամունքը հայոց մեջ խորն արմատներ ունի: Եթե եվրոպական երկրներում այն կապված էր Ծննդյան տոների հետ, ապա XIX դ. վերջերին, հատկապես, քաղաքաբնակ հայերի կենցաղ մուտք գործած տոնածառն առնչվում էր միայն Ամանոր-Կաղանդին: Համշենում, օրինակ, տոնածառը ոչ թե եղևնին էր, այլ ձիթենին, որի ճյուղերը եկեղեցում օրհնելուց հետո տանում էին տուն և խրելով ծիսական մեծ հացի մեջ, դնում սեղանի կենտրոնում: Ճյուղերը զարդարում էին կաղիններով, ընկույզներով, չրերով և այլ մրգատեսակներով: Հավատում էին, որ զարդարված Կաղանդի ծառը հաջողություն կբերի ընտանիքին:

Ձմեռ Պապը¹³, թեպետ, հայոց կենցաղում օտարածին է, սակայն հայ իրականության մեջ պահպանվել էր Սահակ Պարթևի հետ կապված «Մենծ Պապուկի»

¹³ Ձմեռ կամ Կաղանդ Պապի կերպարը մեծ մասամբ կապվում է Սուրբ Նիկողայոսի (կամ՝ Նիկոլայի) ավանդության հետ, որը ծագումնաբանորեն սերտ աղերսներ ունի հունական և հայկական իրականության հետ: Եվրոպական երկրներում այսօր էլ մեծ տարածում գտած Սանտա Կլաուսը, նույն Սուրբ Նիկողայոսն է՝ հայտնի քարոզիչ հայրապետ Նիկողայոս Աքանջելագործը, Միրայի երբեմնի եպիսկոպոսը: Ծնվել է նա մոտավորապես մ.թ. 280-ական թթ.՝ Միրա (Չմյուռնիա) քաղաքի մեծահարուստի ընտանիքում: Նրա հայրը՝ հույն Եպիֆանը և մայրը՝ հայազգի Նունեն երկար ժամանակ երեխա չէին ունենում և խնդրում են Աստծուն, որ իրենց զավակ պարգևի: Կատարվում է նրանց երազանքը և ծնվում է մի իրաշամանուկ, որը դեռևս դեռահաս տարիքում ուներ առաքինության շնորհներ: Նա օգնության ձեռք էր մեկնում և՛ հիվանդներին, և՛ դժբախտներին: Նրա կատարած բարեգործությունների ողջ համալիրում ամենատարածվածը՝ ամանորյա գիշերը, մանուկներին նվ-

ավանդազրույցը, որի կերպարում մասամբ առկա էին Ձմեռ պապի նկարագրին նմանվող որոշակի գծեր: Սահակ Պարթևը՝ ժամանակին երեխաների կողմից առավել սիրված սուրբն էր, որին կոչում էին Մենծ Պապուկ: Սուրբ Սարգսի տոնին հաջորդող օրերին երեխաները ծնողներին հարցուփորձ էին անում Մենծ Պապուկի

երներ մատուցելն էր: Պատմում են նաև, որ քաղաքի սնանկացած նախկին հարուստներից մեկն աղքատանալու պատճառով չէր կարողանում ամուսնացնել իր երեք դուստրերին: Նիկողայոս քահանան, իմանալով այդ մասին, նրա տան պատուհանից գաղտնիորեն տոպրակով լի ոսկի է նետում, և առաջին աղջիկը, նրա օգնությամբ օժիտ ձեռք բերելով, ամուսնանում է: Բարեսիրտ քահանայի աջակցությամբ երջանկանում է նաև երկրորդ աղջիկը: Երբ երրորդ դստեր համար սուրբն իր հերթական օգնությունն է փորձում իրականացնել, հայրը վերջապես նկատում է խորհրդավոր բարերարին: Չնայած քահանան խնդրում է հորը գաղտնի պահել այդ պատմությունը, սակայն նա մարդկանց իրագեղ է դարձնում մեծ բարերարի ով լինելը: Գաղտնիքը տարածվում է ամբողջ քաղաքում, իսկ ամենից ուշագրավն այն է, որ այնուհետ բոլոր նմանատիպ անակնկալ նվերները վերագրվում էր Նիկողայոսին: Բարեպաշտ հոգևորականը մահացել է մոտավորապես 340-ական թթ.: Նրա գերեզմանը սրբավայրի էր վերածվել, ուր կատարվում էին զանգվածային ուխտագնացություններ: Հետագայում, երբ սարակիստները գրավեցին Փոքր Ասիան (1034թ.), նվաճվեց նաև այն քաղաքը, ուր գտնվում էր սրբի աճյունը: Բնականաբար, քրիստոնյաների համար մեծ դժվարություններ առաջացան, որի պատճառով իտալացի նվիրյալները նրա աճյունը 1087թ. (մայիսի 9-ին) տեղափոխեցին իրենց հայրենի քաղաքը՝ Պարի: Մինչ այժմ տեղի բնակիչներն ամեն տարի մայիսի 9-ին նշում են Սուրբ Նիկոլայի օրը: Բայց, քանի որ Սուրբը մահացել է դեկտեմբերի 6-ին, շատ երկրներում Նիկողայոսին նվիրված գլխավոր արարողությունները նշում են հենց այդ օրը: ԱՄՆ-ում Սուրբ Նիկողայոսի համբավը տարածվել է 1630-ական թթ.՝ հոլանդացի էմիգրանտների միջոցով: Այսօր Բելգիայում կան սրբին նվիրված 300, Անգլիայում՝ 400, իսկ Հռոմում՝ 60 եկեղեցիներ:

Արևելահայ իրականության մեջ, հատկապես վերջին շրջանում ավելի շատ տարածված է հյուսիսից եկած Ձմեռ Պապու կերպարը՝ ռուսական ազդեցությամբ, չնայած հյուսիսային Պապի հետ կապված ավանդազրույցները բնորոշ են այլեթնիկ շատ հանրությունների: Եթե հարավային Սուրբ Նիկողայոսի (որի հոմանիշ անվանաձևերն են՝ Սանտա-Կլաուս, Սանթա Քլոդ, Սանթոուս Նիքոլաուս, Սանթո Նիքոլաս, Սինթեր Քլաս, Միկոլայ) կերպարը պատմական-քրիստոնեական որոշակի հիմքեր ունի, ապա հյուսիսային Պապն ամբողջությամբ դիցաբանական է: Ռուսաստանում, օրինակ, նրան կոչում են «**Պեղ մորոզ**» (**Սառնամանիք Պապ**), որն ի տարբերություն մյուս ազգականների, ուներ նաև գեղանի թռչունի՝ «**Չունանուշիկ**» անունով: Ըստ ավանդության, սպիտակամորուս այդ ծերունին հետագայում է դարձել շռայլ ու բարի: Մինչ այդ (երբ կոչվում էր՝ **Տրեսկուն** կամ **Ստուդենեց**), նա քայլում էր Ռուսաստանի անձայրածիր տափաստաններով և սառեցնում իր ճանապարհին հանդիպող մուժիկներին: Այսպիսով, Ձմեռ Պապը՝ ժամանակի ընթացքում, դաժանի կամ պատժողի կերպարից վերափոխվեց բարեգործի և նրա գլխավոր առաքելությունը դարձավ արդար մարդկանց ու հատկապես՝ մանուկներին օգնելը, նրանց անակնկալ նվերներ մատուցելը:

Ձմեռ Պապն ունի բազում ազգականներ. նրա քույրերից Բեֆանան բնակվում է Իտալիայում, Ֆրաու Խոլլեն կամ Բերտան՝ Գերմանիայում, Եղբայր Պեր Նոյելը՝ Ֆրանսիայում, ազգական Օլենցտերոն՝ Իսպանիայի Բասկերի երկրում, որոնց հետ կապված ծեսերն ու հավատալիքներն ունեն հեթանոսական հնագույն շերտեր:

Այնքան սիրելի էր Ձմեռ կամ Կաղանդ Պապու կերպարը, որ նրա խորհրդավոր ծննդավայրը երբեմն ցանկանում էին վերագրել հայրենի բնօրրանին: Այս առումով, բավականին տպավորիչ էր հայկական գաղթօջախներից մեկի՝ Քեսապի (Սիրիա) հայ մանուկների պատկերացումները Կաղանդ Պապի ծննդավայրի վերաբերյալ: Հավատում էին, որ «**Կաղանդ Պապան կու գար, փոքրիկներուն նուէր կը բերէր անպայման Հայաստանէն: Կը հաւատան, որ Կաղանդ Պապայի երկիրը Հայաստանն է, ծիւնածածկ լեռներու երկիրը**»:

այցելության վերաբերյալ: Երբ ընտանիքի անդամները նստում էին սեղանի շուրջ, մեծերից մեկն աննկատ դուրս էր գնում և հանկարծակի ներս մտնում՝ գլխին սրածայր քուրզ, ձեռքին՝ մեծ գավազան, կռնակին՝ ոչխարի մորթի: Նրա հայտնվելուն պես, տունը լցվում էր տոնական ուրախ մթնոլորտով: Մոտենալով գինու կարասին, նա մեկական գավաթ գինի էր հյուրասիրում տնեցիներին և ասում. **«Եկավ Մենծ Պապուկը, հազար բարով մեր Բարեկենդան»:** Այդպիսով, Սահակ Պարթևի տոնից սկսվում էր Բարեկենդանի՝ գարնանային Նավասարդի կամ ավանդական Նոր Տարվա խրախճանքը:

Ամանորի ուտեստն աչքի էր ընկնում հարուստ տեսականիով: Թարմ և չորացված պտուղներն ու ընկուզեղենը պատրաստվում և պահվում էին նախապես: Կերակուրների մի մասը եփվում էր դեկտեմբերի 30-31-ին: Պարտադիր ուտեստներից էին նաև անուշապուրն ու հարիսան: Ամենատարածված խմորեղենը **«տարին»** կամ **«տարեհացն»** էր, որը ցորենի ալյուրով և ջրով կամ կաթով շաղախված մեծ հաց էր և երեսի կողմից ուներ բաժանման գծեր: Այն բաժանում էին կամ 12 մասի (ըստ տարվա ամիսների) կամ էլ՝ ընտանիքի անդամների թվին հավասար մասերի, որի մեջ դրվում էր արծաթե դրամ, հուլունք կամ որևէ այլ նշան:

Սովորաբար, այն կտրում էին Նոր Տարվա օրը կամ նախորդ երեկոյան, ինչպես նաև Ծննդյան տնօրհներքին: Բախտավոր էր համարվում նա, ում բաժին էր ընկնում խորհրդավոր այդ նշանը: Դանակը դրամին կպչելը՝ դժբախտության կամ չարի խորհրդանշան էր:

Ամանորի սեղանի պարտադիր խմորեղեններից էր նաև **գաթան**: Թխում էին կլոր, ձվածև, եռանկյունի, քառակուսի գաթաներ: Դրանց վրա երբեմն հատուկ փոսիկներ էին անում, որոնց մեջ երեխաները թռչունների համար ցորենի հատիկներ էին լցնում և դնում տանիքներին:

Նոր Տարվա կապակցությամբ պատրաստում էին տարբեր ձևի թխվածքներ՝ քսակների, հյուսքերի, կովի կրծքերի, կենդանու սմբակների, ցորենի հորերի և այլ պատկերներով՝ հավատալով, որ դրանք կնպաստեն հարստանալուն, աղջիկների մազերի երկարելուն, կովերի կաթի և ցորենի առատությանը:

Լոռիում, օրինակ, ամեն տուն Ամանորին հաց պիտի թխեր, անկախ այն հանգամանքից, որ կենցաղային կարիքները հոգալու համար բավարար քանակությամբ հաց ունեին, թե՛ ոչ: Շատ էին պատրաստում փոքրիկ մարդակերպ հացեր՝ աչքերի, բերանի, կրծքերի և այլ պատկերներով, հաճախ դրանք համեմելով քիշմիշով: Այդ հացերը հիմնականում հայտնի էին **ասիլ-բասիլ** անունով: Պատրաստում

էին նաև կլկալ կամ դուլաճ անունը կրող թխվածք, որն իրենից ներկայացնում էր կլոր, մեջտեղը ծակ բլիթ: Վերջինս անցկացնում էին գոմեշի կամ եզան եղջյուրների մեջտեղով, որպեսզի այդ տարի իրենց հորերուն ցորենի առատություն լինի: Շատ էին նաև լոբով պատրաստված ուտեստները: Պատահական չէր, որ լոռեցին ասում էր, թե «առանց լոբու Նոր Տարին չի գալ»:

Ծիսական հացը թխելիս խմորի վերջին երեք գնդերի վրա ցորենի, գարու և հաճարի նախշեր էին անում: Վերջիններս դնում էին թոնրի մեջ՝ մինչև որ թեժ կրակից ուռչեն: Դրանցից յուրաքանչյուրի փքվելու աստիճանից էլ գուշակում էին սպասվելիք բերքի առատության չափը:

Ունևոր տներում տարածված էր մեղրով, ընկույզով և նուշով **գոզինախ** պատրաստելու ավանդույթը:

Հավատում էին, որ տարեմուտի գիշերը, եթե կուժով ջուր վերցնեն գետից կամ աղբյուրից՝ այն անմիջապես ոսկու կփոխակերպվի: Կամ եթե այդ պահին որևէ առարկա դնեն ջրի մեջ՝ այն կստանա նրանց մտապահած ցանկալի իրի պատկերը: Պատահական չէ, որ սովորութային օրենքով այդ գիշեր տանից ջուր թափելն արգելվում էր:

Տանտիկինը կարմիր շոր վերցրած տանից դուրս էր գալիս, մի քիչ մեղր էր քսում դռանը և այդ շորը փռում որևէ տեղ՝ տարին քաղցր ու կարմիր անցնելու ակնկալիքով: Այնուհետև, նա մի գիրկ փայտ էր բերում և լցնում օջախն ու շնորհավորում որդիների ու հարսների Նոր Տարին: Վերջիններիս բերաններին տանտիրուհին մեղր էր քսում, իսկ երեխաներին մրգեր ու ասիլ-բասիլներ բաժանում: Տան տղամարդն էլ՝ կլկալներն առած, գնում էր գոմ, և դռան վրա մեղրով խաչի նշաններ գծում: Կենդանիների բերաններին ևս մեղր էր քսում, որից հետո գոմեշների աջ եղջյուրների մեջտեղով մեկական կլկալ էր անցկացնում: Այդ ժամանակ տոնական սեղանն արդեն պատրաստ էր, որը լի էր պասի կերակուրներով, օղիներով և գինիներով:

Նոր Տարին, նախ և առաջ, միմյանց շնորհավորում էին մոտ ազգականները: Սեղանի շուրջը տղամարդիկ և կանայք նստում էին առանձին: Շատ դեպքերում կանայք նստում էին տղամարդկանցից հետո, չնայած գրեթե լիիրավ օգտվում էին տոնական սեղանի բարիքներից՝ միաժամանակ միմյանց հղելով ամանորյա բարենաղթանքներ:

Տան մեծը՝ մի շիշ օղի վերցրած, գնում էր տանուտիրոջ տուն՝ շնորհավորելու նրա Նոր Տարին: Վերջինս պատվում էր բոլոր հյուրերին, որի տոնական սեղանին հիմնականում պասուց կերակուրներ էին, ինչպես նաև՝ օղի և գինի:

Մինչև շնորհավորում էին՝ **«Տարիդ շնորհավոր»** բարենաղթանքով, շատ անգամ նվիրելով նաև խնձոր կամ ընկույզ: Խմիչքն ընպելիս՝ ընդունված էր տոնական հետևյալ կենաց-մաղթանքը. **«Սաղ ըլիք, ուրախութնի տարի ըլի, ցամաք աչքով, ուրախ սրտով ամէն տարի էս օրս հասնունք, ուրախութնով տարեմուտ ենք անում, ուրախութնով էլ սուրբ Յարութեանը արժանանանք, լի ու առատ ըլի, Աստված մահին թանգութին տայ, հացին՝ էժանութին»:**

Տանուտերից հետո այցելում էին շնորհավորելու ծխական քահանային, որին խմիչք կամ այլ նվեր տանելը շատ տարածված չէր:

Նշանվածներն օղի, թխվածք և մրգեղեն վերցրած գնում էին աներանց տները՝ շնորհավորելու նրանց Նոր Տարին: Նախ, համբուրում էին աներոջ ու զոքանչի ձեռքերը, օղին տալիս էին աներոջը, թխվածքը՝ զոքանչին, իսկ մրգեղենը՝ հարսնացուին: Վերջինս էլ շատ հաճախ «գաղտնի կերպով» իր իսկ պատրաստած **«փնջած խնձորն»** էր նվիրում նշանածին, որն իրենից ներկայացնում էր մետաքսյա գույնզգույն թելերով փաթաթված կարմիր խնձոր՝ վրան նույն թելի փնջիկներով զարդարված: Փեսացուն ևս իր հերթին մի խնձոր էր նվիրում, որի մեջ դնում էր արծաթե կոպեկանոց:

Սանամայրերը քավորներին որոշակի նվերներ էին մատուցում, որոնք հիմնականում ոգելից խմիչքներ էին (օղի, գինի), մրգեր, թխվածքներ (հատկապես՝ բիշի և տոլաղ), ինչպես նաև գուլպաներ:

Ջավախքում Նոր Տարվա նախընթաց օրը՝ վաղ առավոտյան, «տունն ու դուռը» ամբողջությամբ մաքրում էին, որից հետո կրտսեր հարսը սովորականից շատ խմոր էր հունցում և վառում թոնիրը: Այդ ժամանակ, **ապլան** (կամ՝ **արլա**=մեծ տիկին) թոնրի վրա էր դնում մախոխապուրը, ինչպես նաև՝ ձեթով տոլման և լոբին: Երբ կերակուրը եփվում էր, նա մեծ հարսի հետ սկսում էր հաց թխել: Այդ օրը բավական շատ բաղարջ էին թխում. այն պատրաստելու ընթացքում ապլան վերցնում էր մի մեծ գունդ խմոր և աղոթում. **«երկնավոր թագավոր, դու բարով, խերով տարի էնես, դու հալևորիս ու տղոցս, հարսներուս ու թոռներուս հետ շատ տարիներ նեասիպ էնես, մէկուճար աղջկանս մէ բարի դուռըմ բանաս»:** Հետո մեկ հատ կոպեկանոց էր խրում խմորի մեջ ու գնտում՝ խմորի երեսը զարդարելով քիշմիշով և ընկույզով: **«Հիսուս Քրիստոս»** ասելով՝ նա «տարի» կոչվող խմորը դնում էր հացա-

ռի վրա և խփում թոնրի պատին: Այդ ժամանակ, հարսներից յուրաքանչյուրը խնորից մեկական «վասիլ» (տիկնիկ) և քիսա (քսակ) էր պատրաստում և զարդարում ընկույզով ու քիշմիշով: «Վասիլների» վրա նշաններ էին անում՝ պարզելու, թե դրանք որ հարսինն է և ուն ամուսնունը: Խնորներին տալիս էին նաև լուծի, հավերի ջրամանի (կրիչ), ցորենի հորերի, խնոցու այլ պատկերներ: Որոշ ժամանակ անց, ողջ գերդաստանը հավաքվում էր թոնրի շուրջ և անհամբերությամբ սպասում, թե ինչ բախտի են արժանանալու սպասվող տարում: Ապլան, նախ հանում էր «տարին» և ապա՝ քսակներն ու վասիլները: Թխվածքը հանելու ընթացքում պահպանվում էր ավագության սովորույթը: Հանվում էր գերդաստանի հոր, ապա՝ մեծ որդու քսակները և հետո՝ ավագ հարսինը: Եթե քսակներն «ուռած» էին լինում, դա՛նոր տարվա ընթացքում նրա տիրոջ հարստանալու կանխանշանն էր, իսկ եթե «կուչ եկած» էին՝ աղքատանալու: Եթե հարսների անուններով դրված վասիլներն ուռչեին՝ հավատում էին, որ նրանք որդիներ են ունենալու: Նույնիսկ փորձում էին գուշակել՝ սպասվող նորածինը տղա է լինելու, թե՛ աղջիկ: Եթե խնորի ուռուցքը դեպի վեր էր ուղղված, ասում էին, որ տղա է ծնվելու, իսկ ներքևի դեպքում՝ աղջիկ: Ցորենի ու գարու հորերի, լծի, խնոցու և կրիչ-ջրամանի և այլ պատկերներով թխվածքների ուռչելը ենթադրում էր, որ այդ տարի առատություն էր լինելու, իսկ կուչ գալու դեպքում՝ աղքատություն: Եթե դրանցից մեկը «կուտ էր գնում» (այսինքն՝ թոնրի մեջ էր ընկնում)՝ դա նշան էր, որ դրա տերը մահանալու կամ կորչելու է:

Կեսգիշերին երիտասարդները ցորեն, գարի ու խոտ վերցրած գնում էին գետի ափ և նստելով անհամբեր սպասում, թե երբ պիտի «գետը ոսկի վազե»: Երկար սպասելուց հետո, նրանցից ավագն ասում էր.

«Քեզի կուտամ ցորեն, գարի,

Դուն ա ինձի տու բարի,

Շնորհաւոր Նոր Տարի»:

Ցորենն ու գարին վերջում նետում էին գետը և միաժամանակ իրենց հետ տարած ամանը լցնում այդ «ոսկե ջրով»: Տուն վերադառնում էին վազելով և առանց ետ նայելու՝ կարծելով, թե սատանաներն իրենց հետապնդում են:

Առավոտյան՝ արշալույսին, տանտիրուհին ամենից շուտ էր զարթնում: «Տարի» հացի վրա նա մեղր էր քսում ու դնելով սալամանի մեջ, դուրս էր գալիս տնից և հայացքն ուղղելով դեպի արևելք՝ երեք անգամ կրկնում. **«Դեօվլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն»:** Հե-տո նորից մտնում էր ներս ու վրայի մեղրը բաժանում տանեցի-

ներին, որպեսզի եկող տարին միմյանց հետ շատ քաղցր ու անուշ անցկացնեն: Ավագ որդին իր բաժին մեղրն ուտելով երեք հատ «բաղաճ» (յուղով պատրաստված հաց) էր վերցնում և դրանք թրջելով գետում, մաս-մաս տալիս էր անասուններին, դրանով իսկ, շնորհավորում նրանց Նոր Տարին: Ապա հայրն ու մայրը նստում էին օջախի մոտ և որդիներն ու հարսները դարձյալ ավագության կարգով մոտենում ու համբուրելով նրանց ձեռքերը շնորհավորում էին Նոր Տարին: Տանտիկինը նորահարսին մի ուռուպիա (ոսկի) էր ընծայում, մյուսներին՝ մրգեր, քիսաներ և վասիլներ: Տեգրերը ևս նորահարսներին մրգեր և այլ ընծաներ էին մատուցում, իսկ ամուսինները, ավանդույթի համաձայն, իրենց կանանց **անձամբ** ոչինչ չէին նվիրում:

Գերդաստանների ավագները, նախ այցելում էին այն ազգականների տները, ուր անցած տարվա մեջ սուգ կամ մահացածություն էր եղել: Վերջիններիս մխիթարելուց հետո, նրանք օղի վերցրած գնում էին շնորհավորելու քահանայի Նոր Տարին, համբուրում նրա աջը՝ նրան հղելով հետևյալ մաղթանքը. **«Շնորհաւոր Նոր Տարի, ամէն տարի ուրախութեամբ աս օրս հասնինք»:** **«Քուկդ ա շնորհաւոր,- պատասխանում էր քահանան, բարով, խէրով շատ տարիներ աս օրս հասնինք. հրամմէ, վեր նստի»:** Այցելուները նստում էին ըստ ավագության կարգավիճակի, որոնց քահանան իր օղուց էր հյուրասիրում: Հյուրերը միմյանց պատվում էին նաև իրենց հետ բերած խմիչքներով: Այնուհետև վերադառնում էին տները և նախապատրաստվում՝ տանուտերին շնորհավորելու:

Նոր Տարվա հաջորդ օրը ջավախքցին **«բաղդ-փորձուկ»** էր ասում: Երիտասարդներն իրենց բախտը փորձելու նպատակով, նախօրոք պատրաստված «ղառուռի կլիկները» (կլոր, փոքրիկ հացեր էին) դնում էին տների կտուրներին և ուշադիր հետևում: Ազնավները, եթե կտցահարեն և այն որոշակի ուղղությամբ տանեն, ըստ այդմ էլ գուշակում էին՝ որտեղից է գալու բաղձալի փեսացուն կամ հարսնացուն:

Տարածված էր նաև ձիու ոտքերի վրա կանգնելու կամ փողոցում պատահական անցորդների առկայությամբ արված գուշակությունները, որոնց միջոցով փորձում էին կանխատեսել նոր տարվա ընթացքում տվյալ ընտանիքի կամ նրա անդամի ճակատագիրը: Նահապետը ձին կանգնեցնում էր գոմի մեջտեղը և տնեցիների հետ միասին ուշադիր հետևում, թե ձին ինքնուրույն ո՞ր ոտքը կբարձրացնի: Եթե աջն էր բարձրացնում՝ դա նշան էր, որ տարին հաջողությամբ կանցնի, իսկ եթե ձախը՝ ձախորդությամբ:

Չամշենահայերը յոթ տեսակի կերակուր էին եփում: Նրանց տոնական սեղանի պարտադրի ուտեստեղենից էին՝ լոբեան, լախտը (սիմինտորը), բոնջրով ապուրը, արնով ապուրը, պասուց ճաշը, քեստոնա դդումը, չիրը, դդումով խորոջը, պրասով հացը, բաղլօման (սաջի վրա եփած տափակ հաց), քարհացը (քարի մեջ էին եփում), փուռնիտը (կլոր, գնդաձև հաց էր) և այլն:

Նորնախիջևանցիները տարեհացը զարդարում էին ոչ միայն ընկույզով և չամիչով, այլև՝ զանազան նկարներով: Ծիսական այդ հացը սկզբնական շրջանում կտրում էին կաղանդի գիշերը, իսկ հետո՝ տնօրհներքին: Թխում էին նաև հայտնի խալաջը, որը կլոր կամ կիսալուսնաձև, մեջը ծակ հաց էր:

Թիֆլիսահայերը երկու տեսակի հաց էին թխում: Դրանցից մեկը կոչվում էր **չիք**, իսկ մյուսը՝ **էգ**: Վերջինս պահում էին այլուրի ամբարում, որպեսզի եկող տարին առատությամբ անցնի, իսկ չիքը զցում էին հոսող ջրի մեջ, որ բոլոր անհաջողությունները հին տարվա հետ միասին ջուրը տանի:

Չին երևանցիների¹⁴ Ամանորի սեղանները լի էին պասային ուտեստի ավանդական տեսականիով՝ աղանձ (ձավարով, կանեփով, քունջութով ու չամիչով համեմված), պասուց տոլմա (պատրաստում էին սիսեռով, ոսպով, լոբով և չամիչով), ձկնեղեն և այլն, քանի որ տոնը համընկնում էր շաբաթապահքի օրերին:

Այսպիսով, հայոց ավանդական կենցաղում ամանորյա ծիսաշարը, հմայական բնույթի հավատալիքների ու գուշակությունների իր ողջ համալիրով, կատարում էր անձնական, ընտանեկան և տնտեսական հաջողությունները խորհրդանշող ու ակնկալող գործառույթ:

Ստորև ներկայացնում ենք մարդկանց, ինչպես նաև կենդանիներին ուղղված ամանորյա երգ-խաղիկներից և մաղթանքներից առանձին օրինակներ, որոնք տարածված էին հայոց ներթնիկ խմբերի կենցաղում.

/ Լոռի - Չաղպատ /

Կըտեր հողը խնգան փոշի,

Էս տանը կայ էրկու լիզու,

¹⁴ **Չին** երևանցիներն օղի, և ընդհանրապես՝ ոգելից խմիչք քիչ էին գործածում: Բացառություն էին կազմում միայն հանդիսավոր օրերը, հյուրասիրությունները, տոնախմբությունները և մասնավորապես՝ Նոր Տարին: Օգտագործվող հիմնական խմիչքը **գինին** էր, որն ընպում էին շատ չափավոր: Ամանորին կամ հանդիսավոր այլ օրերին օղի խմում էին միայն առաջին փոքրիկ բաժակը, այնուհետև սեղանից այն հեռացվում էր և կենացները գինով էին շարունակում: Նույնիսկ այդ օրերին չափից ավելի խմելն ու հարբելը դատապարտվում էր հասարակության կողմից:

ծոծը վրէն ծալած ոսկի,
դուռը վրէն փերթ ըրեքնակ,
կտեր վրէն բոլոր լիսնիակ,
տան սները կերոններ,
ոսկէ կամար գերաններ:
Բարի ըրգուն ալէլուիա,
աշէն, հաշէն, էս տունը շէն,
սին ու գերան սողոմ քաշէն:
Տուն ալլողներ ջուխտ աղունակ,
ծեռնաւելը փունջ մանուշակ,
թորոնները խորաննի են,
հացթուխները խանում խաթուն,

/ Նոր նախիջևան (գյուղ) /

Կալանդոս, դոս, դոս,
ամէն տարի բարով հասնինք,
շնորհաւոր Նոր –տարի,
նոր *եանկայիս*¹⁵ տուն բերի,
շալէ շապիկ հագուցի,
քիրմէ գօտի կապեցի,
խալաջ տուէք:

Տոս, տոս՝ Կաղանտոս,
Կաղանտոսը էկիլ է,
դուռին տակը կայնիլ է,
շալի շապիկ հագիլ է,
շալի գօտիկ կապիլ է,

Բարի եկար, նոր տարի,
տուր մեզի ցորեն, գարի,

մինը բարի, մինը չարի,
չարինը ընդի, բարինը ըստի,
բարին վէր գայ ձեզ հետ նստի,
բարով թող գայ ձեզ նոր տարի,
մուրազներուդ չիմ կատարի,
ձէր տուն մտնու հազար բարի,
աճար, ցորեն, կորեկ, գարի,
լիքը հորեր շատ ունենաք,
կարմիր օրեր շատ ունենաք,
կարմիր օրով, կարմիր շորով,
ուրախ կենանք միշտ կուշտ փորով:

/ Նոր նախիջևան (քաղաք) /

Կալանդոս, դոս, դոս,
կալանդոսը՝ էկիլ է,
դուռին տակը կայնիլ է,
շալէ շապիկ հագիլ է,
կարմիր գօտի կապիլ է,
մէկ աւուճին խայիլ է:

/ Ղրիմ /

ոտքը չափռաստ տրիլ է,
գիտառը ձեռքը բռնիլ է,
գօնշի գօնշի կը խաղայ:
Շնորհաւոր նոր տարի,
աղէկութիւն տուն տարի,
ամէն տարի բարով հասնիք:

/ Բալու /

մեր օճախը փայտ կ՝ուզէ, լէ, լէ...
էգուն պաղչին պտուղ տուր, լէ, լէ.

¹⁵ *եղբոր կին*

Լէ, լէ, լէ, լէ, լէ,
մեր փեթակն ալիր կուզէ, լէ, լէ,
տանտիկինը եղ կ'ուզէ, լէ, լէ,
բուխերիկս մուխ կ'ուզէ, լէ, լէ..

/ Ակն /

Այսօր կաղ, առտուն Կաղօնտ է,
Տանտիկին, տանտիկին,
Ելի, գնա մարագն ի վար,
Կարճ բռնէ, երկայն կըյէ,
Կամըցուկ ուր մատիկդ չի կըյես,
Ով ուր տայ, շէն մընայ,
Ով ուր չի տայ, հաւուն տոտոզիկը չորնայ:

/ Վան /

Շնորհաւոր տօն ու տարին,
Նոր Կաղանդն եւ իւր բարին,
Պատ վեր խըման, խիմ վեր քարին,
Վէմ քարն ի Պօղոս Պետրոս,
Բանլիս տուեց Փրկիչ Յիսուս:
Տունը շէն, շէն շինական,
Իւղն ու բըլիթ նըստան կերան:
Բասիլիոս անուն բարի,
Որ ազատեց խէն քրիստոնէն,

/ Մուշ /

Կախընդող, տող ու տող,
Կայներ եմ տանքի պօլօզ (ծայրը),
Հատ մը թալիք կախընդող,
Մամին թռուց գիմ քօլօզ:

մեր աղջիկին փեսայ տուր, լէ, լէ...
մեր տղային հարս մը տուր, լէ, լէ...
հիւընտութիւն թող չըլլի, լէ, լէ
հէյրան Նոր տարի:

/ Կարին /

Ահա եկաւ Նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի,
Մամր տղաք ենք ուրախ,
Ունինք կաղին, կոզինախ:

Տարին էն տարին, օրն էն օրէն
Ձեր տունը շէն հետ արեւուն,
Արեւն էրկըներ ձեր տըղէքներուն,
Չարը զատաներ, բարին մօտենէր:
Օղորմի աղին, ծառ տընկողին,
Լէզկայ ռես Բաղտոյին,
Գըզիր Խաչոյին, տան ճեռչին:
Ուտենք, խըմենք անոյշ գինին,
Ասենք օղորմին, ողջութեն Հայոց ազգին:

/ Քղի /

Կաղնտոսը՝ տոս,
Էլէք տուէք երկու կոկոզ.
Վով օր չտուեց՝
իրանց հաւուն ճիվը կը կոտրեմ.
Էկէր հաւ չունին՝
ճժուն ճիվը կը կոտրեմ.

/ Բաբերդ / Կաղնտոսը՝ տոս:

Աւետիս, աւետիս, աւետիս.

հայ, եկել է, եկել է.

ով եկել է.- գայլն եկել է.

կարմիր կովէն իւղ կ`ուզէ

կուտուզ հաւէն հաւկիթ կ`ուզէ.

աւետիս, աւետիս, աւետիս:

Աւետիս, աւետիս, աւետիս

/ Խարբերդ /

Ալէլուիա, ալէլուիա,

հինը գնաց, նորը կու գայ,

հինը ուրախ ճանապարհէք,

նորի համար պատրաստեցէք,

դուռ, լուսամուտ բացէք,

ինչ որ կամիք խնդրեցէք,

/ Սերաստիա /

Նէնէներ, մամաներ,

կալնտօս (Կաղանդոց) տուէք,

տարին օրիկ մըն է,

աւետիս իւղէն կռէ (կտրէ),

մեղրէն կռէ, տանտիկին,

աւետիս, սերէն բռնէ,

մեղրէն կռէ, տանտիկին...

քիչ մ`ալ իւղ հետդ բերես, տանտիկին,

աւետիս, սախըն մատդ ալ

հետը չկռես, տանտիկին

Թէ կեանք, թէ խելք, թէ մալ,

ամէնքիդ մուրազն ալ

կու տայ, միամիտ եղէք:

Աղաներ եւ խաթուններ,

ծեզ շնորհաւոր Նոր տարի,

ապրիք շատ ու շատ տարի:

Ամէն տարի բարով հասնիք աս օրերս:

Դուք ալ ապրիք, մեծնաք, եավրուներս,

Աստուած շնորք եւ իմաստութիւուն տայ:

Ճու ճու ճու ձագուկներ - իմ սիրելի վառեկներ,

մոտ եկէք տամ ձեզ հատիկ - որ տաք ինձի շատ հաւկիթ,

ճու ճու ճու ճու թռչնիկներ - կարմիր ճերմակ հաւուկներ.

եկէք կաղնտեն ձեզ ալ - տամ ձեզ հատիկ, ջուր զուլալ:

Եկէք սիրուն բուշիկներ (հորթ) - սիրամ (մութ-կարմիր) ու կարմիր գոյներով.

ձեզի ալ տամ հատիկ, կեր - որ կաղընդչէք եմ բերեր:

Դուք ալ ապրիք տարիներ - ձեր սիրական զաւակով.

համբուրեն ձեր ճակատներ - սիւսլիւ պուռմա կոտոշներ:

16



17



18



¹⁶ Ամանորյա ծիսական գաթաներ՝ «վասիլներ». 20-րդ դ. վերջ / լուսանկարը՝ Ս. Սեպետյանի /

¹⁷ Տարեհացը «բախտագուշակ դրամով». 20-րդ դ. վերջ / լուսանկարը՝ Ս.Սեպետյանի /

¹⁸ ՆՈՐ ՏԱՐԻ, Երևան, 1955թ. Մայրաքաղաքի գլխավոր տոնածառի մոտ.



*Նոր Տարին
ընտանիքների*


յուրաքանչյուր մարդու իղծերի իրականացման տարի: Հիվանդություններն ու խռովությունները թող մնան անցյալում և բոլորն այսուհետ ապրեն հաշտ, խաղաղ ու երջանիկ:

*թող լինի
բարգավաճման,*

¹⁹ ՆՈՐ ՏԱՐԻ, Երևան, 2000թ. Փոքրիկ Կորյունը Ձմեռ Պապի և Ձյունանուշի հետ, մայրաքաղաքի գլխավոր տոնածառի մոտ

2. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ ԵՎ ՍԿՐՏՈՒԹՅՈՒՆ (ՋՐՕՐՅՆԵՔ)

20



Քրիստոսի Ծնունդը և Սկրտությունը խորհրդանշող տաղավարային այս տոնը հայոց մոտ նշվում է հունվարի 6-ին²¹:

Սակայն ծագումնաբանական հենքով և ավանդական կենցաղային դրսևորումներով այս տոնը որոշակի աղերսներ ունի հեթանոսական հնագույն ժամանակաշրջանի հետ՝ հանձինս այնպիսի հին աստվածների պաշտամունքի, ինչպիսիք էին՝ եգիպտական Օսիրիսը, հունական Դիոնիսոսը, հռոմեական ու իրանական Միթրան²², հայկական Միհրը և այլն, որոնց նվիրված տոներն արտացոլել են բնության վերակենդանացումը, վերածնության խորհուրդը:

²⁰ Քրիստոսի Ծնունդը

²¹ Մինչև մ.թ. 4-րդ դ. քրիստոնեական բոլոր եկեղեցիները Քրիստոսի Ծնունդը նշում էին միասնաբար՝ հունվարի 6-ին: Սակայն Լատին եկեղեցու նախաձեռնությամբ հետագայում որոշակի փոփոխություն մտցվեց՝ կապված տոնական ժամկետի հետ: Քաղկեդոնի ժողովի (մ.թ. 451թ.) որոշմամբ արևմտյան եկեղեցիները Քրիստոսի Ծնունդը սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին, իսկ Սկրտությունը՝ հունվարի 6-ին: Հայ Առաքելական եկեղեցին հավատարիմ մնաց այդ տոնի հնավանդ ժամկետին: Կաթոլիկների օրինակին հետևեցին նաև ուղղափառ քրիստոնյաները: Ռուս-ուղղափառ եկեղեցին առ այսօր Քրիստոսի Ծնունդը հունվարի 7-ին է նշում, իսկ Սկրտությունը՝ հունվարի 19-ին, որը կապված էր տոմարային (Հուլյան և Գրիգորյան) տարբերությունների հետ, քանի որ ուղղափառ եկեղեցին չընդունելով Գրիգորյան տոմարը, պահպանեց հինը՝ Հուլյանը: Դրանով էլ պայմանավորված է այդ տոնի ժամկետային առանձնահատկությունը (դեկտեմբերի 25 + 13 օր = հունվարի 7 և հունվարի 7 + 13 օր = հունվարի 19):

²² Արևելքում, Եվրոպայում, մասնավորապես Հին Հռոմում, դեկտեմբերի 25-ին նշվում էր Միթրայի ծննդյան օրը, որը հեթանոսական ամենագորեղ և սիրված աստվածներից էր: Նա լուսի, կրակի և արևի աստվածն է, նրան էին նվիրված սաթուրնական տոները: Պատահական չէ, որ Քաղկեդոնի ժողովի որոշմամբ դեկտեմբերի 25-ը սահմանվեց Հիսուսի Ծննդյան օր՝ որպես ճշմարիտ և արդար արևի տոն. նպատակն էր՝ մոռացության տալ Միթրայի պաշտամունքը: Դրանից բացի, դեկտեմբերի 25-ը ձմեռային արևադարձի օրն է: Այդ օրվանից ցերեկվա տևողությունը սկսում է երկարել, արևը դեպի գարուն է թեքվում: Ըստ առասպելական գրույցների՝ արևադարձային այդ շրջապտույտը համընկնում է գարնան գարթոնքը հովանավորող հեթանոսական աստվածների (օրինակ Միթրա, Ագնի և այլն) ծննդյան օրերի հետ: Սրա հիմքում ընկած է մեռող-հառնողի առասպելաբանական գաղափարը: Ահա թե ինչու էին՝ հեթանոսական գլխավոր աստվածների գերակշիռ մասը ծնվել ձմեռային արևադարձի օրը:

Հայ իրականության մեջ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին, տեղական մասնակի բնույթի առանձնահատկություններով հանդերձ, այս տոնն ուներ ընդհանրական կառուցվածք: Տոնը սկսվում էր Ծննդյան ճրագալույսին (կամ՝ ճրագալոյց), որը հայտնի էր նաև «թաթախման գիշեր» (կամ երեկո) և «խթման գիշեր» (կամ՝ «խթման երեկո») անուններով: Եկեղեցիներում՝ երեկոյան, սուրբ Պատարագ էր մատուցվում, որի ժամանակ բազում հավատացյալներ ստանում էին սուրբ հաղորդության խորհուրդը: Կատարվում էր նաև գլխավոր իրադարձությունը՝ պասը լուծելու կամ «թաթախվելու» ծեսը: Յուրաքանչյուրը շտապում էր իր բաժին նշխարքը վերցնել ու տուն վերադառնալ՝ ընտանյոք հանդերձ ընթրելու, որը խորհրդանշում էր պասի ավարտը: Շատ տեղերում ընթրում էին եկեղեցուց բերված վառած մոմերի լույսի տակ, որոնց քանակը համապատասխանում էր ընտանիքի անդամների թվին: Ծիսական ուտեստի այդ համալիրում գերակայողը տարբեր տեսակի փլավներն էին, ձկնեղենն ու ապուրները: Բանջարեղենը, սպանախը, ձուն, պասուց տոլման ևս տոնական ուտեստի գլխավոր բաղադրիչներն էին, իսկ հիմնական խմիչքը՝ գինին էր:

Հին երևանցիներն այդ տոնի (որը հայտնի էր Ջրոխնեք, Պզտիկ կամ Փոքր Ջատիկ անուններով) կապակցությամբ անպատճառ պիտի եփեին բրնձով փլավ: Փլավը պատրաստում էին նաև կողակով և չամիչով համեմված:

Բավական տարածված էր «Մայրամա ճաշ», «Մայրամա բանջար» կամ «Մայրամի ծամեր» անունը կրող ապուրը, որը պատրաստում էին նախօրոք չորացրած բանջարեղենով և սիսեռով: Մշեցիները համոզված էին, որ այդ բանջարը ժամանակին Աստվածամայրն է քաղել և հավատում էին դրա բուժիչ ու զորեղ հատկությանը: Հավատում էին նաև, որ այդ բանջարից եթե քսեին աղջիկների գոգին, ապա նրանք ավելորդ մազեր չէին ունենա:

Խթումին միանշանակ արգելվում էր մսեղեն կերակուրի ճաշակումը, քանի որ դեռևս պաս էր: Մինչ այդ էլ Ծննդյան պասի շրջանն էր, որը պահում էին գրեթե բոլորը և մասնավորապես՝ կանայք:

Ճրագալույսին այցելում էին եկեղեցիներ, ուր հիմնականում մոմեր էին վառում և աղոթում: Տոնի նախորդ օրը, մեծ ու փոքր, լողանում էին և տները հիմնովին մաքրում, իսկ հաջորդ առավոտյան, հարսներն ու դուստրերը՝ մայրերի ուղեկցությամբ դարձյալ գնում էին եկեղեցի:

Տանտիրուհիները հատուկ բաղարջ հաց էին թխում, որի մեջ սովորաբար դրամ էին դնում: Ճրագալույսին ծիսական այդ հացը հավասարաչափ կտրում էին՝ ըստ

ընտանիքի անդամների թվաքանակի: Սովորույթի համաձայն, երբեմն բաժին էին հանում նաև հյուրերի և ընտանի կենդանիների համար: Այնուհետև, զգուշավորությամբ և հետաքրքրությամբ, յուրաքանչյուրը ճաշակում էր իրեն հասած բաղարջի կտորը, մինչև որ մեկն ուրախությամբ հայտնում էր իր մասից դրամի դուրս գալու մասին լուրը: Հավատում էին, որ այդ տարվա ընթացքում հաջողությունը նրան է մշտապես ուղեկցելու:

Հոգևորականները մեծ քանակությամբ նշխարք էին պատրաստում և այն ոչ միայն անձամբ, այլև երիտասարդների օգնությամբ բաժանում իրենց ծխի անդամների: Նրանք օրհնում էին ծխի բոլոր տները, իսկ բաժանված նշխարքի դիմաց ժողովուրդը միշտ վարձահատույց էր լինում (սովորաբար՝ ձու, ընկույզ կամ դրամ էին տալիս):

Հունվարի 6-ի առավոտյան դարձյալ այցելում էին նախ՝ եկեղեցիներ, այնուհետև՝ մերձավորների տները և շնորհավորում միմյանց տոնը, որը կենցաղում առավելապես հայտնի էր «**Փոքր Ձատիկ**» անունով:

Խթունի երեկոն մխիթարանքի օր էր այն ընտանիքների համար, ուր նոր մահացության դեպքեր էին եղել (այդ ժամկետը սովորաբար հաշվարկվում էր՝ սկսված Մեծ Ձատիկից կամ Քրիստոսի Հարության տոնից): Բարեկամները հատուկ ընծաներով գնում էին՝ մխիթարելու սգավոր ազգականներին, որոնց գոտի, չուխա (տան գլխավորի համար) և գլխաշոր (տանտիրուհու և մյուս կանանց համար) էին նվիրում: Այդ այցելուները հիմնականում տարեց տղամարդիկ և կանայք էին:

Հավատում էին, որ ճրագալույսի գիշերը բոլոր ջրերը մի քանի բոպե կանգ էին առնում և, եթե այդ պահին մի որևէ իր դնեն ջրերի մեջ, այն իսկույն ոսկի կամ արծաթ կդառնա, իսկ եթե քար դնեն, վերջինս ամեն տեսակի հիվանդություն բուժելու շնորհ կստանա: Հավատում էին, որ այդ գիշեր ջրերի հետ միասին կանգ էին առնում բոլոր առարկաները, ինչպես նաև խոտը, ծառը, քամին և օդը, որոնք այդ սրբազան ջրերում ոսկու էին վերածվում: Այդ խորը հավատքով չբեր կանայք հաղորդակցվում (սովորաբար՝ երեք անգամ) էին սրբազան ջրերի հետ՝ երեխաներ ունենալու ակնկալիքով:

Բասենցիները համոզված էին, որ Ծննդյան, ինչպես նաև Ձատիկ տոների խթան կամ թաթախման երեկոյան ծնված երեխաները (անկախ սեռից) կունենան եղունգի միջոցով գուշակելու շնորհ, եթե այդ պահին նրանց եղունգներին քսեն նոր մորթած սև հավի արյուն:

Ճրագալույսի հաջորդ օրը նշվում էր Ջրօրհների արարողությունը, որը Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող գլխավոր ծեսն էր: Հանդիսավոր թափորը, սովորաբար, հավաքվում էր գետերի մոտ, որտեղ կատարվում էր խաչը ջուրը զցելու արարողությունը: Այդ ծեսը նշվում էր նաև եկեղեցիներում, ուր սեղանների վրա սրբազան ջրով լիքը կաթսաներ էին դնում: Խաչի քավորի թեկնածուն, որը պատվավոր տիտղոս էր հայոց ավանդական հասարակարգում, նախապես պարտավոր էր եկեղեցու օգտին դրամով կամ բնամթերքով հատուկ նվիրատվություն կատարել: Այդ արարողությունից հետո նա իր տանը մեծ խնջույք էր կազմակերպում՝ հրավիրելով քահանային, մերձավորներին և համայնքի պատվավոր այլ անձանց:

Օրհնված ջուրը լցնում էին հատուկ շշերի կամ ամանների մեջ և տանելով տուն՝ քսում հիվանդների երեսներին ու հատկապես վերքերին՝ այն հավատով, որ կկանխվեն և կվերացվեն բոլոր հիվանդությունները: Սրբազան այդ ջրով լվանում էին նաև պղծված ամանները (որոնց շներ, մկներ կամ այլ կենդանիներ էին կպել), որի համար օգտագործում էին նաև հունցած խմորից նախօրոք պատրաստած բլիթները: Ղազախում, Ջրօրհների արարողության ժամանակ, երբ քահանան սուրբ մեռոնը կաթեցնում էր ջրի մեջ, բոլոր ներկաները շատ արագ աշխատում էին ամաններով այդ ջրից վերցնել: Տանելով տուն, այն լցնում էին թխմորի (խաչի), ալյուրի ամանի կամ խմորի տաշտի մեջ: Մնացածը շաղախելով մոխրի հետ, գնդիկների ձևով պահում էին, որպեսզի հարկ եղած ժամանակ դրանով սրբագործեն կամ մաքրեն պղծված կամ հարամված ամանները:

Ջրօրհներին կազմակերպվում էին նաև ձիախաղեր և մականախաղեր, որոնք էլ ավելի էին շիկացնում տոնական գեղեցիկ մթնոլորտը: Խաչը ջուրը զցելու ժամանակ երիտասարդները, որոնք մինչ այդ իրենց շնորքն արդեն ցույց էին տվել ձիարշավների ընթացքում, ձիերով մտնելով գետը ու փակելով խաչի ճանապարհը, նվերներ էին պահանջում հարուստներից, մասնավորապես՝ խաչի քավորից:

Ճրագալույսի ժամերգությունից հետո երեխաները՝ խմբեր կազմած, շրջում էին տները և «ավետիսներ» երգում ու որպես վարձահատույց ստանում նվերներ: Պատանիներն իրենց շնորհավորական մաղթանքները կատարում էին որոշակիորեն սահմանված կարգով: Նրանցից մեկը կամ երկուսը ներս էր մտնում տուն, իսկ մյուսները՝ բարձրանալով տանիքի վրա, երդիկի անցքից նվերներ ստանալու ակնկալիքով, թուրով կամ գոտիներով իջեցնում էին հատուկ տոպրակներ (Ղազախ,

Աշտարակ), գուլպաներ (Շարուր) կամ մեջը վառ ճրագներ դրված քթոցներ (Խաչիկ) և կատարում հետևյալ երգերը.

/ Աշտարակ և շրջակա գյուղեր /

| | |
|----------------------------|--|
| Ալելուեա, ալելուեա | Յրէս եկաւ մի ձիաւոր, |
| Եւ ցնծացէք, ուրախացէք, | Լախտը ձեռին բոզ ձիաւոր, |
| Մեր Մարիամի պասը բացէք, | Աջու ձեռին աւետարան, |
| Մարիամ գնաց լեռն ի ծնունդ, | Չախու ձեռին սաղմոսարան, |
| Ծննդեցաւ, ազատուեցաւ, | Չիմի, չիմի, ձեր տղեքանց անունն ինչ ա. |

Տանտիկիները կախված տոպրակների, գուլպաների և քթոցների մեջ, որպես նվերներ, տեղադրում էին զանազան մրգեղեն, չրեղեն, քաղցրեղեն, փլավ և այլն: Ջվարճության համար երբեմն դնում էին նաև կատուներ: Տանեցիներից մեկը, երբ հայտնում էր գերդաստանի ամենափոքրիկի անունը, երդիկից երգը շարունակվում էր հետևյալ բովանդակությամբ.

«Արուսեակին» ու «Արամայիսին» բաղդը հանենք,

Աջու ձեռը ջէքը տանենք,

Դուշմանի աչքը հանի,

Տասը շահին չարը տանի:

Տավուշ-

/

Ղազախ /

Իրար իդուս գեանդիչ անին

Ալելուեա, ալելուեա
Աշէն, աշէն էս տնաշէն
Սեղան քաշէն էս տնաշէն,
Հրէս իրի մի ձիաւոր,
Լախտը ձեռին բօզ ձիաւոր,
Աջու ձեռին աւետարան,
Չախու ձեռին սաղմոսարան,
Ըստով գրեց, ընդով ջնջեց,
Քոռն ու քաչալ սըղըցրեց:
Աւագ մոնթին կաշառքեցին,
Դբա Մարիամ ուղարկեցին.
Մարիամն իրի լալով, լալով.
Լալ մի, լալ մի ճըճկեօհալով.
Որ ոտ փոխէր արքն հաղէր,
Հրէս իրի իրիցընին,

/ Շարուր Ուլնիա-

Ակլը մարեն, մարեն, մարեն.
Ձեր տղայի սօլը կարեն,
Փշատ տուէք փորս լարեն,

/ Վայոց Ձոր -

Յնծացէք, ուրախացէք, ալելուիա,
Մեր Մարիամի պասը բացէք, ալելուիա,
Մարիամ գնաց դուռ տաճարին,
ալելուիա.
Մէջքն տուեց խաչափայտին, ալելուիա,
Հնչեց բերեց Յիսուս որդին, ալելուիա,
Յրանիք (երանի) քէ, Հոռոմսիմա,
ալելուիա,
Որ Քրիստոսին տատմէր ըլար,
ալելուիա,
Յրանիք քէ, բուրթ խանձերուն,

Կաթնաղբիւր փըլըքցըրին
Օրինել Աստուած կեարուն քացաւ
Ջուխտ օրօրոց օրօրուեցաւ,
Տընըշէն, տընըշէն, ձեր փստըկի
անունն ինչ ա:

«Գուրգէն» ու «Տիգրան»
Հօրը տայ, մօրը տայ,
Ծաղկեն ծլեն,
Ձեռը ջիբը տանեն,
Չալ աբասին հանեն,
Չարը տանի մի թունգի գինի
Մի գթալ եղ, երկու ձու,
Երկու ձուկը մի ջամ ալիր,
Ով որ էսքան ասածս չ'տայ,
Կաղ գէլը մօրը տանի:

Նորաշէն /

Չամիչ տուէք ատմըներս շարեն,
Ըղգեօզ տուէք գլուխ կօռեն,
Աստուած ձեր խարսնը փեսան պախի:

Խաչիկ /

Յրանիք քէ, սուրբ Յոհաննէս, ալելուիա,
Քրիստոսին քաւոր էլար, ալելուիա,
Յրանիք քէ, բարձր օրօրոց, ալելուիա
Քրիստոսին միջին օրօրին, ալելուիա.
Ձեր տղի անունն ինչ ա.
«Ռուբէն» ու «Պարոյր» ճուրթեր
ճութացաւ, ալելուիա,
Քանց բարդի ծառ, էրկենացաւ,
ալելուիա,
Գիւղքեր գցեց քաղքէ քաղաք,
ալելուիա,

ալեւուհա, Ամէն ճղքին ջուղտն ճրագ, ալեւուհա
Քրիստոս միջին փաթաթին, ալեւուհա, Մեր փայլ տուէք ինչ կամենաք:
Յրանիք քէ, գետ Յորդանան, ալեւուհա,
Քրիստոս միջին մկրտին, ալեւուհա,

Տավուշի Սևքար գյուղում վերը նշված երգի-մաղթանքին ավելացնում էին հետևյալը.

**Պէնպէնակ,
Ասծու հալակ ծտենակ,
Ընկերս ընկաւ ծովը,
Ծովը դառաւ ծիրանի,
Մազէն իրի կըռըկտուց,
Հաւը թռցրուց,
Ջուխտը ո... պրցրուց:**

Հաջորդ օրը (հունվարի 7) Ծննդյան տոնի մեռելոցն էր, որի ժամանակ մարդիկ՝ իրենց հետ վերցնելով ծիսական ուտեստի, մասնավորապես, թխվածքի որոշակի պաշար, այցելում ու օրհնել էին տալիս մերձավորների գերեզմանները:

Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրհնանքը թող լինի բնության, ամեն մի ծիլ ու ծաղկի և յուրաքանչյուր նորածնի վրա: Մարդիկ, իրենց ազնիվ և արդար գործերով, թող արժանան Աստվածային Ծննդի խորհրդին:

3. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

23



24



Ըստ հայոց եկեղեցական տոնացույցի, Սուրբ Սարգսին նվիրված տոնը նշվում է Քրիստոսի Հարությունից կամ Մեծ Ձատկից 63 օր առաջ, շաբաթ օրը: Այն ունի 35 օրվա շարժականություն և կատարվում է **հունվարի 18 - փետրվարի 23** ժամկետային ընթացքում:

Հայոց քրիստոնեական ծիսահամալիրում պատվավոր տեղ գտած Ս. Սարգսի տոնն իր ծագմամբ շատ ավելի հին է: Կենցաղում Ս. Սարգսի²⁵ և Առաջավորաց պասի հետ առնչվող ծեսերի, սովորույթների ու ավանդույթների համեմատական վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այն եղել է գարնան պաշտամունքի հայկական մարմնավորում՝ շարունակելով քրիստոնեական սրբի կերպարի տակ պահպանել Արա Գեղեցիկի հուշը: Վերջինս՝ բնության զարթոնքի համատեքստում մասնավորապես արտահայտել է նաև երիտասարդության, սիրո, երջանկության և ընտանիքի հետ առնչվող խորհուրդներ:

Ըստ ավանդության, Ս. Սարգիսը քաջ և ազնիվ զորավար էր, որը միշտ օգնում էր խեղճերին ու անմեղներին՝ միաժամանակ պատժելով չար մարդկանց: Նրա ձիու ոտքերի դրոփյունից դղրդում էր ողջ աշխարհը, իսկ նիզակը խաղացնելիս՝ բուք ու բորան էր բարձրանում: Ս. Սարգսի մասին ամենից շատ տարածված ավանդագրույցների հիմնական սյուժեն, նրա կողմից պասը պահողների գովաբանությունն էր և պատիժը՝ այն չպահողներին: Սրբի հետ կապված և կենցաղում բավական տարածված ավանդություններից է նաև հունադավանների դեմ նրա մղած կռիվ-

²³ Սուրբ Սարգիսը որդու՝ Մարտիրոսի հետ / նկ. Յ. Հովնաթանյանի/

²⁴ Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցին. 5-րդ դ. / լուսանկարը՝ Դ. Առաքելյանի /

²⁵ Հայոց ավանդական կենցաղում շատ տարածված էր՝ «Սըփ Սարքիս» անվանաձևը

ների գովերգումը, որի հաղթանակները պայմանավորված են Տիրոջ նկատմամբ Սուրբ Սարգսի մեծ հավատքով և նվիրվածությամբ:

Ձանգվածային ուխտագնացություններ էին կազմակերպվում Ս. Սարգսին նվիրված սրբավայրերում, որոնց թիվը բավական շատ էր հայոց աշխարհում: Սրբի հիշատակի համար մոմեր էին վառում, աղոթքներ անում և կենդանիներ զոհաբերում: Ս. Սարգսի ուխտից վերադարձողը ճանապարհին որևէ մեկին հանդիպելիս, ասում էր. «**Խաչը քեզ ողջույն դարկե**», իսկ պատասխանը լինում էր՝ «**Ողջ մնաս**» բարեմաղթանքը:

Եկեղեցիներում ամենուր սուրբ պատարագ էր մատուցվում, որի նախաձեռնությունը շատ հաճախ իր վրա էր վերցնում որևէ գերդաստան: Վերջինս, հին ու նոր հանգուցյալների հոգիների փրկության նպատակով, հոգեհաց էր կազմակերպում և հրավիրում ողջ համայնքին, մասնավորապես՝ տարեց անձանց:

Տոնի նվիրական ուտեստը փոխինդն ու խաշիլն էր, որոնց գործածությունը նախընթաց հինգ օրերի ընթացքում արգելվում էր: Շիրակում, Վաղարշապատում, Վայոց Ձորում, Տավուշում և այլուր պասի ուրբաթ երեկոյան էին փոխինդը պատրաստում և դրանով իսկ՝ պասը լուծում կամ թաթախվում: Այդ փոխինդը կամ փոխինձը պատրաստում էին բոված և երկանքով աղացած ցորենի ալյուրով:

Առաջավորաց պասը եզակի պահքերից էր, որն ուներ իր ծիսական ուտեստը և պատահական չի, որ կենցաղում այդ պասը հաճախ հայտնի էր նաև «**խաշիլի պաս**» անունով: Առաջավորաց պասը սկսվում էր Ս. Սարգսի տոնին նախորդող երկուշաբթի օրվանից: Այդ հինգ օրերի ընթացքում գրեթե բոլորը պաս էին պահում: Երիտասարդության մեծ մասը միաժամանակ **անսվաղ**²⁶ և **միաժում**²⁷ ծոմ էր պահում:

Ամենատարածված ավանդազրույցը դարձյալ կառուցված է ծիսական գլխավոր ուտեստի շուրջը: Ուրբաթ երեկոյան, տանտիրուհիները (հատկապես՝ տարեցները), վերցնում էին սկուտեղը, վրան մանր մաղով փոխինդ շարմաղում, մոմեր կամ կանթեղ վառում ու դնում դռան ետևը կամ դուռը բաց տան մեջ (Շիրակ), աստղերի տակ (Աշտարակ), շատ տեղերում՝ նաև եկեղեցու մոտ, հուսալով, որ Ս. Սարգսի կայցելի և իր ձիու պայտի հետքը կթողնի փոխինդի վրա: Մեծ երջանկություն էր, երբ նրանք առավոտյան ուշադիր ստուգում ու «գտնում» էին պայտի հետքը փոխինդի վրա և ըստ այդմ գուշակում՝ «դրախտին արժանի լինելու» վերաբերյալ:

²⁶ **Անսվաղ ծոմ**. պասի ընթացքում ջրից բացի ոչինչ չօգտագործելը կամ չընդունելը:

²⁷ **Միաժում ծոմ**. օրը միայն մեկ անգամ ուտելը՝ երեկոյան ժամերգությունից հետո:

Ս. Սարգսի նվիրական ուսուստի հետ կապված ավանդազրույցներից է նաև հունադավանների դեմ կռվելու ընթացքում զորավարի գրպանում եղած օրապահիկ աղանձը՝ փոխինդի վերածվելու պատմությունը, որի ճաշակման միջոցով է միայն քաջը կարողացել հագեցնել երկարատև քաղցը:

Տոնն առանձնանում է երիտասարդության, մասնավորապես՝ արբունքի հասած աղջիկների ու պատանիների բախտագուշակության ծեսերով: Ս. Սարգսի տոնի նախորդ օրը՝ ուրբաթ երեկոյան, երիտասարդներն աղի բլիթներ էին ճաշակում՝ գիշերը երազ տեսնելու ակնկալությամբ: Հավատում էին, որ այդ գիշեր՝ երազում ծարավը հագեցնելու նպատակով իրեն ջուր տվողն անպայման կլինի կյանքի ընկերը: Հին Երևանում, վերոհիշյալ ակնկալիքով, երիտասարդ աղջիկը կամ տղան քնելուց առաջ շոռաբլիթ էին ուտում:

Նմանատիպ սովորույթով՝ երիտասարդները փորձում էին գուշակել սպասվող ճակատագրի կամ բախտի մատուցած անակնկալները: Եթե երազում մատուցված ջրի բաժակը ոսկուց էր լինում, ասում էին, որ ապագա ամուսինը շատ հարուստ է լինելու, եթե արծաթից էր՝ միջին ունեցվածքի տեր, իսկ եթե պղնձից կամ կավից էր՝ աղքատ: Ջրի քանակությամբ ևս փորձում էին գուշակել ապագա փեսացուի կամ հարսնացուի հետ ապրելու տարիների տևողությունը: Եթե, բաժակը ջրով լիքն էր՝ շատ երկար կապրեն, եթե կիսատ էր՝ կյանքի կեսը, իսկ եթե շատ քիչ էր՝ ընդամենը մի քանի տարի:

Տարածված էին նաև երիտասարդության ճակատագիրը որոշելու հետ կապված այլ հավատալիքներ: Վաղ առավոտյան պատանիներն ու աղջիկները բարձրանում էին երդիկների վրա, լավաշի մեջ փաթաթված խաշիլի կամ հացի կտորներ դնում այնտեղ կամ դեզերի վրա և ուշադիր հետևում: Թռչունները դրանք որ ուղղությամբ տանեն, ըստ այդմ որոշում էին, թե որ կողմից է գալու ապագա փեսացուն կամ հարսնացուն: Եթե հացի փշրանքը տեղում էին կտցահարում, դա նշան էր, որ այդ տղան կամ աղջիկն ընդհանրապես չեն ամուսնանալու:

Այդ շաբաթվա ընթացքում մարդիկ ծանր գործեր չէին անում, ոչ ճախարակ էին մանում, ոչ բուրդ գզում և ոչ էլ լվացք անում: Կանայք, նամանավանդ՝ աղջիկները գլուխները չէին լվանում, որպեսզի **«Սարգսի ձին չսայթաքեր օճառաջրի վրա»:**

Երեխաները բարձրանում էին երդիկների վրա և երգերի ուղեկցությամբ այնտեղից գուլպաներ կամ քսակներ իջեցնում՝ նվերներ ստանալու ակնկալիքով,

որը գրեթե միշտ իրականանում էր: Տանտիկինները սովորաբար դրանց մեջ դնում էին ծիսական կերակուրներ և մի քանի մանրադրամ:

Ս. Սարգսի տոնական ավանդույթներից է նաև նրա անունը կրողների նկատմամբ, մտերիմների կողմից ցուցաբերած որոշակի վերաբերմունքի դրսևորումները՝ կապված անվանակոչության հետ. նվերներ մատուցելը, հատուկ հյուրասիրություն կազմակերպելը, այդ օրը ծնվածներին նրա անունով կոչելը: Նման ավանդույթները տարածված էին և այժմ էլ առկա են հայոց կենցաղում:


Ս. Սարգսի տոնից սկսած մինչև Բուն Բարեկենդանն ընկած ժամանակահատվածը համարվում էր հարսանյաց արարողությունների մեծ շրջան:

Հայոց մեջ մեծ ժողովրդականություն ունեցող Ս. Սարգսի տոնը, 20-րդ դ. կեսերին, կենցաղում ընդհանուր առմամբ անկում էր ապրել, չնայած դրա առանձին տարրերի մասնակի պահպանվածությանը: Խոսքն ամենից առաջ վերաբերում է կենցաղում դրա ամենատարածված բաղադրիչին՝ երիտասարդության բախտագուշակման ծեսին, որն ընդհուպ վերջերս հանդես է գալիս որպես այդ տոնի զուգահեռ կամ հոմանիշ անվանում՝ «աղի բլիթի տոն» ձևակերպմամբ:

Սուրբ Սարգիսը թող բոլոր սիրահարների և անպաշտպանների պահապանն ու աջակիցը լինի: Նրա օգնությամբ ու օրհնությամբ թող կրկին միանան պատեհապաշտ ճակատագրով բաժանված և հուսալքված սրտերն ու հոգիները:

4. ՏԵԱՌՆՆԴԱՌԱՋ – ՏՐՆՆԴԵՋ

28



29



Տեառննդառաջը Հայ Առաքելական Եկեղեցու տերունական, անշարժ տոներից է, որը նշվում է փետրվարի 14-ին, Սուրբ Ծննդից քառասուն օր հետո: Տոնի Տեառննդառաջ անունը ստուգաբանվում է քրիստոնեական ավանդությանը: Համաձայն հրեաների ընդունած օրենքի՝ ծննդաբերած կինը քառասուն օրական զավակին պիտի տաներ տաճար, Աստծուն նվեր մատուցեր և աղոթեր: Մարիամը քառասուն օրական Հիսուս մանուկին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով արդար ու բարեպաշտ ծերունին, որն Աստուծոց խնդրում էր իր կյանքը երկարացնել այնքան, մինչև տեսնի աշխարհի ու մարդկության Փրկչին: Նա հրաշքով զգում է Փրկչի ներկայությունը և **ընդառաջ է ելնում** Հիսուս մանուկին (այստեղից էլ՝ «**Ելանել ընդ առաջ Տեառն**» արտահայտությունն է):

Տեառննդառաջը հայոց կենցաղում հայտնի է տարբեր անվանումներով՝ *Տերընդեճ, Տրընդեճ, Տերընտաս, Տանդառեճ, Դառդառանջ, Դոնտառունչ, Դոդոռաջ, Դոռոնջ, Դառանջ, Տոռոնջ-տոռոնջ, Տառինջ-տառինջ, Տնդալեճ, Մելետ, Մելենետ-Տերընտաս* և այլն: Ավանդական կենցաղում առավել տարածված էր *Տրընդեճ*³⁰ անվանաձևը:

²⁸ **Տրընդեճ. Կրակթուկի** ծեսն Ալեքսանդրապոլում / 19-րդ դ. վերջ /

²⁹ **Տրընդեճ, ARMENIA -ՀԱՅԱՍՏԱՆ.** միջազգային նամականիշների շարքից /ազգագրագետ-խորհրդատու՝ Սամվել Մկրտչյան /

³⁰ Սոցիոլոգիական և ազգաբանական հետազոտությունները վկայում են, որ հայոց արդի կենցաղում ևս առավել տարածված է **Տրընդեճ** անվանաձևը:

Համաձայն հայագիտության մեջ եղած տեսակետների՝ տոնը ծագմամբ շատ ավելի հին է: Այն իր նախնական հենքով որոշակի աղերսներ է ունեցել այնպիսի հին աստվածների պաշտամունքի հետ, ինչպիսիք են՝ երազների մեկնիչ և դպրության ու արվեստի պաշտպան **Տիրը** և հատկապես **Միիրը**՝ կրակի և արևի աստվածը:

Համաժողովրդական այս տոնն ուներ համընդհանուր արարողակարգ և կատարվում էր փետրվարի 13 -14-ին:

Կենցաղում տոնի ամենատարածված բաղադրիչը՝ ծիսական խարույկի հետ կապված արարողությունն էր, որը սկսվում էր նախորդ օրը՝ փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո:

Տոնական խարույկն անտառային շրջաններում հիմնականում պատրաստում էին փայտից և հատկապես՝ **ցրտեն**, **ցիրո** կամ **ցրդի** կոչված ծառի ճյուղերից (ըստ ավանդության, նորածին Քրիստոսին այդ ծառի ճյուղերով էին բարուրել), իսկ անտառազուրկ վայրերում՝ ծղոտից և ամենատարբեր փշերից: Ինչ վերաբերում է տեղին, ապա խարույկը պատրաստում էին եկեղեցիների բակերում, տներում (սովորաբար՝ երդիկների վրա), փողոցներում, դաշտերում և այգիներում: Սովորաբար, առաջնությունը տրվում էր եկեղեցու կամ ավագանու խարույկներին:

Հիմնականում երիտասարդներին էր վերապահվում՝ եկեղեցու բակում կիտված խարույկն առաջինը վառելու իրավունքը: Սովորության օրենքով այդ իրավունքը, նախ տրվում էր նոր ամուսնացածներին և նշանվածներին. նրանք միայն քահանայից հետո կարող էին մոտենալ սրբազան կրակին և եկեղեցուց բերված մոմերով վառել երդիկների վրա կամ բակերում նախապես պատրաստված դեզերը:

Գրեթե ամենուր՝ ցորենից, գարուց, կորեկից, ոսպից ու սիսեռից աղանձ էին պատրաստում: Հարսնացուի ու փեսացուի անուններով հաճախ խնամիներն աղանձափոխանակություն էին կատարում: Նորապսակներին մատուցված նվերները հնայական բնույթի արարողություններ էին, որոնց նպատակը սերնդաճին նպաստելն էր:

Բազմազան էին Տրընդեզի խարույկի շուրջը տեղի ունեցող ծեսերը, որոնք գուշակությունների ողջ համալիրով արտահայտում էին երիտասարդության, սիրո, ամուսնության, սերնդաճի և նմանատիպ այլ գաղափարներ: Վառված խարույկի շուրջը պտտվում և նրա վրա-յով ցատկում էին բոլորը, սակայն այս պարագայում ևս առաջնությունը տրվում էր նորապսակներին: Վերջիններիս ուղեկցելու իրավունքը վերապահված էր որոշակի պատվավոր անձանց (քավոր, քավորկին,

խաչեղբայր և այլն): Քավորը, սովորաբար, բռնում էր փեսացուի ձեռքը, վերջինս էլ իր հարսնացուի և միասին երեք կամ յոթ անգամ պտտվում էին բոցավառ դեզի շուրջը ու հետո՝ կրկին անգամ ցատկում կրակի վրայով: Շատ դեպքերում փեսան հարսանեկան նարոտով, իսկ հարսը՝ հարսանեկան գեղեցիկ քողով, սպասում էին քահանային, որպեսզի նա սրբազան այդ կրակի մոտ կատարի կրկնապսակի արարողությունը և որից հետո սկսվում էր տոնական խրախճանքը: Ջավախքում հարսն ու փեսան միմյանց բռնած, ձեռքերին զույգ մոմեր, հարսի կողքին սանամայրն, իսկ փեսայի՝ կնքահայրը, երեք անգամ պտտվում էին խարույկի շուրջը: Ծիսական այդ կրակի շուրջը կատարվող արարողության ժամանակ, երբեմն բարեկամ կանանց հետ միասին նորահարսին ուղեկցում էր նաև նրա մայրը:

Երեկոյան ժամերգությունից հետո պատրաստում էին ավանդական **խեծաղը** (կամ՝ **խեծախը**), որը նշանված աղջկա ծնողները նվիրում էին փեսացուին, միաժամանակ, չնոռանալով նաև վերջինիս նվերները (սովորաբար՝ գոտի, գդակ, թաշկինակ և այլն): Ընծաները հիմնականում ուղարկում էին երեխաների միջոցով, որոնց նկատմամբ խնամիները հարգալից վերաբերմունք էին ցուցաբերում: Ինչ վերաբերում է խեծաղին, փեսացուն այն բաժանում էր տնեցիներին և ընկերներին:

Բարեկամ կանայք ևս պարտավոր էին ընծաներով գնալ և նորահարսներին դուրս հանել՝ «**ի տես Տեառնընդառաջի**»:

Տոնի առթիվ նորապսակներին տրված ծիսական նվերների այդ համալիրը հայտնի էր «**խոնջա**» անունով:

Տրընդեզին տարածված էր նաև օժիտ տանելու սովորույթը, հատկապես նոր ամուսնացած հարսի օժիտը, որի տեսականին շատ համեստ էր և սովորաբար ձեռագործ իրեր էին (թևաշոր, թաշկինակ, գլխաշոր, գլխարկ և այլն): Ինչ վերաբերում է օժիտ տանելու արարողակարգին, ապա այն հիմնականում ուղեկցում էր հեղինակավոր կանանցից որևէ մեկը: Վերջինս խնամու տանը ցուցադրաբար ներկայացնում էր օժիտն, ինչպես նաև փեսայի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար նախատեսված նվերները: Խնամիները ևս, իրենց հերթին, նվերներ էին մատուցում օժիտը բերողներին:

Տրընդեզը բնության զարթոնքի տոն էր: Արեգակ-կրակի պաշտամունքային հիմքով տոնի հավատալիքային համալիրն առավելապես կապված էր խարույկի հետ՝ կրակ, ծուխ և մոխիր բաղադրիչներով: Կրակի զորավոր օգնությամբ փորձում էին ազդել ձմեռվա ցրտաշունչ եղանակի վրա և ըստ այդմ՝ գուշակություններ անել գերդաստանի անդամների և տնտեսության ապագայի վերաբերյալ՝ սկսած

բարեհաջող ծննդաբերության ու ապաքինման ակնկալիքից մինչև ցանքի և սպասվելիք բերքի առատության ապահովումը: Այդ արարողությունները մեծամասամբ կատարվում էին համայնքի քահանայի կամ համայնքի ավագանու հսկողությամբ:

Սրբազան խարույկի մոխիրը թափում էին տան չորս անկյուններում, որպեսզի օջախը «բարաքյաթով» լինի, թուխսի տակն էին լցնում, որ ճտերն անվնաս դուրս գան: Կրակի ածխացած կտորները քսում էին նաև աչքերի կոպերին՝ պայծառ լույս ունենալու նպատակով: Չբեր կանայք, սրբազան կրակով խանձելով ներքնազգեստի փոքրիկ հատվածը, դրանով իսկ պտղաբերություն էին ակնկալում: Բարեհաջող ծննդաբերելու համար մոխիրը լուծում էին ջրի մեջ և խմեցնում ծննդկանին: Այդ մոխիրը երբեմն որպես դեղ էին օգտագործում՝ քսելով մարմնի ցավոտ մասերին: Կանայք այն լցնում էին կճուճների վրա, որպեսզի դրանք միշտ առատ լինեն, լցնում էին հավաքները, որ հավերը շատ ձու ածեն: Նույն նպատակով, երեխաները մեկական հավ գրկած կանգնում էին խարույկի շուրջը: Կրակի ածխով նաև մառանի և տան երդիկներին գծում էին շրջանակներ՝ չար աչքից խուսափելու համար, իսկ մոխիրը գարնանը շաղ էին տալիս արտերում, որպեսզի մկները ցանքսերը չվնասեն: Խարույկն այրած մոմերի մի մասը պահում էին, որ հետագայում դրանք վառելու միջոցով երաշտի դեմն առնվի կամ կարկուտը դադարեցվի: Այդ նպատակով Լոռիում խարույկի մոխիրը խառնում էին Ս. Սարգսի տոնական փոխինձին և կարկուտի ժամանակ շաղ տալիս դեպի երկինք կամ այգիների մեջ: Վայոց Ձորում, երբ քահանան կարդում էր Ավետարանի այն հատվածը, որ Սիմեոն ծերունին ասում էր Մարիամին՝ «և ընդ քո իսկ անձն անցցե սուր», յուրաքանչյուրը դանակով գաղտնի կտրում էր իր մոտ պահած մոմի կտորը, հավատալով, որ օձերն այլևս իրեն չեն կծի: Տանը, եթե հիվանդ կար, նրան երդիկով հանում էին տանիք՝ սուրբ դեզի մոտ, որպեսզի նա շուտ ապաքինվի:

Տարածված էին Տրդնդեզի խարույկի ծխի ուղղության հետ առնչվող գուշակությունները: Խորհրդավոր ծուխը, որ կողմ թեքվեր, այդ ուղղությամբ էլ համայնքի բանիմաց ավագները **ճշտում** էին տվյալ տարվա ընթացքում սպասվելիք հաջողության ճանապարհը: Ավանդույթներին առավել գիտակները, օրինակ, Ջավախքում, ասում էին, եթե «**ծուխը հարավ կամ արևելք է գնում, հասկը կամ բերքը լավ է լինելու, իսկ եթե հյուսիս կամ արևմուտք՝ վատ**»: Խարույկը վառելու միջոցին շատ հաճախ հրացաններով կրակում էին, որոնց ձայնից շները վախենում էին և փախչում, իսկ փախուստը որ կողմը լինի, այդ տարվա հողային և բերքային

առատությունն այդտեղից էր սպասվելու: Կրակի ծխի ուղղությամբ նաև գուշակում էին, թե որ կողմից է գալու ցանկալի փեսացուն կամ հարսնացուն:

Հավատում էին, որ այդ տոնի երեկոյան ծնված երեխան շատ չար և կրակոտ պետք է լինի, քանի որ **«կրակի հետ էր ծնվում»:**

Հաշվում էին երկնքում երևացող սարյակների քանակը և դրանով որոշում՝ տարվա յուրի առատության չափը:

Տարածված էր նաև նոր հանգուցյալների հարազատներին (մասնավորապես՝ կանանց) այդ տոնի միջոցով սգից հանելու սովորույթը: Մուշում և Տարոնում քավորկինն ու սանամայրը գնում էին սգավոր բարեկամի տուն և միասին այցելում եկեղեցի: Երեկոյան ժամ-երգությունից հետո նրանք միասին դուրս էին գալիս եկեղեցու գավիթ ու ներս մտնում՝ իբրև **«Տիրոջն ընդ առաջ»** և որից հետո վշտի մեջ գտնվողները կարող էին արդեն **«արևով էլ դուրս գալ»**՝ այսինքն սգից դուրս եկած էին համարվում:

Հայոց կենցաղում մինչև 20-րդ դ. 30-ական թթ. գրեթե ամբողջությամբ պահպանվել էր Տրընդեզի ավանդական ծիսահամալիրը՝ տոնածիսական ուտեստը (աղանձ, խեժաղ, հալվա, չիր և այլն), նորապսակների կապակցությամբ ազգականների փոխայցելություններն ու նվիրատվությունները, բաժինքի կամ օժիտի ավանդույթը և հատկապես՝ ծիսական խարույկի հետ կապված արարողությունները, գուշակությունները, որոնց միջոցով ակնկալվում էր սպասվող բերքի առատություն, անձնական երջանկություն և բոլոր տեսակի հիվանդություններից ձերբազատում:

Տրընդեզի ծիսական խարույկը թող հավերժ ջերմացնի բոլորի և հատկապես՝ նորապսակների սրտերն ու հոգիները և իր խորհրդավոր զորությամբ՝ իրականացնի նորահարսների ամենաբաղձալի երազանքը՝ մայրանալը:

5. ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

31



32



Բարեկենդանը հայոց ավանդական կենցաղում տարածված տոներից էր, որը մինչև XXդ. սկզբները նշվում էր պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում:

Բարեկենդանի ընդհանուր տևողությունը կենցաղում տատանվում է մեկից մինչև երկու (երբեմն՝ երեք) շաբաթ: Եթե քաղաքային բնակավայրերում հիմնականում նշվում էր Բարեկենդանի միայն մեկ, այն է՝ երկրորդ շաբաթը, ապա գյուղական շրջաններում այն ընդգրկում էր երկու շաբաթներն ամբողջությամբ: Տոնի վերջին կիրակին Բուն Բարեկենդան էր համարվում ամենուր, որն այդ ծիսաշարի ամենատարածված և հատկանշական հատվածն էր, չնայած կային բնակավայրեր, ուր Մեծ Պասին նախորդող վերջին երեք օրերը ևս կոչվում էր Բուն Բարեկենդան:

Բուն Բարեկենդանի տոնը հայոց եկեղեցական տոնացույցով որոշակիորեն կանոնարկված է: Այն նշվում է Քրիստոսի Հարության կամ Ջատկի տոնից յոթ շաբաթ առաջ, կիրակի օրը և ունի 35 օրվա շարժականություն (փետրվարի 1-ից մինչև մարտի 7-ը):

Այս տոնը, որը կենցաղում էլ հիմնականում հայտնի էր «Բարեկենդան» անունով, ուներ նաև անվանման այլ ձևեր (օրինակ «Բարիկենանք»՝ Նոր Նախիջևանում, «Փորեկենդան»՝ Ջավախքում, «Պարեկենդանք»՝ Արճակում, «Բըրզինդան»՝

³¹ Բարեկենդանի «Խանը» Ծաղկավանքում / 19-րդ դ./

³² Բարեկենդանյան դատավարություն / 19-րդ դ. /

Մեղրիում, «Պարզընդընք»՝ Մուսա Լեռում և այլն), որոնք համապատասխանում էին տոնի բովանդակության ժողովրդական ընկալումներին:

Քրիստոնեական տոնացույցում հիմնական գրանցում ստացած այս տոնն արձատներով հեթանոսական է: **Բարեկենդանը** կապված էր գարնան, բնության զարթոնքը և նոր կյանքի սկիզբը խորհրդանշող հնագույն հավատալիքների հետ:

Բարեկենդանի ամենատարածված բաղադրիչը զանգվածային խնջույքներն էին: Մարդիկ, ըստ իրենց կարողության, նախօրոք մորթում էին տոնի համար նախատեսված կենդանիները (եգ, ոչխար, գառ, աքլոր և այլն), որոնք պահում էին սառը մառաններում՝ տոնախմբության ընթացքում օգտագործելու նպատակով: Այդ օրերին բավական տարածված էր ոգելից խմիչքների (գինի,օղի) գործածությունը: Կազմակերպվում էին հերթականությամբ՝ տնիցտուն անցնող խնջույքներ: Միայն աշխատանքների, խաղերի և մարզական հանդիսությունների ժամանակ էին ընդհատվում թե՛ խնջույքները:

Բարեկենդանի երկուշաբթի օրվանից տանտիրուհիները սկսում էին տոնական նախապատրաստական աշխատանքները. բացում էին յուղի կճուճները, թխում տարբեր տեսակի գաթաներ և հալվաներ պատրաստում:

Տոնական խրախճանքներին մասնակցում էին բոլորը: Ուշադրության կենտրոնում էին նաև աղքատները, որոնք այդ օրերին վայելում էին տոնական առատ սեղանները: Հիշում էին նաև պանդխտության մեջ գտնվող մերձավորներին՝ երգելով նրանց նվիրված հատուկ տաղեր: Հրավիրում էին հայտնի աշուղների և հեքիաթասացների: Հանդիսությունները հատկապես թե՛ ժամում էին տոնի վերջին օրը՝ Բուն Բարեկենդանին: Երեկոյան, երբ արդեն չափից ավելի հագեցած էին խնջույքներից, նախ՝ տան մեծը, ապա՝ մյուսները, որպես ուտիք և ուրախ օրերի ավարտի ծիսական խորհրդանիշ՝ **«փակում էին իրենց բերանները»** ձվով կամ ձվածեղով և միմյանց դիմում հետևյալ բարենաղթանքով. **«բերաններս փակում ենք սպիտակ ձվով, Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»:**

Տոնն աչքի էր ընկնում շնորհավորական փոխայցելություններով: Տոնախմբության ընթացքում միմյանց այցելում և շնորհավորում էին հիմնականում ցերեկային ժամերին: Հաճախակի էին խնամախոսությունները, նշանդրեքները և հատկապես՝ հարսանիքները: Վերջինս, ավանդույթի համաձայն, արգելված էր Մեծ Պասի շրջանում: Շնորհավորական փոխայցելությունները և նվիրատվություններն ամենից տարածված էին նորապսակների հարազատների միջև: Բարեկենդանին պահպանվել էր նորահարսների դարձ գնալու սովորույթը: Շատ դեպքերում

նորափեսաները ցերեկներն անցկացնում էին աներանց տներում, իսկ երբեմն էլ նրանց թույլ էր տրվում **«երեք օր ու զիշեր»** մնալ նշանածների հայրական օջախներում: Նորահարսներն ու նշանվածները բազում նվերների էին արժանանում սկեսրանց և նրանց հարազատների կողմից, որոնց տեսականին համեստ էր: Հիմնականում նվիրում էին կտորեղեն, հագուստեղեն, զարդեղեն, ինչպես նաև՝ դրամներ: Նշանված տղաներն ու նորափեսաներն էլ փոխադարձաբար ընծաների էին արժանանում իրենց ընտրյալների ծնողների և ազգականների կողմից:

Բարեկենդանյան փոխայցելությունները հարմար միջոց էին աղջիկների և պատանիների ծանոթության և շփվելու առումով, ինչն առօրյա կենցաղում սահմանափակված էր իրավական-սովորութային կանոններով:

Բարեկենդանի երկուշաբթի օրը պարտադիր այցելում էին նախ՝ քահանայի, այնուհետև՝ համագյուղացիների տները: Միմյանց տոնը շնորհավորում էին բարեմաղթանքի հետևյալ խոսքերով. **«շնորհավոր ապաշխարանք Քրիստոսի»** կամ **«շնորհավոր Բարեկենդան, բարով հասնենք սուրբ Յարության»:**

Տոնախմբության էպիկենտրոնում գերակայողը ժողովրդական խաղերն էին, որոնց ցանկը շատ հարուստ էր: Խաղերը կազմակերպվում էին կալերում (ցերեկները), օդաներում (երեկոյան) և դաշտերում: Գոյություն ուներ խաղերի մասնակիցների սեռատարիքային որոշակի բաժանում: Երեխաներն առավելապես վեգ կամ ճան էին խաղում, երիտասարդները գոտեմարտում էին, ձիարշավ կամ մականախաղ (ջրինդ) կազմակերպում, լախտի խաղում, իսկ հարսներն ու աղջիկները հիմնականում ճոճանակ կամ ճլորթի էին խաղում, որոնք նաև երգային և պարային հանդիսությունների ամենաակտիվ մասնակիցներն էին:

Այդ ծիսաշարում առանձնահատուկ տեղ ունեին **«խան-Փաշա»** անունը կրող խաղերը: Դրանց հիմնական սյուժեն՝ թուրք փաշայի կամ պարսիկ խանի նմանությամբ կերպարանափոխված և դիմակավորված անձանց թաթերականացված-ծիծաղաշարժ գործողություններն էին: Խաղային գլխավոր կերպարները, կատարելով դատավորի դեր, ծաղրում, քննադատում, դատում և տուգանում էին տարվա ընթացքում դժբախտություններ պատճառած բոլոր մեղավորներին, չմոռանալով համայնքի մեծերին՝ ռեսին, տանուտերին և զգիրին: Խաղի գլխավոր հերոսը հայտնի էր «փաշա» կամ «խան» անունով, որն ուներ նաև զինված թիկնապահներ: Նա կրում էր թղթ կամ թաղիքե թագ, երբեմն էլ նաև քոլոզատիպ գլխարկ, թիկունքին քաշում սավան կամ ոչխարի մորթի, փորը միշտ դուրս ցցած, ձեռքին բռնած սուր ձող, որի ծայրին տատանվում էին հին լաթի կտորներ: Սովորաբար, էշով էր շրջում

և ինչպես իր, այնպես էլ թիկնապահների դեմքերը մրոտված ու այլանդակված էին: Ուներ նա արհեստական բեղ ու մորուք: Մեղավորներին նա տուգանում էր դրամով կամ բնամթերքով: Տուգանքներից գոյացած բարիքներից օգտվում էին նաև Մեծ Պասի առաջին օրը կազմակերպված ուխտագնացությունների ժամանակ: Այդ խաղերը մեծամասամբ տեղի էին ունենում Բարեկենդանի վերջին շաբաթվա ընթացքում, իսկ որոշ տեղերում՝ նույնիսկ Մեծ Պասի երկուշաբթի օրը: Բարեկենդանյան այդ խաղը բավական մեծ ժողովրդականություն էր վայելում. խաղի ժամանակ մի կողմ էին դրվում քաղաքավարության կանոնները, պետական եկեղեցական օրենքները և իշխում էր սոցիալական ու տարիքային յուրօրինակ հավասարություն:

Նմանատիպ պատկեր էր նկատվում մյուս գլխավոր խաղում, որը հայտնի էր **«Աբեղաթող»** անվամբ: Այն կազմակերպվում էր վանքերում կամ եկեղեցիներում Բարեկենդանի վերջին շաբաթ և կիրակի օրերին: Խաղի ժամանակ սարկավագից, արեղայից ու վարդապետից սկսած մինչև եպիսկոպոսը, գրեթե, հավասար էին և մի պահ մոռացության էին տրվում դասային տարբերությունները: Սեղանատանը տեղի ունեցող խրախճանքներին հաջորդում էին գիշերային պարերն ու թափորը. դրանց կազմակերպման համար մասնակիցների քվեների մեծամասնությամբ ընտրվում էր թափորապետ: Վերջինս նստում էր գահավորակի վրա, գլխին կրում եպիսկոպոսական տիպի թղթե խույր, չաթալ թագ, իսկ ձեռքին՝ խոտից հյուսված գավազան: Նրա հագուստը դարձյալ թղթից պատրաստված շուրջառ էր, որի վրա գրված էր բոլոր միաբանների անունները: Ականատեսների վկայությամբ՝ **«վանականներն այդ օրը թողեր են աւետարան, առեր են թամպուրան»:**


Բարեկենդանը, մասնավորապես, հին երևանցիների համար ամենաառատ ուտելիքների տոնն էր: Այդ ժամանակ բացվում էր ղաուրման և անսպառ օգտագործվում յուղը: Պատահական չէ, որ տոնի վերջին երեկոյին տրվել էր **«տրաքելու օր»** անվանումը: Անհրաժեշտ էր ամբողջությամբ ճաշակել ուտիսի կերակուրները, որովհետև հաջորդ օրը սկսվելու էր Մեծ Պասը:

Այսպիսով, տոնի գլխավոր էությունն իր մեջ ներառել է անհատի՝ ազատ ու անկաշկանդ ապրելու, վայելելու բնածին ձգտման խորհուրդը: Այդ ազատությունը ընկալվել ու դրսևորվել է ամենից առաջ ընտանիքի ու նրա անդամների, ուսուցչի ու աշակերտի, վանական հայրերի ու նրանց ստորադրյալների փոխհարաբերություններում:

Ինչ վերաբերում է Բուն Բարեկենդանի շարականներին՝ դրանցում արտացոլված են Աստծո կողմից մարդու արարման և դրախտում նրա բնակվելու իրադարձությունները: Քրիստոսը հիշատակվում է նաև որպես երկրորդ Ադամ, որի զոհաբերությամբ մարդիկ արժանի դարձան դրախտի փրկությանը: Բարեկենդանի շարականները՝ տոնին զվարճացող մարդկանց կրկին անգամ հիշեցնում էին երկնային կյանքի՝ դրախտում նրանց սպասվող հոգևոր երջանկության մասին:

33

Բարեկենդանը թող կենդանության և վերապրելու, վերագարթոնքի լիցք հաղորդի բնությանը և հուսալքված մարդկանց հոգիներին:



34


35

³³ «Խան-փաշա». «Շահի» խաղը Բորչալուի (Լոռի) հարսանեկան վերջին գիշերվա ժամանակ

/ 19-րդ դ. /

³⁴ Ախլոճ -Ակլատիզները որպես մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշներ / 19-րդ դ. /

³⁵ Ակլատիզ. 21-րդ դ. սկիզբ /հեղինակ՝ Գոհար Ստեփանյան, լուսանկարը՝ Վարդ Ամիրխանյանի/



6. ՄԵԾ ՊԱՍ



Մեծ Պասը (կամ՝ **Մեծ Պահք**) իրենից ներկայացնում է բավական ընդգրկուն ծիսահանալիր, որը սկսվում է Բուն Բարեկենդանի ավարտով և վերջանում՝ Քրիստոսի Հարության կամ Մեծ Ջատկի տոնով: Տոնի ընդհանուր տևողությունը յոթ շաբաթ է: Այդ պասը **Մեծ** է կոչվում՝ պասերի ընդհանուր համակարգում ամենաերկարատևը (49 օր) լինելու պատճառով³⁶:

Մեծ Պասը սահմանվել է Առաքյալների կողմից, որ **«քառասուն օր պահեն Չարչարանց օրերից առաջ և ապա նշեն Ջատիկը»**:

Մեծ Պասի ծագումը կապված էր՝ աղոթքով ու ապաշխարությամբ, անպատում Քրիստոսի անցկացրած քառասուն դժվարին օրերի հետ: Աստվածաշնչում հիշատակվում է սատանայի կողմից՝ Հիսուսին փորձության ենթարկելու և նրա նկատմամբ Աստծո որդու հաղթանակի մասին: Քրիստոսի քառասնօրյա առանձնացումը՝ նախապատրաստության որոշակի շրջան էր նրա քարոզչական հետագա գործունեության համար:

Ավանդական կենցաղում պահպանված այդ ծիսաշարի շատ տարրեր հնագույն ծագում ունեն և առնչվում են հայոց **գարնանային Նավասարդի** հետ: Մեծ

³⁶ **«Պաս»** կամ **«պահք»** նշանակում է հրաժարվել որոշ տեսակի կերակուրներից, մասնավորապես՝ մսեղենից, կաթնեղենից, ձվից և նվիրվել՝ զղջումի ու ապաշխարության: Սկզբնական շրջանում **Մեծ Պասը** բաղկացած էր ութ շաբաթներից, որովհետև **Առաջավորաց Պասը** ևս դրա բաղադրիչներից էր: Քանի որ շաբաթ և կիրակի օրերին պահեցողությունը արգելված էր (**«Կանոնք Թադեոս Առաքյալի»**), հետևաբար, շաբաթներն ու կիրակիները հանելով (16 օր)՝ մնում են Մեծ Պահոց 40 օրերը:

Պասի կենտրոնական բաղադրիչը՝ **Ակլատիզը**, ժամանակի ընթացքում փոխարինել է բնության զարթոնքը խորհրդանշող մեռնող և հարույթուն առնող աստվածությա- նը՝ **Արային**: Գարնանային Նավասարդին փոխարինած Մեծ Պասը նոր, զուտ քրիս- տոնեական երևույթ է, որի անվան տակ ժողովուրդը պահպանել է հնամենի ծեսերն ու հավատալիքները:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Մեծ Պասը ներկայացնում էր ծիսական արարողությունների մի ամբողջական շղթա: Կենցաղում Մեծ Պասի առավել տարածված բաղադրիչները՝ **առաջին շաբաթվա**, **Միջինքի** և **Չարչարանց շաբաթի** հետ կապված ժողովրդական ծեսերն ու հավատալիքներն էին:

Ծաղկազարդը ևս ժամկետային առունով մտնում է Մեծ Պասի մեջ, որը սա- կայն իր նշանավորությամբ ինքնուրույն տեղ է զբաղեցնում հայոց տոնական համալիրում:

Հիմնականում՝ **Մեծ Պաս** կամ **Մեծ Պահք** անունը կրող ծիսական այս միկրո- համալիրը կենցաղում ուներ նաև անվանման այլ ձևեր. օրինակ, **«Աղուցք»** (Մուսա Լեռ), **«Ախացք»** (Նոր Նախիջևան) / այս երկուսն էլ **աղ ու հաց**, բառից են /, **«Ջոջ Պաս»** (Հարք), **«Քառասնորդական»** և **«ճոջ Պաղս»** (Արճակ) և այլն:

Տարածված էին Ակլատիզի հետ կապված ծեսերն ու սովորույթները: Մեծ Պա- սի առաջին օրվա գլխավոր իրադարձությունը՝ Ակլատիզի երևան գալն էր և թոնրա- տան երդիկից կախվելը, որը պիտի «պատժեր» պասը չպահողներին: Այն հիմնա- կանում ծերունու տեսք ուներ, որի պարզած թևերից քարեր էին կախված, իսկ միակ ոտքին ամրացված սոխի մեջ դրված էր Մեծ Պասի շաբաթները խորհրդանշող յոթ փետուր: Ըստ ավանդության, Ակլատիզը Մեծ Պասի վերջին օրը թռչուն էր դառնում և հեռանում՝ կրկին վերադառնալու նպատակով, իսկ նրա յոթ փետուրներն օրացուցային յուրատեսակ թերթիկներ էին: Մեծ Պասի ծիսական այդ գլխավոր կերպարը, որը մեծ մասամբ հայտնի էր **Ակլատիզ** անունով, ուներ նաև այլ անվանումներ. օրինակ՝ **Ազլատիդիզ** (Ջնաբերդ), **Պասի Պուլուլ**, **Պաս բեկ** (Հարք), **Ախալոզ** (Ջավախք), **Մըռմըռաս** (Նոր Նախիջևան), **Ախելուծ** (Բասեն), **Պասի պլոր** (Լոռի, Տավուշ), **Ախլոճ** (Բարձր Հայք), **Կոկորիճ** (Բայբուրդ), **Ախացելի** և այլն:

Միջինքը խորհրդանշում էր Մեծ Պասի կիսվելու ժամկետը (24-րդ օրը), որի կապակցությամբ կատարվող զուտ եկեղեցական արարողություններն այնքան էլ հարուստ չէին: Այն եկեղեցու կողմից հաստատվել էր՝ հիշեցնելու Մեծ Պասը կիսվելու մասին: Ուշագրավ է, որ Նոր Նախիջևանում այդ օրը կտրում էին հերթական շաբաթը խորհրդանշող փետուրի միայն կեսը՝ ցույց տալու, թե պասն

արդեն կտրվել է: Մուսալեռացիների մոտ այն հայտնի էր **Աղցուց կիս (Մեծ Պասի՝ աղ ու հացի կես)** անունով: Միջինքն այստեղ նշանավոր էր իր նվիրական ուտեստով՝ **աղցուց կլուրով (աղուհացի քուֆթայով):**

Միջինքը կենցաղում ժամկետային առունով հաճախ ընկալվում է որպես Մեծ Պասի միջին (4-րդ) շաբաթը: Այն աչքի է ընկնում ծիսական բաղարջով՝ **միջինքով**, որը հայտնի է նաև **միջունք** (Վաղարշապատ, Թալին), **միջնաբաղջ** (Վայոց Ձորի բնիկներ), **կլոճ** (Վայոց Ձորի գաղթականներ), **պալից** և **չորուկ** (Նոր Նախիջևան), **հարեգիլ** (Մուշ-Տարոն), **միջնակ լոճ** (Սուրմալու), **միջնապլիթ** (Արճակ), **մաջինք** (Մեղրի), **կուտապ** (Երևան) և այլ անուններով: Այդ բաղարջը կլոր կամ ուռուցիկ ձև ունի, որը պատրաստում են ձեթով, մեղրաջրով, ընկույզով ու քիչմիշով: Բաղարջի մեջ հուլունք կամ դրամ են դնում, իսկ կտրելիս հավասար բաժին էին հանում ինչպես տան բոլոր անդամներին, այնպես էլ ընտանի կենդանիներին և հողին: Ուն բաժնից որ այն դուրս գար, այդ տարվա ընթացքում նրա հաջողությունն ապահովված էր համարվում: Հին Ջուղայում հավատում էին, որ եթե բաղարջը կտրելու ժամանակ այդ նշանը կպչի դանակին, ընտանիքի ապրուստի աղբյուրը հողն էր լինելու (դանակը նույնացվում էր գութանի խոփի հետ): Հարքում, նման պարագայում, հաջողությունը վերագրվում էր ընտանիքի բոլոր անդամներին:

Հին երևանցիները Միջինքին սովորաբար **կուտապ** էին թխում: Վերջինս լոբով ու սիսեռով պատրաստված կարկանդակ էր, որի մեջ դնում էին արծաթ փող և ուն բաժին էր ընկնում, նրան էլ վերագրվում էր բախտավորությունը:

Միջինքին բաղարջ չէին պատրաստում այն ընտանիքներում, ուր նոր մահացության դեպքեր էին եղել: Մուշում և Տարոնում, բարեկամ կանայք **հարեգիլ**-բաղարջ էին պատրաստում և Միջինքի երեկոյան մատուցում սգավոր ազգականներին:

Կենցաղում տարածված Մեծ Պասի ծեսերից էր նաև **Քառասուն Մանկունքը**, որը նշվում էր Միջինքի շաբաթվա ուրբաթ երեկոյան: Երիտասարդ աղջիկներն ու տղաները հավաքվում էին որևէ բարեկամի տանը, որոնցից յուրաքանչյուրն իր հետ նախօրոք վերցնում էր քառասուն մանկան հիշատակը խորհրդանշող քառասուն մանր քարեր: Քարերի հաշվարկով նույնքան անգամ **ծունր էին իջնում** (ծնկաչոք աղոթում էին), որպեսզի Քառասուն Մանկանց աղոթքն իրենց վրա լինի և բազմիցս կրկնում հետևյալ խոսքերը՝ **«Քառսուն Մանուկ, քառսուն կուս, քառսուն մանկան բարեխոս»:**

Ջավախքում, այդ երեկո, չափահաս աղջիկները հալվա, գաթա ու խեժախ էին պատրաստում և սկուտեղի վրա դրված տանում նշանված ընկերուհու տուն, ուր դարձյալ տեղի էր ունենում ծնրադրության արարողություն: Առավոտյան միմյանց գլուխներն էին լվանում, որը կրկին խորհրդանշում էր քառասուն մանկանց խեղդվելու, նահատակվելու պատմությունը: Այնուհետև միասին ճաշում էին և ստանալով իրենց նվերները՝ այցելում սրբավայրեր:

Միջինքի չորեքշաբթի երեկոյան եկեղեցիներում ջրով ու ձեթով լի **կոնք** էր պատրաստվում, որին ժողովուրդը «**լիճք**» էր ասում: Այն՝ դարձյալ նվիրված էր հավատքի համար նահատակված կույսերին: Վերջինս իրենից ներկայացնում էր եղեգնյա խաչի մեջ դրված պատրույգ, որը ողջ գիշեր այրվում էր: Առավոտյան այն հավասարաչափ բաժանում էին բոլոր ներկաներին, որոնք էլ այդ ջուրը խմորի հետ խառնելով, պատրաստում էին տվյալ օրվա ծիսական բաղարջը:

Մեծ Պասի յուրաքանչյուր կիրակի եկեղեցին նվիրել է կոնկրետ դեպքի կամ գաղափարի, և ըստ այդմ, դրանք ստացել են իրենց անունները՝ **Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան և Ծաղկազարդ**: Կենցաղում նշված կիրակիները և վերջիններիս հետ կապված զուտ եկեղեցական ծեսերը քիչ էին տարածված:

Մեծ Պասի ծիսաշարում կարևոր տեղ էին գրավում շնորհավորական այցելություններն ու նվիրատվությունները: Նրա առաջին շաբաթվա երկուշաբթի օրը նորափեսան օղի վերցրած գնում էր շնորհավորելու աներոջ և զոքանչի Մեծ Պասը: Պասի կապակցությամբ միմյանց այցելում և շնորհավորում էին գրեթե բոլորը: Հատկապես տարածված էր խնամիների միջև պասի կերակուրներից բաղկացած «սեղաններ» ուղարկելու սովորույթը: Ջավախքում միմյանց տներն այցելում էին երկու գլխավոր նպատակով, նախ՝ շնորհավորելու Մեծ Պասը, ապա՝ փորձելու իրենց բախտը և ուշադիր հետևելու, թե ինչպես են իրենց հյուրասիրելու և ինչի մասին են խոսելու: Պատահական չէ, որ այդ օրը «**բաղդ փորձուկ**» էր կոչվում: Միմյանց շնորհավորում էին հետևյալ բարենաղթանքով. «**Շնորհավոր պաս ըլլի, բարով, խերով, դռով, դրկցով ու բարեկամներով հասնեք սուրբ-սուրբ Հարության**»: Տևական խնջույքներից, երբ գլուխները փոքր ինչ տաքանում էր, շնորհավորանքի խոսքերը մի այլ դրսևորում էր ստանում.

«Շնորհավոր պաս»

-Եփօր մերը գաս:

«Թասմ րախի տաս»

-Թը խելօք մնաս:

Նշանված աղջկա սկեսրանք, կաղիմներ և շագանակներ վերցրած, այցելում էին հարսնացուի տուն՝ հիմնականում **կաղին** («ջուխտ է, թե՛ վարդ») և այլ խաղերով տոնական ժամանցն անցկացնելու նպատակով: Վերջում ընթրում էին և ուշ երեկոյան վերադառնում տները: Մեծ Պասի ընթացքում, մինչև ճաշի ժամերգության ավարտը, շատերը ծոն էին պահում: Ջանգերը խփելուն պես եկեղեցի էին այցելում և ժամերգության ավարտից հետո վերադառնալով տները՝ վայելում էին նախօրոք պատրաստված **պոչով ապուրը** կամ **մախոխը, ավելուկը և բողկը**: Ավելի ավանդապահները **միաժում** էին **պահում** կամ **բռնում**: Երեկոյան դարձյալ եկեղեցի էին գնում, որտեղից վերադառնալով ընթրում էին, ապա՝ հավաքվում օդաներում, ուր խաղում, զրուցում և հեքիաթներ էին պատմում: Վաղ առավոտյան, կենդանիներին կերակրելուց (դարմնելուց) հետո, կրկին հավաքվում էին օդաներում և զվարճանում:

Յուրաքանչյուր կիրակի, երեխաները ճիպոտներն առած, բարձրանում էին տանիքների վրա և երդիկներից այնքան էին հարվածում Ակլատիզներին, որ դրանց փետուրներից մեկը վայր ընկնի: Ցանկալի Ջատիկն այն ժամանակ էր գալիս, երբ Ակլատիզի բոլոր փետուրները թափվում էին:

Ջանգեզուրում, **Մեծ Պասին**, գյուղացիները մի շիշ օղի, խնձոր և նուռ վերցրած գնում էին տանուտերի տուն ու շնորհավորում նրա «**Նոր Տարին**»: Գրեթե նույն ձևով այցելում էին քահանային: Այնուհետև, հատկապես, ազգականներն էին միմյանց տները գնում՝ Մեծ Պասը շնորհավորելու նպատակով: Նվագողները, սովորաբար, այցելում էին տանուտիրոջը, նվագում նրա տան առջև և միաժամանակ՝ որոշակի դրամ վճարում: Դա նշանակում էր, որ այդ երաժիշտները տվյալ համայնքում արդեն ունեին ազատ նվագելու իրավունք:

Սյունիքում՝ Մեծ Պասի առաջին օրը, երեկոյան, նորափեսաները «գաղտնի» այցելում էին աներանց տները՝ հյուրասիրվելու ակնկալիքով: Գանձակում տղամարդիկ և տարեց կանայք, խնձորներ ու կիտրոններ վերցրած, փոխադարձաբար գնում էին միմյանց տները: Նորափեսան պարտադիր այցելում էր զոքանչին և շնորհավորելիս՝ համբուրում նրա ձեռքերը: Վերջինս համբուրում էր փեսայի ճակատը և մի զույգ գուլպա նվիրում:

Երիտասարդները ծիախաղեր էին կազմակերպում, իսկ աղջիկներն ու նորահարսները նախընտրում էին ճլորթին (ճինջաղ): Այդ խաղերը երբեմն լուրջ առիթ էին դառնում նոր ծանոթությունների և սիրային խոստովանությունների:

Մեծ Պասի ընթացքում արգելվում էին ամուսնությունները: Թույլատրելի էր միայն մկրտությունը և նշանադրությունը:

Վարանդայում, երեխաներն ամեն կիրակի, Ակլատիզի հերթական փետուրը պոկելուց հետո, մեկական խնձոր վերցրած, գնում էին շնորհավորելու ավագների Մեծ Պասը և որպես նվեր՝ մրգեր ստանում: Մեծ տարածում ունեին ձիախաղերը և հատկապես՝ ջիլիթը:

Նոր Նախիջևանում, Մեծ Պասի երկուշաբթի օրը (որը կոչվում էր «**Բակլայ-խորան**», այսինքն՝ բակլայ ուտելու օր կամ պասուց կերակուրներ ուտելու օրերի սկիզբ), մինչև այցելելու և «**Ախացքը**» (Մեծ Պասը) շնորհավորելու սովորույթը XIXդ. վերջերին գրեթե վերացել էր, սակայն գյուղական բնակավայրերում այն դեռևս պահպանվել էր: Այդ օրերին գնչուները (ցիգանները) շրջում էին հայկական գյուղերում՝ հավաքելու հայերի ուտիսվա կերակուրների մնացորդները կամ ինչպես հայերն էին ասում՝ «**խալխան-խալխանը**»:

Սիսիանում, Միջինքին, նշանված երիտասարդի տնից հարսնացուի տուն հատուկ նվեր (**խոնջա**) էին ուղարկում, որի տեսականին ձեթով պատրաստված գաթաներ էին, մի կուլա գինի և մի շիշ օղի: Օղի տանելու սովորույթն այնքան մեծ տարածում ուներ, որ Դերսիմում Մեծ Պասի առաջին երկուշաբթին կոչվում էր «**Օխտը ռախի օր**»:

Վայոց Ձորի գաղթական բնակչության շրջանում **Ս. Գրիգոր Լուսավորչի** տոնին (**Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապն**, որը նշվում էր Մեծ Պասի հինգերորդ շաբաթվա շաբաթ օրը), նորահարսի սկեսուրը, զբոսանքի ու խնջույքի նպատակով հրավիրելով բարեկամ կանանց, գնում էին դաշտ, իրենց հետ նախօրոք վերցնելով ծիսական ուտեստի որոշակի պաշար: Այդ զբոսանք-սովորույթը հայտնի էր՝ «**գեաշտ**» անունով:

Կազմակերպվում էին ուխտագնացություններ, թեև դրանք զանգվածային բնույթ չէին կրում: Գորիսում ուխտի էին գնում Սուրբ Մարտիրոսի մատուռ՝ հավատալով հիշյալ սրբի զորությանը: Ուխտավորները մատուռի տարածքում գտնվող սրբազան ծառերի տակ խնջույքներ էին կազմակերպում, ուր երբեմն իր շքախմբով ուխտավորներին էր միանում նաև «**Բարեկենդանի փաշան**»:

Որոշակի վերաբերմունք կար հանգուցյալներ ունեցող ընտանիքների նկատմամբ: Այդ ընտանիքներում, Մեծ Պասի առթիվ, հատուկ սեղաններ էին պատրաստում՝ քուրսիների վրա դնելով բաղարջ, բակլա, փլավ, բոխի, ավելուկով աղցան, օղի և այլն: Սգավորներին մխիթարելու նպատակով ազգականներն ու հարևան-

ները քահանայի առաջնորդությամբ այցելում էին նրանց տները: Այնուհետև, տղամարդիկ՝ օղի և ուտելիքներ վերցրած, հավաքվում էին եկեղեցու գավթում, ուր ննջեցյալների հիշատակի կապակցությամբ քահանան **«հոգոցի»** արարողությունն էր կատարում: Միասին ճաշակելով պասի կերակուրները, յուրաքանչյուրն այցելում էր մերձավորի գերեզմանը:

Մուշուն և Տարոնում տղամարդիկ այցելում էին սգի մեջ գտնվող մերձավորներին ու շնորհավորելով Մեծ Պասը՝ մխիթարում հետևյալ մաղթանքով. **«շնորհավոր պաս, պաս աղոթք ի գայ ձեր վրեն, ձեր յորդիներուն, ամեն տարի ուրախութիւնով հասնիք էս օրին»:**

Մեծ Պասի առաջին շաբաթվա բոլոր օրերին հատուկ պաս էին պահում. երկուշաբթին՝ **բակլայ խորան** էր կոչվում, երեքշաբթին՝ **խորանի խորան**, չորեքշաբթին՝ **մկան կիրակի**, հինգշաբթին՝ **կատաղած շան**, ուրբաթը՝ **չարչարոց** (չար աչքից գերծ մնալու համար), շաբաթը՝ **թալալոսի** (վերջինս երեխաների շրջանում տարածված հիվանդությունն էր):

Վարանդայում, հարսներն ու աղջիկները, սրբազան ջուր բերելու նպատակով, վաղ առավոտյան գնում էին մոտակա աղբյուրները, իսկ տղաները փայտ կամ քար էին հավաքում, քանի որ հավատում էին՝ թե **«այդ պահին մի որևէ բան տանեն տուն, իրենց օջախը բարաքյաթով կլինի»:** Մեծ Պասի առաջին շաբաթն ապաշխարության օրեր համարելով, ծանր գործերով չէին զբաղվում՝ կանայք ճախարակ չէին մանում, կար չէին անում, շալ չէին գործում: Երկրորդ շաբաթվա առաջին երեք օրերին ևս զգուշանում էին ծանր աշխատանքներից, երկուշաբթին՝ **«գայլկերածի և կատաղած շան»**, իսկ երեքշաբթին՝ **«կայծակ խփածի»** օրեր համարելով: Եթե չզգուշանային և այդ օրերին ծանր գործեր կատարեին, **«գայլը կուտեր նրանց երեխաներին կամ կատաղած շունը կկծեր»:**

Մեծ Պասի սկիզբը խորհրդանշող երկուշաբթին շատ տեղերում հայտնի էր **«լուացարուք-սրբեցարուք»** անունով:

Տանտիկինը քարը դնում էր երդիկին և մի քար էլ պահելով ձեռքին, տանը գտնվողներին երդիկից հարցնում էր՝ **«ի՞նչ աղամ»**, - ներսից պատասխանում էին. **«մուկն աղա, կարիճ աղա, օձ աղա, մորեխ աղա...»:** Այս ամենից հետո նա մի ձեռքի քարը քսում էր մյուսին՝ իբր թե աղում, վերացնում էր բոլոր այն կենդանիներին, որոնց անունները հիշատակում էին ներսից՝ հուսալով, որ դրանք կչքանան տներից, այգիներից ու դաշտերից:

Հարքում կանայք մաքրում էին տները և ծայրին շոր կապած երկար փայտի միջոցով (որը նախօրոք թաթախում էին ալյուրի մեջ) աստղերի ու կենդանիների պատկերներ էին նախշում առաստաղի գերանների և սյուների վրա:

Լոռիում արգելվում էր տան օջախը հանգցնել, հակառակ դեպքում՝ դա մեղք կհամարվեր:

Ղազախում Մեծ Պասի առաջին օրը կոչվում էր «**կրակի կիրակի**» և ով որ չընդուներ կամ չնշեր այն, «նրա շորերը կայրվեին»: Երկրորդ օրը՝ «**ջրինն**» էր, որը չպահողին «ջուրը կտաներ»: Երրորդը՝ «**մկանն**» էր, որը չպահելու դեպքում կրծողների կողմից մեծ վնաս կհասցվեր տնտեսությանը: Եթե որևէ կին չգնար եկեղեցի և չլսեր «**Տեր ամենակալը**», նա այլևս չէր կարող ճախարակ (ջահիրը) մանել: Չորրորդ օրվա առաջին գործը պիտի լիներ ճախարակ մանելը, որովհետև միայն դրա մեջ կարելի էր գտնել հաջողությունը (բարաքյաթը): Չորեքշաբթի և ուրբաթ երեկոները կանանց արգելվում էր որևէ աշխատանք կատարել, քանի որ կար այն հավատը, որ այդ օրը կատարած գործերը հաջող ավարտ չէին ունենա, իսկ ուրբաթ օրվա աշխատանքի հետևանքը կլիներ ողջ ունեցվածքի, ինչպես նաև երեխաների՝ զոհ գնալը կրակին:

Նորապսակները երբեմն կշռվում էին՝ իմանալու թե զույգերից ով է ավելի ծանրը և ըստ այդմ **ճշգրտում** երկարատև պահեցողության արդյունքը:

Մեծ Պասի առաջին հինգշաբթին շատ տեղերում համարվում էր անիծված օր և կանանց արգելվում էր կար անել: Միջինքին ևս կար չէին անում, որպեսզի կար անողի մարմինը կես չլինի: Գլուխները չէին լվանում, որպեսզի մազերի կեսը չթափվի: Նույն նպատակով չէին կտրում նաև եղունգները: Հավատում էին, որ այդ օրը կատարած որևէ անզգույշ արարքից ամեն բան կարող էր կիսվել՝ վատ հետևանք ունենալ:

Մեծ Պասի առաջին օրը տանտիրուհիներն աղանձ էին պատրաստում: Ընդհանրապես, աղանձ շատ էին ուտում, հավատալով, որ երկարատև պահքի պատճառով «**բերաններն այսուհետ չեն հոտի և շրթունքները չեն ճաքի**»:

Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում արդեն իսկ նկատվում էր պասի անկման որոշակի միտում: Վերջինս մասնավորապես ակնառու էր քաղաքային շրջաններում և հատկապես՝ այլէթնիկ զանգվածով բնակեցված վայրերում: Այս տեսակետից շատ բնութագրական էր դրա պահպանվածությունը նորնախիջևանցիների կենցաղում: Պասի սովորույթը Նոր Նախիջևանի գյուղերում դեռևս պահպանվել էր, սակայն քաղաքում այն աստիճանաբար անկում էր ապրել: Չորեքշաբ-

թի և ուրբաթ օրերին պաս գրեթե չէին պահում. պահպանվել էին միայն շաբաթապասերն ու քառասնորդաց պասը և այն էլ՝ տարեցների շրջանում: Ամբողջ Մեծ Պասը պահողների թիվը սակավ էր: Նոր Նախիջևանում **պասի** վերանալու հանգամանքը պայմանավորված էր որոշակի գործոններով. նախ՝ քաղաքային և այլազգի միջավայրում բնակվող գաղթական հայերի մեջ դրա նշանակության աստիճանական կորստի և ապա՝ տնտեսական ու կլիմայական հանգամանքներով: **Պասի** կերակուրների գլխավոր բաղադրիչներից՝ բանջարեղենը, բնակլիմայական տվյալ գոտում սակավ էր և, գրեթե, բացակայում էր: Մեծ Պասի ընթացքում այստեղ դաշտերը դեռ ձյունով ու սառույցով էին պատած և խոսք անգամ չէր կարող լինել թարմ կանաչեղենի մասին: Բնականաբար՝ տեղական կանաչեղենը սակավ էր, իսկ եղածն էլ՝ ներմուծովի ու բավական թանկ: Չնայած բանջարեղենի և, ընդհանրապես գործածելի կանաչեղենի սղությանը, այդուհանդերձ, նրանց ծիսական սեղաններում մասամբ առկա էին պահքի կերակուրները՝ չոր մրգեղենը, մանանեխը, տապակած կարտոֆիլը և այլն:

Նոր Նախիջևանում Մեծ Պասի շաբաթվա յուրաքանչյուր օրը խորհրդանշող Ալլատիզի փետուրն ուներ հատուկ գույնի ժապավեն. Ջատկինը կարմիր էր, Ծաղկազարդինը՝ կանաչ, Լուսավորչինը՝ սպիտակ, իսկ մյուս շաբաթներինը՝ սև:

Տարածված էին ժողովրդական սովորույթները՝ կապված **Չարչարանց** կամ **Ավագ շաբաթվա** հետ: Վերջինս Ծաղկազարդից մինչև Ջատկին ընկած ժամանակահատվածն էր, իսկ այդ շաբաթվա յուրաքանչյուր օր ևս **Ավագ** էր կոչվում: **Ավագ երկուշաբթվանից** սկսած եկեղեցիներում Ավետարանն էր ընթերցվում, որը վերաբերում էր Հիսուսի կյանքի վերջին շրջանին:

Ավագ շաբաթվա սկզբներին կենցաղում ժողովրդական բնույթի ծեսեր գրեթե չկային: Մարդիկ այդ օրերին հիմնականում նախապատրաստվում էին Մեծ Ջատկին:

Ավագ երեքշաբթի երեկոյան, Ավետարանի ընթերցանության ընթացքում, երբ կարդացվում էր **հիմար ու իմաստուն կույսերի** առակը, տասը դպիրների կամ աղջիկների մոմեր էին բաժանվում և ափսեի մեջ թերթիկներ տեղադրվում, որոնց վրա գրված էր՝ «**հիմար**» և «**իմաստուն**»: Այնուհետև, նրանք վերցնում էին այդ թերթիկներից որևէ մեկը և նայած թե ում՝ «**հիմար**» կամ «**իմաստուն**» էր ընկնում, արժանանում էին համընդհանուր «**նախատիմքի**» կամ «**գովասանքի**»:

Ավագ Չորեքշաբթին կենցաղում առավել հայտնի էր **Չիք չորեքշաբթի անունով**: Սիսիանում, Գանձակում և Վարանդայում ուխտի էին գնում ավանդական

սրբավայրերը (Սիսիանում՝ Որոտնա վանք, Գանձակում՝ «Մկնատամի խաչ», Շուշիում՝ «Քամու խաչ»)։ Ուխտավորները մոմեր էին վառում, աղոթում և այդ սրբավայրի հողից ջրով մի փոքր շաղախելուց հետո քսում մկնատամ ունեցողների վերքերին, որ շուտ ապաքինվեն։ Վերադարձի պահին քարեր էին գլորում կամ նետում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ քարերի հետ հեռանան։ Ուխտավայրերում գտնվող ծառերից շորեր էին կապում, որպեսզի հիվանդություններն այնտեղ կապված մնան։ Սրբավայրերից բերված հողը լուծում էին ջրի մեջ և խմեցնում աղջիկներին՝ շուտ ամուսնանալու ակնկալիքով։

Տանտիկիները հիմնովին մաքրում էին տները՝ «**չիք էին անում**»։

Լոռիում մի քանի ձու էին ներկում՝ «**չքի (չարի) աչքը հանելու համար**»։ Ոմանք էլ եղունգների մեջտեղից որևէ առարկայով գիծ էին քաշում, որպեսզի իրենց «**բանը կիսատ-պռատ չմնար և ոչ էլ բախտը ուրիշին գնար**»։

Ջանգեգուրում այգեպանները կացիներով հարձակվում էին պտուղ չտվող ծառերի վրա և «սպառնում կտրել», սակայն ներկաներից մեկն իբր արգելում է նրանց՝ հորդորելով, որ «**մի տարի ևս սպասեն, որ այդ տարի լավ բերք կլինի**»։

Ջավախքում այդ օրվան նաև «**ցավիս վերջ**» էին ասում և կեսգիշերից մինչև մյուս օրվա ճաշի ժամերգության ավարտը լուռ էին մնում, որ ցավեր այլևս չունենան։

Շաբաթվա ծեսերից կենցաղում ամենից շատ պահպանվել էին **Ավագ Զինգ-շաբթի** օրվա հետ կապված արարողությունները։ Առավոտյան մատուցվում էր սուրբ Պատարագ, որը խորհրդանշում էր մարդկության փրկության համար Քրիստոսի զոհաբերությունը՝ խաչվելը։

Եկեղեցիներում, երեկոյան, կատարվում էր **ոտնալվայի** ծեսը, որի հիմնական խորհուրդը՝ Զիսուսի կողմից իր աշակերտների ոտքերը լվանալու հիշարժան իրադարձությունն էր։ Ի դեպ, անցյալում հյուրերի և ավագների ոտքերը լվանալը հարգանքի արտահայտության ու մեծարանքի նշան էր։

Երեկոյան, ժամերգության ընթացքում, Գանձակում կարագ, յուղ, սրբիչ (որոշ տեղերում՝ նաև վարունգ ու ձու) էին տանում եկեղեցի և տալիս քահանային։ Վերջինս «լվանում» էր գրեթե բոլոր ծերունիների ոտքերը, իսկ կանանց ու երեխաների ձեռքերին օրհնված յուղ էր դնում և քսում աչքերին, ճակատներին ու մազերին։ Այն քսում էին նաև ընտանի կենդանիների և թռչունների հիվանդ տեղերին կամ էլ տուն էին տանում ու դնում յուղի կճուճների մեջ՝ դրանք մշտապես լիքը և առատ լինելու ակնկալիքով։ Կարագի մի մասը տալիս էին քահանային, որը նա օրհնում և բա-

ժանուկ էր ժողովրդին: Կարագը քսելու արարողության ժամանակ միշտ պահպանվում էր ավագության կարգը: Ջավախքում նախ և առաջ գյուղի հեղինակավոր կամ հարուստ տղամարդն էր մերկացնում ոտքը, որը քահանան լվանում և օրհնված յուղ էր քսում: Այնուհետև նա համբուրում էր խաչը՝ խաչհամբույրի համար կատարելով որոշակի վճարում: Ժամերգության ընթացքում մոմերը միտումնավոր հանգցնում էին, որի ժամանակ հաճախ կատակներ կամ չարաճճիություններ էին կատարվում: Քաղաքներում երիտասարդները «գաղտնի» համբուրում էին աղջիկներին, ինչպես նաև նրանց հանդերձները միմյանց ամրացնում ասեղներով:

Չինգչաբթի գիշերը դարբինները, լուռումունջ, երկաթե մատանիներ ու ապարանջաններ էին պատրաստում, որոնք հայտնի էին **ուրբաթարուր, ուրբաթառու, անժըմի** և այլ անուններով: Դրանք կանաչ կամ կարմիր թելերով կապում էին երեխաների ուսերին, թևերին, օրորոցին, որպեսզի անվնաս մնան չար աչքերից և մութ տեղերով անցնելիս՝ **«սատանաները նրանց չվնասեն»**:

Ավագ հինգչաբթին Չարքում համարվում էր ամենալավ և սուրբ ժամանակը, քանի որ հավատում էին այդ օրը ձեռնարկված յուրաքանչյուր գործի հաջողությանը: Այստեղ ևս պողպատից օղեր էին պատրաստում՝ չար աչքերից և զանազան հիվանդություններից ապահով մնալու նպատակով: Պատարագից հետո եկեղեցու դռան մոտ գտնվող քարերը գլորում էին, որպեսզի ցավն ու չոռը նրանց հետ միասին գլորվեն, հեռանան:

Լոռիում չորս մեխ էին պատրաստում ու պահում մինչև Կանաչ Կիրակի: Այդ ժամանակ ուլ էին մատաղ անում, որի ոսկորները՝ մորթու մեջ փաթաթելով, թաղում էին հողում: Նախօրոք պատրաստված մեխերը խփում էին դրա վրա, որպեսզի կարկուտ չգա և այգիները չվնասի:

Մուշում և Տարոնում, սովորաբար, կանեփով հաց էին թխում. հատկապես՝ նոր հանգուցյալ ունեցող ընտանիքներում: Քավորկինը, սանամայրը և խնամիները այդ հացերից **«յոթ ջուխտ ու թաք»** (15-ից մինչև 50-60 հատ) վերցրած, երեկոյան, այցելում էին նրանց տները և սգի մեջ գտնվող կանանց հետ միասին գնում եկեղեցի ու գերեզմանատուն: Ծիսական այդ մասունքներից նվիրում էին նաև քահանային ու ժամհարին: Չանգուցյալների շիրիմների վրա մոմեր վառելուց և գերեզմանները քահանայի կողմից օրհնելուց հետո՝ վերադառնում էին տները:

Ավագ Ուրբաթն առավելապես հայտնի էր **Սգի ուրբաթ**³⁷ անունով: Կենցաղում այն ուներ նաև **«Չարչարանց գիշեր»** կամ **«Տեր մեղայի գիշեր»** անվանաձևերը: Օ-

³⁷ Մեղրեցիներն այդ օրվան ասում էին՝ **«Սուգում ուրբաթ»**:

րվա գլխավոր արարողությունները դարձյալ կապված էին **ուրբաթարուրի** հետ: Դարբինները պողպատից **ուրբաթարուր-մատանիներ** էին պատրաստում, հավատալով, որ դրանց կրողները, հատկապես մանկահասակ աղջիկները, պիտի պաշտպանվեին քաջքերից, չար ուժերից և կայծակից: Նույն նպատակով, եկեղեցիներում, մայրերը տղա երեխաների մեջքերին բարդու պատկերներով կարմիր-կանաչ թելերով ուրբաթառուններ էին կապում: Սիսիանում մայրը փոքրիկի մեջքին կամ չուխայի վրա կարմիր, սպիտակ և կապույտ կտորներից խաչ էր կարում, որը դարձյալ **ուրբաթարուր** էր կոչվում:

Կանայք կար էին անում, որպեսզի **Յուդայի** աչքերը ծակեն, ծունր չէին դնում, որովհետև **Յուդան** գետնին էր և **Քրիստոսը`** խաչին, չէին խաչակնքում, որովհետև **Քրիստոսն`** ինքն էր խաչված: Փայտ չէին կտտրում, կանաչի չէին քաղում, գետինը չէին փորում, որպեսզի **Քրիստոսի** գերեզմանը չքանդվի: **Յուսները** չէին աշխատում, փայտ չէին տաշում, որովհետև **Քրիստոսի** խաչափայտն արդեն տաշել էին: **Դարբինները** չէին աշխատում, որովհետև մուրճով էին բևեռել **Տիրոջը**: Պարտքով դրամ չէին տալիս կամ առնում, որովհետև **Քրիստոսին** դրամի համար էին մատնել: **Ձու** էին ներկում, որպեսզի **Յուդայի** աչքը տրաքվի: **Բանջար** էին եփում, որ դրա ծակող զորությունը ոչնչանա, քանի որ **Քրիստոսին** նաև բանջարով էին ծեծել:

Ավագ ուրբաթի հետ կապված կային նաև շատ այլ արարողություններ, որոնք ևս առնչվում են մահացածների հիշատակի հետ: Սիսիանում այդ տարվա հանգուցյալ ունեցողները, ուրբաթ վաղ առավոտյան, ոսպով շորվա կամ սպաս-ապուր էին եփում և որպես հոգեբաժին` բաժանում հարևաններին, իսկ երեկոյան քահանան այցելում էր նրանց տները:

Լոռիում կանայք հատուկ բաղարջ հաց էին թխում տան յուրաքանչյուր անդամի հաշվարկով, ինչպես նաև բաժին էին հանում նոր մահացած հարազատներին: Այդ հացերից տալիս էին նաև հարևաններին ու աղքատներին: Ննջեցյալների համար թխված բաղարջները հայտնի էր նաև «**մեռելափայ**» անունով: Ջանգեզուրում, որպես սզի նշան, երեսները չէին լվանում, եկեղեցում ծունր չէին դնում, իսկ առավոտյան ժամերգությունից հետո գնում էին գերեզմանատուն և մոմեր վառում մահացածների շիրիմների վրա: Դարաբաղում կերակուր էին տանում գերեզմանատներ և եկեղեցիներ, ուր կատարվում էին հոգեհանգստյան արարողություններ:

Չավախքում մինչև ճաշ՝ «տոն» էին պահում, որից հետո «կանայք կար էին անում, տղամարդիկ՝ արոր «քշում», իսկ դարբինները՝ մեխ ծեծում, որպեսզի փորեին Հուդայի աչքերը»:

Նոր Նախիջևանում բավական տարածված էր այդ օրը Ձատկահաց՝ «պասքա» թխելու սովորույթը:

Չարչարանց վերջին՝ **շաբաթ** օրվա արարողությունները կապված էին Մեծ Ձատկի նախապատրաստության հետ: Մինչև երեկո շատերը ծոմ էին պահում: Ժամերգության ժամանակ, երբ քահանան ասում էր՝ «**առեք կերեք, այս է մարմինն իմ**» խոսքը, ներկաներն անմիջապես եկեղեցում ճաշակում էին կարմիր ձվերը:

Գանձակում քահանան այցելում էր իր ծխի բոլոր տները և օրհնում, որին վարձահատույց էին լինում գատկական ձվով, ցորենով, բրնձով կամ դրամով: Այդ պատարագը մեկն «**առած**» էր լինում, որն էլ քահանային ու տիրացուին իր տանն ընթրիքի էր հրավիրում: Այդ երեկո ձուկ ու փլավ էին եփում, իսկ կարմիր գույնով ներկված ձվերը անպայման պետք է շատ լինեն տոնական սեղանների:

Սյունիքում, չնայած եկեղեցում էր կատարվում Մեծ Պասը լուծելու արարողությունը, սակայն պասը վերջնական փակելու գործընթացը նշվում էր ընտանիքում, որտեղ գատկական կարմիր ձվերի և գինու հետ միասին ճաշակում էին նաև ձուկ, փլավ ու բազկաթան: Նշանված աղջիկները սկեսրանց կողմից հատուկ նվերների էին արժանանում:

Վարանդայում, վաղ առավոտյան, կանայք լվացք էին անում, լողանում և հագնում ամենագեղեցիկ տոնական զգեստը: Տանտիրուհիները փլավ և կարմիր ձվեր էին եփում: Այդ օրվա ընթրիքից հետո և հաջորդ օրը ձվախաղերով էին տարված ոչ միայն երեխաները, այլև՝ չափահասները:

Նոր Նախիջևանում շաբաթ օրը զբաղված էին ճրագալույսի ընթրիքի պատրաստությամբ, որը որոշակի նմանություն ուներ Ծննդյան ճրագալույսի ուտեստի հետ: Սովորության օրենքով, այդ պատարագը ևս «առնում» էին:

Ասում էին նաև, որ **Ջրօրհների պասը միշտ «ճրագի լույսով» է լուծվում, իսկ Ձատկինը՝ «արևի լույսով»:**



Աստծո որդու կրած քառասնամյա փորձությունը թող մարդ արարածին մտորելու ու խորհելու տեղիք տա, որ երկրային կյանքի իմաստը ոչ միայն նյութականով է պայմանավորված, այլև այն ոգեղենով, որը կիմաստավորի ապրած ու դեռ ապրելիք կյանքի մնացած օրերը: Թող ճշմարիտը, արդարը և ոգեղենը միշտ ուղեկից լինեն մարդ արարածին:

Իսկ ծիսական Ակլատիզը թող այսուհետ էլ ուրախացնի երեխաներին, և բոլոր բարի գործերի իրականացման ապավենը լինի:


³⁸ Ակլատիզներ. 20-րդ դ. վերջ / Լուսանկարը՝ Ս. Սեպետչյանի /

7. ԾԱՂԿԱԶԱՐԴ



39

40



Ծաղկազարդի տոնը նշվում է Մեծ Պասի նախավերջի կիրակի օրը: Քրիստոնեական ավանդույթով այն կապված է Հիսուսի՝ Երուսաղեմ այցելելու իրադարձության հետ, երբ ժողովուրդն Աստծո որդուն հանդիսավորությամբ դիմավորել է ձիթենու սրբազան ոստերով:

Ծաղկազարդը մինչև XIX դ. վերջերը և XX դ. սկզբները հայոց կենցաղում հայտնի էր բազում անվանումներով (*Ծառամուտ, Ծառկոտորունք, Ծռատոն, Ծռզարդար, Ծզարդար, Ջրիզարդար, Ջրրզարդար, Ջրռռզարթար, Ծառզարդուօր, Ջարդար, Ծառաբեր, ճորճարդոր, Ջարզարտուր, Հրռօխնեք* և այլն), որոնց մեջ առավել տարածված էր **Ծառզարդար** անվանաձևը:

Ավանդական այս տոնի շատ տարրեր նախաքրիստոնեական արմատներ ունեն և կապված են բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ:

Տոնի գլխավոր բաղադրիչը սրբազան ոստի (ձիթենու և հատկապես՝ ուռենու) հետ կապված ծիսաշարն է: Եկեղեցիները զարդարվում էին արմավենու ճյուղերով և ձիթենու ոստերով՝ ավելի իմաստալից և պատկերավոր դարձնելու **Հիսուսի մուտքը Երուսաղեմ:**

Անցյալում ձիթենին և արմավենին համարվում էին խաղաղության ու փառքի խորհրդանիշներ: Ձիթենու պսակով էին Հունաստանում զարդարել օլիմպիական

³⁹ **Ծաղկազարդ. Հիսուսի մուտքը Երուսաղեմ**

⁴⁰ **Ճենջեխ-ճլորթին Սյունիքում.** / 19-րդ դ. վերջ/

հերոսներին, իսկ արմավենին՝ ձոնել արեգակին: Հայոց ավանդական կենցաղում նմանատիպ հատկություններ էին վերագրվել մասնավորապես սոսիներին և ուռենիներին:

Օրհնված ոստերի և ճյուղերի մեջ ժողովուրդը տեսնում էր խորհրդավոր ուժ, որն ուներ առատ բերք ու բարիք շնորհելու հմայական զորություն:

Այդ ճյուղերը եկեղեցում օրհնելու էին տանում մեծ մասամբ երիտասարդները (գլխավորապես՝ նորապսակները): Եկեղեցիներում տեղադրում էին ուռենու մեծ ճյուղեր, որոնց վրա մոմեր էին ամրացնում ու դրանց օրհնության արարողության ավարտից հետո, նախօրոք՝ մոմերը հանգցնելով, սրբազան ճյուղերը կտրատում և բաժանում էին միմյանց միջև: Արարողության ավարտից հետո, գեղանի ոստերով վերադառնում էին տները:

Հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար, զանգերի ղողանջների ուղեկցությամբ, եկեղեցի էին գնում բոլորը՝ մեծ ու փոքր, կին թե տղամարդ: Հատկապես, դա կանանց և աղջիկների տոնն էր, որոնք աշխատում էին էլ ավելի գեղեկանալ: Մեղրիում, օրինակ, այն մասնավորապես աղջիկների ամենասիրելի տոնն էր, որը հայտնի էր *Հրոջխներք (Ուռիների օրհներք)* անվամբ:

Ծաղկազարդը կարևոր միջոց էր աղջիկների ու տղաների ծանոթությունների և սիրային խոստովանությունների համար՝ չնայած դրանց խաղային դրսևորումներին: Պատահում էին նաև այդ կարգի լուրջ արարողություններ, մինչև իսկ՝ նշանադրություններ: Վարանդայում, նախապես առնելով աղջկա ծնողների համաձայնությունը, տղայի մայրը, մերձավոր ազգականուհիներից մեկի հետ, հենց եկեղեցում, **Ծաղկազարդի ծառի** վրա եղած մոմերից վառելով մի խաչածև մոմ, որի վրա արծաթե մատանի էր անցկացված, լռությամբ տալիս էր նախընտրած աղջկան և գլխին՝ կարմիր գլխաշոր գցում: Դա նշանակում էր, որ աղջիկն ուներ **նշանվածի** կարգավիճակ:

Աղջիկները եկեղեցի էին այցելում մայրերի հետ, իսկ նշանվածները կրում էին գլխաշոր, որպեսզի առանձնանան չամուսնացածներից: Նշանվածները նաև հատուկ զարդարված մոմեր էին վերցնում, որոնք վառում էին եկեղեցում դրված Ծաղկազարդի ծառի մոմերից:

Ուշագրավ էր այդ ճյուղերն օրհնելու արարողությունը մուսալեռցիների շրջանում: Ավետարանն ընթերցելիս, երբ քահանան անդրադառնում էր **Ձիթենյաց լեռից Քրիստոսի համբարձման իրադարձությանը**, հատկապես, սրբազան ծառի ճյուղերի՝ Աստժո որդու հետ միասին երկինք տեղափոխվելուն կան

համբարձվելուն, ներկաները, մասնավորապես աղջիկները, վերցնելով դրանք, տանում էին տուն ու կախում հայելիների շուրջ: Հավատում էին, որ դրանով օրհնված ոստերի զորությունը կկրկնապատկվի:

Բազմազան էին սրբազան ճյուղերի հետ կապված հավատալիքները: Մարդիկ հավատում էին այդ ճյուղի հմայական ուժին: Այդ իսկ պատճառով դրանք պահվում էին յուղի կճուճներում, որպեսզի յուղն անպակաս լինի, դնում էին թուխսերի տակ՝ շատ ճտեր ունենալու հավատով: Նույն նպատակով, Նոր Նախիջևանում հավերին ու ճտերին անցկացնում էին ուռենու օրհնված ճյուղերից պատրաստված օղակների միջով: Սրբազան ոստը դնում էին հացի շտեմարաններում, որ հացն առատ լինի, այդ ճյուղերով հորերն էին շինում և պահում, որպեսզի ցորենի հորեր շատ ունենան: Նման հավատքով, ճյուղերը դնում էին նաև խնոցիների մեջ: Վարանդայում կանայք այդ ճյուղերից պահում էին, որպեսզի խնոցի հարելիս դրա անցքից (պոնքից) մտցնեն ստուգելու կարագը եղե՞լ է, թե՞ ոչ: Ի դեպ, այդ ճյուղը կոչվում էր **«խնոցեսի»**:

Ճյուղերով հարվածում էին միմյանց՝ հիվանդությունները վերացնելու նպատակով:

Օրհնված ճյուղերի միջոցով փորձում էին կանխել նաև տարերային աղետները: Նոր Նախիջևանում, դրանք միմյանց վրա խաչաձև դնելով ու համբուրելով, գցում էին կրակի մեջ ու այրում, հավատալով, որ կդադարեն քամիներն ու փոթորիկները:

Դրանք պահում էին նաև որպես վառելիք՝ զատկական կերակուրները պատրաստելու նպատակով:

Եկեղեցական արարողությունից հետո գնում էին գերեզմանատներ և մոմեր վառում մերձավորների շիրիմների վրա՝ իրենց հետ վերցնելով նաև ծիսական ուտեստի որոշակի պաշար:

Ծաղկազարդին աղջիկ նշանելը, նշանվածներին գունազարդ գլխաշորեր նվիրելը, նորահարսներին՝ ծնողների տուն գնալու ազատության շնորհունը և նմանատիպ այլ ազատություններն ու նվիրատվություններն առնչվում էին տոնի ժողովրդական բնույթի հետ: Ժամերգությունից հետո նորահարսները հենց եկեղեցուց դարձ էին գնում հայրական տուն և այնտեղ մնում մինչև Ջատիկ: Այդ սովորույթը պարտադիր երանգներ ուներ գրեթե ամենուր և եթե փորձեին դարձ գնալ Ծաղկազարդից առաջ՝ համընդհանուր բամբասանքի կարժանանային: Նորահարսի՝ ծնողների տուն դարձ գնալու սովորույթն այնպիսի խստությամբ էր դրված, որ դժ-

բախտ դեպքերում անգամ (մահ, հիվանդություն և այլն) նա ստիպված էր լինում գնալ հայրական տուն միայն գիշերը և նույն ժամանակ էլ վերադառնալ:

Պատանհների շրջանում հատկապես տարածված էին կարկաչա և ճոճանակ խաղերը: Եկեղեցում, երբ քահանան կատարում էր «Փառք ի բարձունս» արարողությունը, Վաղարշապատի և Տավուշի գյուղերում նրանք անմիջապես սկսում էին ճոճանակի կամ ճեռի ավանդական խաղը, իսկ ժամերգությունից հետո, երգ-մաղթանքներով, խմբեր կազմած տներն էին այցելում՝ նվերներ (հատկապես՝ գալիք Ջատկի համար ձվեր) ստանալու ակնկալիքով: Կարկաչայի երգերի բովանդակությունը ևս հիմնականում Ջատկի համար ձու նվիրողների գովքն էր, և «անեծքը»՝ դրանք մերժողներին: Վաղարշապատում պատանհներն այդ այցելության ժամանակ, ձեռներին ուռեցնու օղակաձև ճյուղերը բռնած, երգում էին հետևյալը.

Անակ անակ ճոճանակ,
Աստծու դուռն բաց անեն,
Մենեն մէջը ժամ անեն,
Դուրս գամ պատարագ անեն,
Ընկերս ընկաւ ծովը՝
Ծովը ծիրանի դառաւ,
Պատերը հայլի դառաւ..

Ծաղկագարդի երեկոյան տեղի էր ունենում եկեղեցական նշանավոր արարողություն ևս, որը հայտնի էր «Դռնբացեր» անունով:

*Ծաղկագարդի սրբազան ոստր թող նրջանկություն, առատություն, իմաստնություն
և առողջություն պարզևի բոլոր ազնվաբարո մարդկանց:*

8. ՋԱՏԻԿ

41



Հայոց տոնածի- սական համա- կարգում պատվավոր տեղ զբաղեցրած տաղավարային այս տոնը հայտնի է **Ձատիկ** կամ **Հարություն** (լրիվ ձևը՝ *Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*) անվանաձևերով:

«**Հարությունը**»՝ Աստծո որդու հետ կատարված իրադարձության ուղղակի արտահայտությունն է: Ինչ վերաբերում է «**զատիկ**» բառին, առ այսօր դրա շուրջ գոյություն ունեն տարբեր մեկնաբանություններ: Որոշ ուսումնասիրողներ նմանություն են տեսնում հրեական «**Պասեքի**» հետ («պասեք» նշանակում է «ելք»): Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Հին Կտակարանում գործածվող «պասեքը» թարգմանվել է «զատիկ»՝ «զատնուլ» բառից, որը նշանակում է «բաժանվել» և համանիշն է «ելք» բառի: Ինչպես հրեաները Պասեքի տոնի մեջ հիշատակում են եգիպտական լծից **դուրս գալը՝ ելքը**, նույնպես և քրիստոնյաները, Հիսուսի չարչարանքների արդյունքով և նրա հարությանբ հիշատակում են մարդկանց՝ սատանայի իշխանությունից փրկվելը և երկնքի արքայությանն արժանի դառնալը: Առանձին հետազոտողներ գտնում են, որ «զատիկ» բառն ունի պարսկական ծագում, բացատրելով որպես՝ «զոհել» կամ «զենուլ»: Ոմանք համեմատելով հրեական «Պասքայի» հետ, այդ բառի մեջ տեսնում են «զատ» բառի իմաստը, իբր՝ «զատում» կամ «անցք»: Մ. Օրմանյանը, ընդունելով այս վերջին իմաստը, դրա մեջ նաև տեսնում է զարնանային գիշերահավասարին նվիրված և հեթանոսական ժամանակներից մնացած տոնի ակնարկ, որը կատարվել է եղանակների զատվելու ժամանակ: Զուգահեռներ անցկացնելով հրեական Պասքայի հետ, նա ընդունում է այդ բառի

⁴¹ **Ձատկական ձվեր**

հայկական ծագումը: Ղ. Ալիշանը այն նույնացնում է հնդկական **Սատրի**, եգիպտական **Սադի**, վրացական **Ջադի**, ինչպես նաև հունական **Ջեթես** աստվածների հետ, միաժամանակ նշելով, որ արևելքում նաև գոյություն ունեն **Ջատիկ** անունով «Արդարության աստված»:

«Ջատիկ» բառը հայոց կենցաղում ունեն նաև «տոն» կամ «ուրախություն» իմաստը: Ժողովուրդը դարեր շարունակ **Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հարության** տաղավարային գլխավոր տոները հաճախ տարբերակել է՝ **Փոքր Ջատիկ** և **Մեծ Ջատիկ** անվանումներով: Շատ բնակավայրերում «գատիկ» բառն ընկալվում էր որպես «տոն» բառի համանիշ արտահայտություն (օրինակ՝ **Ս. Աստվածածնի գատիկ**, **Ս. Խաչի գատիկ**, **Վարդավառի գատիկ** և այլն):

Քրիստոսի տառապանքների, մահվան ու հարության հետ կապված այս տոնն իրականում շատ ավելի խոր արմատներ ունի: Այն իր նախատիպերն է ունեցել հեթանոսական ժամանակաշրջանի ծեսերում, որոնք առնչվել են բնության և կյանքի հարության, զարթոնքի գաղափարների հետ: Այս առումով ուշագրավ են Ն. Ադոնցի և Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները, որոնք զուգահեռներ են անցկացնում տոնի մինչքրիստոնեական և քրիստոնեական ձևերի միջև՝ նկատի ունենալով այդ հանդիսությունների բովանակությունը և կատարման ժամանակը:

Վերլուծելով շուներական գաղափարագրերը, որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ «գատիկը» ոչ թե մեկ արմատական բառ է, այլ՝ ժամանակի ընթացքում փոփոխված լեզվական բաղադրություն, վերացման հետևանքով սղված **գա-տի-կա** կամ **գա-տի-կաան** համադրանքի՝ «**լուսնից ծնված մանուկ**» իմաստից: Ըստ Ե. Մոնջյանի, այն տիեզերական արարչագործության արտահայտություն է, որն անբաժանելի է բնության ուժերի անձնավորման հնագույն պատկերացումներից:

Ինչ վերաբերում է Ջատիկի տոնակատարության ժամկետին, այն սկզբնական շրջանում տոնվում էր հրեական Պասեքի օրը: Նիկիայի տիեզերական ժողովում (մ.թ. 325թ.) որոշում ընդունվեց Ջատիկը կատարել կիրակի օրը՝ դարձնելով այն շարժական տոն: Այդ որոշմամբ առ այսօր Ջատիկը նշվում է՝ **գարնան գիշերհավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը** և տոնվում մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ շարժվելով 35 օրերի միջև:

Ըստ հայ եկեղեցու Առաքելական կանոնների 8-րդ հոդվածի, պետք է «**քառասուն օր պաս պահվի և ապա տոնվի Ջատիկը կամ Քրիստոսի Հարությունը**»:

Ձատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում էին շաբաթ և ավարտվում երկուշաբթի օրերին: Շաբաթ երեկոյան՝ **ճրագալոյցին** կամ **ճրագալույսին**, կատարվում էր մի ծես, որով վերջ էր դրվում յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանին: Եկեղեցում կատարվում էր պատարագ՝ նվիրված Քրիստոսի հարությանը: Յուրաքանչյուրը մոմ էր վառում և ճաշակում իր հետ վերցրած ձուն, դրանով իսկ, հրաժեշտ տալով պահքին: Պասը լուծելու արարողությունը կոչվում էր **«թաթախում»**, իսկ ժամանակը՝ **«թաթախման գիշեր»**: Պատարագի ժամանակ մարդիկ գավիթներում կանգնած մաղերը պահում էին երեսներին և դրանց միջով նայում արեգակին՝ հավատալով, որ կտեսնեն հարություն առած Քրիստոսին:

Շաբաթ մայրամուտին երդիկից իջեցնում էին Մեծ Պասի յոթ շաբաթները խորհրդանշող և պասը չպահողներին «պատժող» Ակլատիզը՝ վերջին փետուրով:

Կիրակի առավոտյան պատարագ էր մատուցվում, որի ընթացքում հավատացյալները սուրբ հաղորդություն էին ստանում: Այդ ժամանակ էլ կատարվում էր զատկական մատաղի հանդիսությունը, որը հիմնականում հայտնի էր **«ախառ»** անունով: Մատաղացուն սովորաբար եզ էր, արջառ կամ երինջ, որոնք գնվում էին գյուղի կամ քաղաքի համայնքի կողմից կամավոր հիմունքներով հավաքված դրամական միջոցներով: Այն մորթում էին եկեղեցու գավթում, ուր պատարագից հետո յուրաքանչյուրը ստանում էր իր բաժինը, որը կամ տեղում էին ճաշակում, կամ՝ տներում: Երբեմն մատաղը հում վիճակում բաժանում էին համայնքի ծխերին՝ մինչ պատարագի արարողությունը: Մատաղի համար միջոցներ (դրանով կամ բնամթերքով) հավաքողները, ինչպես նաև մատաղացուներ մորթողները պետք է լինեին համայնքում հարգված մարդիկ: Քաղաքային բնակավայրերում (օրինակ՝ Շուշիում) զատկական մատաղից տալիս էին միայն նրանց, ովքեր այդ նպատակով կատարած ներդրումների դիմաց, նախօրոք, հատուկ կտրոններ էին ստացել: Ինչ վերաբերում է գյուղերին, մատաղը բաժանվում էր հավասարաչափ, առանց որևէ խտրականության:

Ձատկական մատաղներից էին նաև **«թրքատարուկը»** և **«թափանը»**: «Թրքատարուկ» էր կոչվում Լոռվա որոշ բնակավայրերում՝ համայնքի կողմից հավաքված դրանով կազմակերպված խոզի մատաղը: Եփելով եկեղեցու դռան մոտ և բաժանելով համայնքի անդամներին, լոռեցիները դրանով ուզում էին ցույց տալ՝ **«թուրքերի դեմ տարած մեծ հաղթանակը»**:

«Թափան» կոչվում էր մատաղացու եզան կամ կովի ստամոքսը: «Թափան» մատաղի սովորույթը հատկապես տարածված էր Վայոց Ձորի խաչիկ գյուղի

բնակիչների շրջանում: Այստեղ զատկական այդ մատաղին այնքան մեծ նշանակություն էր տրվում, որ երբեմն երեցփոխն էր վերցնում այն կամ տալիս էր իր նախընտրած մարդուն: Բախտավոր էր համարվում այն տունը, որը ձեռք էր բերել «թափանից» ինչ-որ մասունք: Հավատում էին, որ եթե այդ մատաղից սերեք (կճուճի բերանացու) պատրաստեն, յուրի քանակությունը կշատանա և ընդհակառակը՝ մյուսներինը կպակասի: Որպեսզի այդպիսի **զրկանքներ** չլինեն, և ոչ ոք ի վնաս մյուսների՝ «չհարստանա», գյուղի բանիմաց մարդկանց խորհրդով «թափանը» **հավասար, քրիստոնեաբար** էին բաժանում:

Բավական տարածված էին զատկական ուխտագնացությունները: Ջնաբերողիներն այդ օրը (**«Ձաղիգ»**-ին) ուխտի էին գնում իրենց գլխավոր սրբավայրերը՝ Ս. Հովհաննես և Ս. Հակոբ մատուռներն ու Ս. Թովմաս Առաքյալի վանքը: Երեխաներն ու պատանիները գրեթե ամբողջ օրն անց էին կացնում ձվախաղերով:

Ձուն և դրանից պատրաստված կերակուրները կենտրոնական տեղ էին զբաղեցնում զատկական ուտեստի ընդհանուր համալիրում: Տարածված էին նաև այնպիսի կերակրատեսակներ, ինչպիսիք էին՝ ածիկը, ջլբուրը, եղինջապուրը, թանապուրը, չորաթանը, տապակած բանջարը, նվիկը, չամչով փլավը, ինչպես նաև՝ փոլածով, ձկով և գիրայով պատրաստված փլավները, որոնք հատկապես շատ սիրված էին հին երևանցիների կողմից:

Ջատկի ծիսաշարի գլխավոր բաղադրիչներից էին **շնորհավորական փոխայցելությունները և նվիրատվությունները**: Այդ արարողությունները սկսվում էին ժամերգության ավարտից, մատաղի հանդիսությունից կամ քահանայի կողմից ծխերն օրհնելուց հետո: Քահանան տներն օրհնում էր՝ խոնջա-մատուցարանի վրա դնելով թթխմոր, աղ, ջուր, խունկ, հացահատիկ և հատկապես՝ ձու:

Գոյություն ուներ զատկական **շնորհավորական մաղթանքի որոշակի ձև**: Միմյանց **շնորհավորում էին հետևյալ բարենաղթանքով՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց»,** իսկ պատասխանը լինում էր՝ **«Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի»**: Միաժամանակ իրար ձեռք էին սեղմում ու համբուրվում:

Առավոտյան գնում էին նախ՝ տանուտերին ու քահանային **շնորհավորելու**, ապա՝ բարեկամներին. այդ առիթով հիմնականում օղի էին վերցնում:

Նշանված երիտասարդները ներկած ձու էին նվիրում հարսնացուներին: Սյունիքում այդ երիտասարդների ընտանիքներից մի գառ (վզից մի քանի կարմիր ձվեր կապած) մրգերով և օղիով ուղարկում էին հարսնացուների տները: Փեսացուի ազգականների կողմից հարսնացուին նվերներ տալու սովորույթը հայտնի էր **«փայ»**

անունով: Ջատկին սանահերը գնում էր քավորի տուն՝ նրա տոնը շնորհավորելու: Բասենում, հենց եկեղեցուն էլ կատարվում էր նվիրատվական ծեսը: Այստեղ մոմ էր մատուցում քավորկինը՝ սանամորը, սկեսուրը՝ հարսնացուին: Հին Ջուղայում Ջատկի առավոտյան, երբ եկեղեցուն սկսվում էր «Փառք ի բարձունս» արարողությունը, սանամայրը կնքահորը նվիրում էր 20-30 կարմիր ներկած ձու, մի խաչաձև մոմ՝ կոթն ամրացված ձվի վրա ու խաչի թևերը վառած:

Ջատկի տարածվածության գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ այդ տոնը մասնակիցներին հնարավորություն էր ընձեռում առավել շփվելու միմյանց՝ լինի դա ազգակցական, դրացիական, համայնական, թե զուտ երիտասարդության մերձեցման նկատառումներով:

Ձուն ամենակարևոր տեղն էր գրավում զատկական տոնում, քանի որ այն անմիջականորեն առնչվում էր տոնի ծիսական գաղափարախոսության հետ: Ձուն այստեղ ամենազանգվածային, ամենասիրված խաղի առարկան էր և նվիրատվության գլխավոր օբյեկտը: Այն մեծամասամբ ներկում էին ավագ շաբաթ օրը կամ կիրակի վաղ առավոտյան, իսկ երբեմն՝ նաև ավագ չորեքշաբթի և ուրբաթ: Հիմնականում ներկում էին կարմիր, ինչպես նաև դեղին, կանաչ, կապույտ և այլ գույներով: Ձուն հաճախ եփում էին պղնձե ամանի մեջ, նախօրոք դրա մեջ դնելով սոխի կլեպներ: Եփվելու ընթացքում, թելերով՝ կապին յուրատիպ ձև տալով, ձուն ծաղկանման գեղեցիկ նախշեր էր ստանում:

Ջանգեգուրում՝ կիրակի լուսաբացին, երիտասարդներն ու երեխաները համբուրում էին Ավետարանը և մեկական ներկած ձու նվիրում քահանային: Վերջինս այդ ձվերից տալիս էր տիրացուին և գյուղի մեծամեծներին, որոնք էլ ճաշակում էին հենց եկեղեցուն:

Անցյալում հայերը ձուն ներկել են նաև որդան կարմիրով:

Ջատկական ձվերը սովորաբար մեծ քանակությամբ էին եփում՝ տոնին հաջորդող օրերին դարձյալ հյուրասիրելու, նվիրելու և ձվախաղեր կազմակերպելու նպատակով: Պատահական չէր ժողովրդի մեջ տարածված այն կարծիքը, թե՛ «զատկական ձուն երկար է դիմանում»:

Գրիգոր Տաթևացին ձուն կարմիր ներկելու մասին տալիս էր հետևյալ բացատրությունը. «Ջատկին,- ասում է նա,- կարմիր ձու ենք ներկում և նրա խորհուրդն այն է, որ ձուն օրինակն է աշխարհի և, ինչպես որ իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման էր երկնքին, մզղաձևը՝ օդի և սպիտակուցը՝ ջրի, դեղինն էլ՝ երկիրն է:

Իսկ կարմիր ներկը նշանակում է, թե ողջ աշխարհը գնվեց Քրիստոսի արյունով: Եվ մենք կարմիր ձուռն մեր ձեռների մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկութիւնը:

ուրը: Սրա համար է, որ նախ՝ կարմիր ձուռն ենք ուտում և հետո՝ ուրիշ կերակուրներ»:

Այսպիսով, ձուռն հայոց ավանդական կենցաղում հանդիսացել է գարնան և պտղաբերության խորհրդանիշը: Ձուռն հարության խորհրդանիշն էր նաև այլէթնիկ շատ հանրությունների կրոններում, քանի որ իր մեջ պարունակում էր կյանքի նորացման, վերածննդի գաղափարը: Հետևաբար, ձուռն, որպես նոր կյանքի խորհրդանիշ, շատ ավելի հին արմատներ ունի և առնչվում է գարնան, բնության զարթոնքն արտացոլող հավատալիքների հետ:

Անցյալում ձուռն գործածել են նաև պարսիկները: Պարսիկ նախարարները գարնանային գիշերհավասարից առաջ տոնական շքեղ հանդերձանքով այցելում և շնորհավորում էին **շահին**՝ միաժամանակ նրանից նվեր ստանում՝ ոսկե գեղազարդ ձվեր: Դրանից հետո նախարարներն միմյանց կարմիր ձվեր էին ընծայում: Մինչև **Պարսից շահի** իշխանության անկումը, Նովրուզի առիթով, միապետն իր նախարարներին հաճախ ոսկիներ էր նվիրում: Հայտնի է նաև, որ հին հույները՝ **սրբվելու և մաքրվելու** նպատակով, նույնպես ձվեր են նվիրել իրենց աստվածներին: Հրեաների շրջանում ևս գոյություն է ունեցել նմանատիպ սովորույթ:

Ջատկական ձուռն, քրիստոնեության մուտքից հետո, դարձավ խորհրդանիշն այն ժայռե գերեզմանի, որտեղից Քրիստոսը հարություն առավ, իսկ կարմիր գույնը խորհրդանշում էր Աստծո որդու թափած արյունը:

Տարածված էին բազում ավանդազրույցներ՝ կապված զատկական ձուռն ներկելու սովորույթի հետ: Դրանցից մեկի համաձայն՝ Մարիամ Մագթաղենացին՝ Ավետարանը քարոզելու նպատակով, մեկնում է Հռոմ և ներկայանում Տիբերիոս կայսրին: Վերջինիս նվիրելով կարմիր ձուռն՝ Մարիամն ասում է. **«Քրիստոս յարեալ ի մեռելոց»** և ապա սկսում Սուրբ Գրքի քարոզչությունը: Ըստ մեկ այլ ավանդազրույցի, Քրիստոսին հարվածելու նպատակով, մանրավաճառները փչացած ձվեր էին բաժանել երեխաներին: Սակայն նետված ձվերը առանց Քրիստոսին դիպչելու

անմիջապես ետ էին մղվել՝ առավել թարմացած և կարմիր գույն ստացած: Ի հիշատակ այս իրադարձության, ժողովուրդը Ջատկին առավելապես կարմիր ձվեր է ներկել:

Կենցաղում մեծ տարածում ունեին զատկական ձվախաղերը: Ջատկին ձու էին կռվեցնում գրեթե բոլորը, սակայն նրա ամենաակտիվ մասնակիցները երեխաներն էին: Ձուն կռվեցնում էին երկու կողմերով: Նախքան կռվեցնելը, ձվերը ատամներից թեթևակի խփելով, ստուգում էին դրանց ամրությունը: Հաղթող էր համարվում նա, ում ձուն ջարդում էր հակառակորդինը:

Կային ձվախաղերի տասնյակ ձևեր: Այդ խաղերից ամենատարածվածը **ծուկոտրոցին** էր, բայց պահպանվել էին նաև՝ **ծուգլորիկը**, **ծվարշավը**, **ծուպտոցին** և **ծուսեղմոցին**: Խաղեր էին կազմակերպում նաև **ծուն գլորելու**, **նշան դնելու**, **թաքցնելու** և այլ միջոցներով:

Լոռի-Գուգարքում այդ ձվախաղերը կոչվում էին «**կրկտանուկի**» (կամ՝ «**ծվի կրկտի**») և «**թուլանուկի**» (կամ՝ **թուլանկի**):

Չավախքում, մինչև Ջատիկը շնորհավորելուց հետո, երեխաներն ու երիտասարդները հավաքվում էին տանիքների վրա և ձու կռվեցնում:

Չվախաղերը և ձվի հետ կապված սովորույթներն այնքան շատ էին տարածված ու սիրված, որ շատ հաճախ Ջատիկը կենցաղում ընկալվում էր որպես **ծու ներկելու կամ ձու խաղալու տոն**:

Տարածված խաղերից էր նաև **գոտի լախտին**:

Վաղարշապատի գյուղերում, Ջատկի կիրակի օրը, տղաների խմբերը զատկական երգերի ուղեկցությամբ տնետուն այցելելով, ձվեր էին հավաքում: Այդ երգերի բովանդակությունը Քրիստոսի և Տիրամոր փառաբանությունն էր՝ նրանց օրհնանքը ստանալու ակնկալիքով:

Չանգեզուրում, երբ քահանան «**այսօր յարեավ ի մեռելոց**» շարականն էր երգում, երեխաները ճռռան էին խաղում: Մեծ ու փոքր, տղամարդ և կին զուռնահողի ուղեկցությամբ երգում էին, պարում, երիտասարդները կոխ էին բռնում: Լոռիում ամեն թաղ իր համար փահլևան էր ընտրում, որոնք նաև կոխի մրցույթներ էին կազմակերպում: Յուրաքանչյուրը, սովորաբար, խաղում էր իր հասակակցի հետ:

Անցյալում Ջատիկն աչքի էր ընկնում իր տոնածիսական հատուկ երգերով, պարերով (**Յալալի**, **Յալի**, **Ռաֆայելի**, **Կտրուկ** և այլն), ավանդազրույցներով, առածներով, հանելուկներով, որոնք հետագայում մոռացության են մատնվել:

Ավանդական կենցաղում բավական տարածված էր զատկական մեռելոցի հետ կապված ծիսաշարը, որը գրեթե ամենուր, աննշան բացառությամբ, նշվում էր տոնի հաջորդ՝ երկուշաբթի օրը: Համշենում, օրինակ, թեև մեռելոցի հիմնական օրը երկուշաբթին էր, սակայն այստեղ ամեն գյուղ իր ընտրած օրն ուներ, որը ժամկետային առումով չէր անցնում Նոր Կիրակիից: Վատ եղանակների պատճառով երբեմն այդ ժամկետն էլ էր խախտվում:

Ջատկական ուտեստի (ծուկ, փլավ, տապակած կարտոֆիլ, մեղր, մրգեր, գինի) որոշակի պաշար վերցրած, մարդիկ գնում էին գերեզմանատներ, ուր հին ու նոր հանգուցյալների շիրիմները քահանայի կողմից օրհնելուց հետո մերձավորներով ճաշակում էին: Իրենց հետ տարած կերակուրները հաճախ միացնում էին և ծիսական այդ սեղաններին հրավիրում քահանային ու աղքատներին: Սովորաբար, նախ՝ տղամարդիկ էին ուտում, հետո՝ կանայք, իսկ մնացորդը, որպես հոգեբաժին, թողնում էին գերեզմաններում կամ՝ բաժանում մուրացկաններին:

Վասպուրականում Ջատկի մեռելոցին (ինչպես նաև **Ավագ ուրբաթ** օրը) հատուկ հաց էին թխում և բաժանում աղքատներին:

Ջատկական ծիսաշարում տարածված էին հնայական բնույթի հավատալիքները: Ասում էին, որ Ջատկի օրը միշտ բախտ են բաժանում և ով որ ցերեկը քնի, նա կգրկվի իր բաժին բախտից: Հավատում էին նաև, որ այդ օրը ծնված երեխան իմաստուն է լինելու և իր եղունգին նայելով կարող է գուշակություններ անել: Ջավախքում, Ջատկի գիշերը ծնված երեխային եղունգով գուշակելու (**եղունկաշելու**) շնորհ վերագրելով, հայրն իսկույն գառ էր մատաղ անում, որի աջ թիակի ոսկորը պահում էին: Համոզված էին, որ նորածինը երբ մեծանա, այդ թիակի միջոցով և իր աջ ձեռքի բութ մատի եղունգին նայելով, կկարողանա գտնել կորած կամ գողացված իրերը:

Պահպանվել էր նաև այն հավատը, որ կիրակի վաղ առավոտյան բոլոր նահատակների վրա լույս է իջնում և այդ իսկ պատճառով, մոմեր էին վառում գերեզմանների վրա:

Ջատկից մինչև Համբարձում, երեկոները, երբ լսվում էին եկեղեցիների զանգերը, կար անելն արգելվում էր, հակառակ դեպքում՝ **հավկուր կլինեն**:

Ջատկին գերդաստանի մեծերը չէին քնում, որպեսզի **անծրևաջրերը կալերը չքշեն**: Հաջորդ երեքշաբթի՝ կիրակի էին պահում, որը կոչվում էր «**կարկտի հումքի**»՝ արտերն ու ցանքսերն աղետի վնասներից պաշտպանելու նպատակով: Չորեքշաբթի օրն էլ «**մկան հումքի**» կամ **տոն** էին պահում, որպեսզի կրծողներն ար-


տերը չկտրատեն: Հինգշաբթին՝ «**ցեցի հունքին**» էր, որն առավելապես կանայք էին նշում, որ ցեցերը չուտեն թելերն ու բրոյա գործվածքները:

Ազավոր կանայք տներից դուրս չէին գալիս, **արևի երես չէին տեսնում, քանի դեռ չէր անցնում Հարության տոնի խթումը:**

Ուշագրավ է նորնախիջևանցիների կենցաղում արմատավորված և զատկական տոնի հետ առնչվող այն գեղեցիկ ծեսը, որը կապված է հայ էթնոսի ներէթնիկ այդ խմբի պատմական հիշողության հետ: Ձատկին, երբ ծյունը հալվում ու հողը տաքանում, կանաչը ծլում և երևում էր «**Ձատիկ**» կոչված կարմիր միջատը, նորնախիջևանցիները դնում էին այն իրենց ավի մեջ և հարցնում. «**Խռիմի ճանքան ո՞րն է**» («**Ղրիմի ճանապարհը ո՞րն է**»): Այս սովորույթն իր մեջ որոշակի խորհուրդ ունի: Հայրենաբաղձ գաղթականը՝ կորցրած հայրենիքի եզերքը վերագտնելու հույսով է դիմում գարնան ավետաբեր «Ձատիկ»-ին: «Լավատեսության» ոչ մի հույս չներշնչող «Ձատիկ»-ը խուճապահար փախչում է՝ թողնելով նրան «անպատասխան»: Հուսավառ գաղթականը, սակայն, ամեն տարի նորից է սպասում «Ձատիկ»-ի «վերադարձին»՝ իրեն հուզող հարցի պատասխանը ստանալու ակնկալիքով:

«Խռիմ աղասիի» (Ղրիմ թերակղզու) մասին հայ գաղթականների տոնական համալիրում շատ քիչ հիշողություններ են պահպանվել, որոնց մեջ, սակայն, ամենից տարածվածը նախկին հայրենիքի՝ Ղրիմի ճանապարհի վերաբերյալ «Ձատիկ»-ից հարց ու փորձ անելու գեղեցիկ ծեսն է:

⁴² «Ձատիկ»
⁴³ Ձատիկ / Ղրիմի ճանապարհը / լուսանկարը՝ Ս. Սեպետյանի /






Աստծո որդու Հարության և բնության վերագարթոնքի օրինակով և խորհրդով թող մարդկանց սրտերն ու հոգիները ևս վերակենդանանան, ջերմանան: Թող «Չատիկը» իր ծխական ուժով հազարավոր հայ գաղթականների այսօր էլ ցույց տա վերադարձի ճանապարհ՝ դեպի հայրենի բնօրրան:

9. ՀԱՄԲԱՐԶՈՒՄ

44



45



46



Համբարձման տոնը, ըստ եկեղեցական ծիսակարգի, խորհրդանշում է Չիթենյաց (այժմ` Համբարձման) սրբազան լեռան գագաթից Հիսուս Քրիստոսի համբարձվելու, Հայր Աստծո մոտ **բարձրանալու** հիշատակը: Այն նշվում է Քրիստոսի Հարության (Մեծ Ձատիկ) տոնից քառասուն օր հետո, հինգշաբթի օրը:

Համբարձման տոնի կենցաղային դրսևորումները հիմք են տալիս ենթադրելու, որ այն ծագմամբ շատ ավելի հին է և արմատները պետք է փնտրել մարդկային պատմության խորքերում: Համբարձումն իր մեջ պարունակում է բնության վերագարթոնքը խորհրդանշող հնայական բնույթի հավատալիքների մեծ ծիսափունջ: Տոնի ժողովրդական ծիսաշարը որոշակի աղերսներ ունի Աստղիկ և Անահիտ դիցուհիների պաշտամունքի հետ, որոնք անձնավորում են բնության զարթոնքը, ջրային տարերքը, սերն ու պտղաբերությունը:

Տոնն աչքի էր ընկնում հավատալիքների և գուշակությունների բազմազանությամբ:

⁴⁴ Ծաղկախաչով Համբարձման փարչ / Վասպուրական, 20-րդ դ. սկիզբ /

⁴⁵ Վիճակահանություն Համբարձման տոնին /19-րդ դ./

⁴⁶ «Համբարձման եզ»

Հավատում էին, որ Համբարձման գիշերը «եթե որևէ մեկն իրար հանդիպող երկու աստղ տեսնի և այդ պահին իր սափորը կամ կուժը ջուր լցնի՝ այն անմիջապես ոսկու կվերածվի, իսկ ջուր բերողը՝ բախտավոր կլինի մինչև կյանքի վերջը»: Հավատում էին նաև, թե «Համբարձման գիշերը լույս է իջնում և այդ պահին ծառերը միմյանց ողջուններ են հաղորդում»: Այդ իսկ պատճառով, հատկապես, երիտասարդները չէին քնում, որպեսզի տեսնեն երկնային լույսը՝ ցանկությունների իրականացման բաղձանքով: Համբարձման նախորդ գիշերն աղջիկներն իրենց անուններով խոտերից հավասարաչափ փնջեր էին կապում և նշում դրանց բարձրությունը: Առավոտյան, եթե նշան արած խոտը երկարած էր լինում, դա բարի նշան էր համարվում և հավատում էին, որ այդ աղջիկը երկար ու երջանիկ է ապրելու: Նմանատիպ ձևով Գողթնում գուշակություններ էին անում վարդի թփերի միջոցով: Բավական տարածված էին նաև **վիճակի ջրով** գուշակությունները: Լոռիում վիճակի ջրից լցնում էին մատնոցի մեջ, բթամատերով բռնում և ջրի մեջ մի փոքրիկ ծղոտ (ծեղ) էին գցում: Եթե ծղոտն աջ էր պտտվում, հավատում էին, թե այդ տարի հասկն առատ է լինելու, իսկ ձախի դեպքում՝ լավ բերք չէր ակնկալվում: Երիտասարդ կանայք և աղջիկները դարձյալ մատներով բռնում էին ջրով լի թասը, աշխատելով հանդարտ պահել ջրի մակերևույթը: Երբ ջուրը հանդարտվում էր, որևէ ցանկություն մտքերում պահած, ներկաները հերթով մոտենում էին և ձեռքերը կամաց քսում թասին: Եթե ջուրը հոսում էր ձախ՝ վատ նշան էր, իսկ եթե աջ՝ բարի:

Ձատկից մինչև Համբարձում, երեկոյան ժամերին կանայք կար չէին անում, որպեսզի «**հավկուր**» չլինեն (հավի պես չկուրանան):

Տարածված էր՝ Համբարձման տոնին կաթնապուր պատրաստելու ավանդույթը: Ձատկից մինչև Համբարձում ընկած ժամանակահատվածում արգելված էր կաթնապուրի գործածությունը, հակառակ դեպքում՝ կպակասեր կովերի կաթնատվությունը: Համբարձման օրը, սակայն, յուրաքանչյուր տան համար կաթնապուր եփելը պարտադիր էր:

Համբարձման ծիսաշարի գլխավոր բաղադրիչը «**Վիճակ-ջանգյուլումն**» էր, որը հայոց ավանդական կենցաղում մեծ մասամբ ընկալվում էր որպես այդ տոնի համանիշ կամ երկրորդ անվանում:

Ըստ եկեղեցական կանոնների, «վիճակը» կապված էր Քրիստոսի համբարձվելուց հետո Առաքյալների և աշակերտների ժողովում՝ Հուդայի փոխարեն վիճակահանությանը նոր աշակերտ ընտրելու ավանդության հետ: Վիճակի ծեսը, սակայն, նախաքրիստոնեական արմատներ ունի: «Վիճակ-ջանգյուլումը»

համարվել է աղջիկների տոն և նրանց խաղերն ու զվարճություններն ըստ էության արտացոլում էին ծառ ու ծաղկի պաշտամունքի, ինչպես նաև գեղեցիկ սեռի ազատության և երջանկության խորհուրդները:

Դեռատի աղջիկները Համբարձման նախընթաց՝ չորեքշաբթի օրը, վաղ առավոտյան, դեռ արեգակը չծագած, լուռումունջ գնում էին դաշտերը կամ սարերը և կճուճի մեջ լցնում յոթ աղբյուրի ջուր, յոթական քար, ծաղկի թերթեր կամ ծառի տերևներ: Նրանց երբեմն «հետապնդում» էին տղաների խմբերը: Վերջիններս փորձում էին խոսեցնել, կատակներով խանգարել աղջիկներին կամ էլ քաղցր երգերով, միմյանց հետ գոտենարտելով՝ գրավել նրանց ուշադրությունը: **«Ծաղիկները գովելով»**, աղջիկները մի մեծ փունջ էին կապում ու դնում կճուճի բերանին և կարմիր շորով ծածկում այն: Երեկոյան, երբ աստղերը դուրս էին գալիս, վիճակի այդ կճուճը թաքցնում էին հանդերում կամ թփերի տակ (**«աստղունք էին դնում»**), իսկ երբեմն էլ պահում էին աղջիկներից մեկի տանը: Գիշերվա ընթացքում նրանք հսկում էին հիշյալ կճուճը, որպեսզի տղաները չգողանան և փոխարենը՝ փրկագին չպահանջեն:

«Վիճակ-ջանգյուլումի» հիմնական արարողությունը տեղի էր ունենում հինգշաբթի օրը: Աղջիկները շրջում էին տնետուն, խաղիկներ երգում, ծաղկեփնջեր նվիրում, իսկ մարդիկ, զանազան նշաններ (կոճակ, մատանի, ասեղ և այլն) զցելով վիճակի ամանի մեջ, դրամով կամ ամենատարբեր բնամթերքով (ծու, յուղ, պանիր, բրինձ և այլն) նրանց նվերներ էին մատուցում: Ծաղկեփնջերը բաժանելուց հետո, կճուճի մեջ դրված խաչաձև փունջը, որը Ծաղկամեր էր կոչվում, նվիրում էին եկեղեցուն: Վիճակ հանելու ծեսը սկսվում էր կեսօրին, երբ աղջիկները շրջան կազմած տեղավորվում էին վիճակի ամանի շուրջը: Նախապես ընտրված Համբարձման հարսը, որը նորահարսի գեղեցիկ զգեստ հագած, քողը երեսին մի աղջնակ էր, կճուճից հանում էր որևէ նշան: Խումբն այդ պահին մի քառատող էր երգում, որի բովանդակությունից էր կանխորոշվում նշանի տիրոջ «վիճակը» կամ բախտը: Երբեմն քառյակներ երգելիս, աղջիկների հետ մրցության մեջ էին մտնում տղաները:

Տավուշում աղջիկները դաշտ էին գնում՝ «գյուլում»-ի համար ծաղիկներ հավաքելու և կազմելով գեղեցիկ ծաղկեփնջեր, երգում էին.

**Քնացի ծաղկի,
Վիսցայ մատս ծակի ,
Հարսներին քաղել տուի,
Սոնթերին փնջել տուի,**

Գգրին փայ անել տուի,
Գգրի փայը կտերը,
Ծլվըլալայ ծտերը.
Տիւս պի մի թեփշի նուռը,
Որ չգնամ ես խանի դուռը:

Համբարձման-վիճակի երգերը շատ սիրված էին հայոց կենցաղում. դրանց տարածման արեալը դարձյալ ընդարձակ էր: Ստորև ներկայացված են այդ երգերից օրինակներ, որոնք բնորոշ էին պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերին.

/ Շիրակ - Բասեն /

Ղարսայ բերդը պլել է,
Իմ եարս մեջը քնել է ,
Ձէն տուի ձէնս չառաւ,
Մագար ինձէն ջորեր է:

Իմ եարն եկաւ ու գնաց,
Մարին դէն առաւ մնաց.
Սրտով *հլղար*⁴⁷ չտուեց,
Սրտիս դարդ եղաւ մնաց:

Աղջի անունդ Մահի,
Ճակատդ բոլոր շահի,
Թէ որ ինձի կը հաւնիս,
Աստուած աղբերդ պահի:

Գերի եղայ աչքերուդ,
Կամարակապ ընքերուդ,
Էսենց անգութ սիրտ ունիս,
Որ չես ճանչնայ ընկերիդ:

/ Այգեհովիտ – Ուզունթալա /

Ա տղայ քեզ ջրունը սեր ընկայ,
Քարով տուիր վեր ընկայ,
Աչքս որ աչքիդ կպաւ,
Օխտը կոճակ մեր ընկայ:

Այ տղայ, տղայ, ետ գնա,
Առաջովդ գետ գնայ,
Շիրվանի քամին փչի,
Գեանջու շալդ ետ գնայ:

Հաց են թխել գաթացու,
Իմ եարը մելիքացու,
Մելիք սարերը շուռ գայ,
Բարով իմ եարը տուն գայ:

Դու նստել ես գերանին,
Ոսկէ շվին բերանին,
Ոսկէ դայթան են կետրծել,
Դնեն ջբիդ բերանին:

Կաղնել ես սըռի հովին,
Քամին տայ դեօշիդ մովին,
Էռնակ ծոցիդ քնողին,
Շաման ծծերդ բռնողին:

Գիւլուն գիւլուն զիլասար,
Բուրդ են մանել հաւասար,
Էռնակ կտամ էն օրին,
Որ եկար հետս խօսար:

⁴⁷ *հաճություն*

Ղասոււնը հայ Ղասոււնը,
Կարմիր գինին թասոււնը,
Աղջկերքը երբ կտաքանան,
Վարդիվերի պասոււնը:

Այ հեայ սիրտս,
Ծիրանի թել ա սիրտս,
Ախ, ինչ ասեմ քեզ նանի,
Բաց անեմ`սև ա սիրտս:

/ Վայոց Ձոր - Խաչիկ /

Ձրի ճամբէն սառել ա,
Մաճը բուռը տարել ա,
Կաքաւ պոչիկ թուխ տղայ,
Ուշ ու խելքս տարել ա:

Սարը ձիւնը կալել ա,
Անձրև արել հալել ա,
Խաբար տարէք իմ նանին,
Սիրտս վարամ կալել ա:

/ Վայոց Ձոր - Ազատել /

Մի ծառ ունիմ ծիրանի,
Քամին թել թել կտանի,
Երես երեսի կառնի,
Ինչ խամեղ քուն կտանի:

Կարմիր խնձոր կըծած ի,
Արծթի մէջ բռնած ի,
Աղբէրս եկաւ չտուիմ,
Եարս եկաւ բաշխեցիմ:

Ամբեր է, ձիւն չի գալի,
Իմ եարը տուն չի գալի,
Գլոխս դրի բարձը,
Աչքերս քուն չի գալի:

Տղայ, տղայ, խաս տղայ,
Աղջկերանց ետևէն վազ, տղայ,
Այ չեսնա (չես կարող) կոխել,
Խոնջանլու կռի, տղայ:



Անկեղծ սերն ու սպասումները թող միշտ գեղեցիկ ավարտ ունենան, իսկ Չամբարձման հմայական կճուճից այսուհետ թող դուրս գան միայն երջանկաբեր խորհրդանշաններ:

⁴⁸ Չամբարձման վիճակի ծեսը / ARMENIA-ՀԱՅԱՍՏԱՆ միջազգային նամականիշների շարքից. ազգագրագետ-խորհրդատու Սամվել Մկրտչյան /

⁴⁹ Տիկնիկով Չամբարձման փարչ / Վան, 20-րդ դ. սկիզբ /

10. ՎԱՐՂԱՎԱՌ

50



51



Վարդավառը՝ քրիստոնեական տաղավարային այս տոնը, հայտնի է նաև Քրիստոսի Այլակերպություն կամ Պայծառակերպություն անվանմամբ:

Հայոց եկեղեցական տոնացույցով Վարդավառը նշվում է Ջատկի 14-րդ կիրակի օրը կամ՝ Ջատկից 98 օր հետո և ունի 35 օրվա շարժականություն (հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը)⁵²:

Այս տոնը, որն առավել հայտնի էր **Վարդավառ** անունով, Հայաստանի առանձին բնակավայրերում ուներ անվանման բազում ձևեր⁵³, որը հիմնականում պայմանավորված էր հայոց ներթնիկ խմբերի բարբառային առանձնահատկությամբ, ինչպես նաև տոնի գլխավոր ուխտավայրերի ու առավել տարածված բաղադրիչների գերակա անվանումներով:

Վարդավառը՝ ծագմամբ հեթանոսական տոն է, որը, ըստ հայագիտության մեջ եղած տեսակետների, կապված էր Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտա-

⁵⁰ Նոյան Տապանը

⁵¹ Նոյն իջնում է Արարատից / նկ. Հովհաննես Այվազովսկի /

⁵² Շատ բնակավայրերում, տեղական ավանդույթի համաձայն, ժողովուրդը **Վարդավառը** նշել է տարբեր ժամկետներում, որը ձգվում է հունիսի կեսերից մինչև օգոստոսի սկզբները: Տավուշում, օրինակ, առ այսօր այդ տոնը կատարվում է հունիսի 20-ին հաջորդող առաջին կիրակի օրը:

⁵³ **Վարթավառ** (Արճակ), **Վարդևոր** (Լոռի, Ջավախք, Հարք-Բուլանըխ, Կաղզվան), **Վարդիվոր** (Ղերսին), **Վառթիվոր** (Ջնաբերդ), **Վրրթևոր** կամ **Վրրթևոր** (Արցախ-Վարանդա), **Վարթևոր** (Նոր Նախիջևան, Թալին), **Վարթիվառ** կամ **ճրճանքի օր** (Սիսիան), **ճրճան** (Մարտիրոս-Վայոց Ձոր), **Վրթիվեր** (Այգեհովիտ-Տավուշ), **Վրրդիվուր** (Մեղրի), **Վարդավուր**, **Վարդըվուր** կամ **Վարդիվուր** (Մուսալեռ), **Վարթիվոր** (Ղզլար), **Պալլում**, **Պարլում** կամ **Պարլամօն** (Զեսապ) և այլն: Չնայած անվանումների բազմազանությանը, հայոց կենցաղում Վարդավառն ուներ գրեթե համընդհանուր արարողակարգ:

մունքի, Ամանոր-Նավասարդի, ինչպես նաև Համաշխարհային ջրհեղեղի կամ Նոյան տապանի պատմական նշանավոր իրադարձության հետ⁵⁴:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով, վարդավառ բառը «վարդ» արմատից է և կապվում է Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ: Ըստ Գ. Ղափանցյանի, վարդավառը խեթերեն արտահայտություն է՝ կազմված «vadar» (ջուր) և «arr» (լվանալ՝ ցնցղել իմաստով) բառերից և նշանակում է՝ ջրի ցնցղում կամ թափում: Որոշ հեղինակներ վարդավառը ամբողջությամբ կամ մասնակիորեն են սանսկրիտերեն համարում: Մելիք-Փաշայանը գտնում է, որ այն նշանակում է «ջրասրսկում»՝ կազմված սանսկրիտերեն «վարդ» և «վառ» բառերից (վարդ = ջուր և վառ = սրսկել, լվանալ): Ս. Ծոցիկյանի կարծիքով, այդ բառի միայն առաջին մասն է («վարդ») սանսկրիտերեն թարգմանաբար նշանակում «ջուր», իսկ մյուս հատվածը («ավար») գուտ հայերեն է՝ «թափել», «ցայտել» («վայրել» բառարմատից) իմաստով:

Վարդավառի ժողովրդական ծիսահամալիրի էպիկենտրոնում գլխավորը *ջուրը* էր, ինչպես նաև՝ *մատաղը, աղավնին և խնձորը*: Տոնի ժամանակ միմյանց ջրում էին բուլորը, չկային սեռատարիքային որոշակի սահմանափակումներ, հաշվի չէր առնվում մասնակցի ազգակցական կամ սոցիալական կարգավիճակը: Այդ օրը սկեսուրի վրա նույնիսկ չխոսկան հարսն էր համարձակվում ջուր լցնել կամ քավորի վրա՝ սանամայրը և ոչ ոք վիրավորվելու իրավունք չունեին:

Ուշագրավ է, որ Վարդավառին գաղտնի ջրցանության ծես էին կատարում նաև հավատափոխ եղած հայերի որոշակի զանգված (օրինակ՝ Դերսիմի քրդացած հայերը)⁵⁵: Կենցաղում բավական տարածված էր աղավնի թռցնելու սովորույթը, որը կապված է Նոյան տապանի ավանդության հետ: Նախահայր Նոյը հենց աղավնուն էր վստահել համաշխարհային ջրհեղեղից փրկության ավետաբերի առաքելությունը:

⁵⁴ Ըստ ավանդության, երբ Նոյ Նահապետը, ջրհեղեղից փրկվելով, հասնում է Մասիսի գագաթը և այնտեղից իջնում Նախիջևան՝ այդ օրվանից էլ սկսվում է հայոց **Նավասարդ** կոչվող ամիսը: Որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնար, Նոյը որդիներին պատվիրեց՝ **իրար վրա ջուր լցնել**:

⁵⁵ «Դերսիմի կրոնափոխ, քրդացած հայը, արևը մայր մտնելուց հետո, ջուրը թափելու, ջրի վրայից անցնելու ժամանակ, ջրի փերուց չխփվելու համար, խաչակնքում և Հիսուս Քրիստոս էր ասում: **Վարդավառին** նրանք միմյանց վրա ջուր էին սրսկում: Իր հետ տանելով այդ սովորությունները, նա վախենում էր հրապարակավ գործածել և, այդ իսկ պատճառով՝ դիմում էր թաքուն միջոցների, որի գործադիր իշխանությունը տան կինն էր: Նա, թեև հայ ազգային և կրոնական սովորությունները անխաթար էր պահում և լրիվ գիտակցում իր հայկական ծագումը, բայց և այնպես, խոսում էր քրդերեն և ենթարկվում ալկիության ծիսակատարություններին»:

Վարդավառյան մատաղի ծեսերը զանգվածային խնջույքների յուրատեսակ հանդիսություններ էին: Մատաղի արարողություններն ու խնջույքները մեծ մասամբ կատարվում էին բնակավայրից դուրս գտնվող սրբավայրերում՝ գետերի և աղբյուրների մոտ, հանդերում, կալերում ու սարերում: Մատաղացուները հիմնականում սրբավայրերում էին մորթվում կամ էլ նախօրոք մորթած՝ տանում հետները: Մատաղացուն, սովորաբար, լինում էր գառ, եգ, ոչխար և նույնիսկ՝ աքլոր կամ աղավնի: Յուրաքանչյուր ընտանիք տոնին իր խոստացած մատաղն ուներ: Մատաղից բաժին էին հանում համայնքի բոլոր ընտանիքներին, այդ թվում՝ աղքատներին:

Ուխտավորներն օրերով էին մնում այդ սրբավայրերում, ուր կազմակերպվում էին ամենատարբեր միջոցառումներ՝ խաղեր, ըմբշամարտեր, փահլևանների ելույթներ, ձիարշավներ, աշուղների մրցույթներ, տոնավաճառներ և այլն: Այդ ուխտավայրերը հաճախ հանդիսանում էին աղջիկտեսի և երիտասարդության ծանոթության գլխավոր վայրեր, որով և շրջանցվում էին առօրյա կենցաղում բացահայտ շփումներն արգելակող իրավա-սովորութային կանոնները:

Ուխտավայրերում կատարվող վարդավառյան հանդիսությունները երբեմն հիշեցնում էին նավասարդյան հնամենի տոնահանդեսները: Ականատեսների վկայությամբ՝ եթե չլինեին մատաղացուի աղն օրհնելու և խաչակնքելու ծեսերն ու սովորույթները, Դերսիմի Կաթնաղբյուրի մոտ կատարվող արարողություններն առաջին հայացքից այն տպավորությունը կթողներ, թե քրիստոնեությունն ամբողջությամբ տեղի է տվել հեթանոսությանը:

Վարդավառյան ավանդույթներից էր նաև **խնդումի** կամ **խնդում տոքի**⁵⁶ ծեսը: Վերջինս իրենից ներկայացնում էր նշանված աղջիկների ձեռքով ամանի մեջ աճեցրած ցորեն կամ գարի: Ամանի մեջ ամրացնում էին խաչածև կամ մի քանի թևավոր փայտ, որը զարդարում էին վարդերով, խնձորներով ու մանր վարունգներով: Պառավ կինը վերցնում էր «խնդումը» և տանում հրապարակ, որը գտնվում էր նրա «խիստ» հսկողության տակ: Այնուհետև, դիոլ-զուռնայի ուղեկցությամբ պար էին բռնում ողջ հանդիսականները: Վերջում, երբ ճարպիկ երիտասարդներից մեկը գավազանով հարվածում էր «խնդումին» և վայր գլորում այն, մյուսները վրա էին հասնում՝ խլելով միմյանցից ծաղիկներն ու մրգերը, իսկ պառավը երգելով «անիծում» էր նրանց:

⁵⁶ Ըստ Լուսիկ Ազուլեցի Սամվելյանի, «**խնդում տոք**»-ը՝ **հայ զոկերի** բարբառային արտահայտություն է, որը նշանակում է՝ **խնդություն կամ՝ ուրախություն տալ**:

Վարդավառի առնչությամբ նորապսակների ազգականներն էին առաջին հերթին միմյանց փոխադարձաբար նվերներ մատուցում, որոնք սովորաբար մրգեր, չրեղեն, հագուստներ և զարդեղեններ էին: Հաճախակի էին նաև վարդի փնջերի և ծաղիկների նվիրատվությունները: Վայոց Ձորում տղայի օջախից հարսնացուի ծնողների տուն էին ուղարկում մրգեր, չրեղեն, գլխաշոր և այլն: Կաղզվանում ևս նշանված տղա ունեցողները նմանատիպ ընծաներով գնում էին՝ հարսնացուին «տեսնելու» և, մեկ-երկու օր մնալուց հետո, դարձյալ նվերներով վերադառնում:

Հատկապես տարածված էր խնձոր նվիրելու սովորույթը: Ինչպես որ խաղողը չէր կարելի ճաշակել մինչև Աստվածածնի կամ Խաղողօրհինքի տոնը, այնպես էլ Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելված էր (պաս էր): Պահպանվել էին ծիսական խնձորի հետ կապված բազում ծեսեր ու հավատալիքներ և այս առումով տպավորիչ էր Տիգրիսի ակունքներում գտնվող «Արքայության աղբյուր» մատուռ-ուխտավայրում կատարվող արարողությունները, որին մասնակցում էին նաև դրացի ասորիներն ու քրդերը: Շատախի հայերը հավատում էին, որ Վարդավառի գիշերը «անմահության խնձորը» սրբազան այդ գետի ակունքներից դուրս գալով, անցնում է իրենց բնակավայրով: Նրանք ողջ գիշեր անքուն հսկում էին գետի ափը, որպեսզի տեսնեին այդ երանելի պահը, քանի որ հավատում էին, թե երջանիկ ակաճատեսի ցանկացած երագանք կիրականանա: «Արքայության աղբյուրի» ջուրը բուժիչ էր համարվում՝ կենդանիների մեջ տարածված հիվանդությունների համար: Այդ իսկ պատճառով, հայերը, քրդերն ու ասորիներն իրենց անասունները տանում էին աղբյուրի մոտ, մեկական ոչխար մատաղ անում, ինչպես նաև սրբազան ջրից ցանում հոտի վրա:

Հարքում հավատում էին, որ սուրբ համարվող սև եզն անգամ Վարդավառին ջրի մեջ կարող է սառույց տեսնել:

Հավատում էին նաև, թե Վարդավառի գիշերը սրբերի վրա լույս էր իջնում և ով տեսնի այն՝ խնդրանքը կիրականանա: Ղարաբաղցիները համոզված էին, որ Հոգեգալստյան օրը բոլոր սրբերը երկինք են համբարձվում, իսկ Վարդավառին կրկին իջնում՝ ընդունելով աստղերի կերպարանք: Ով՝ տեսնի նրանց իջնելու պահին և անմիջապես խնդրանքով դիմի, այն անհապաղ կկատարվի: Իսկ Սյունիքում երիտասարդները սրբավայրերի պատերի վրա էին փորձում իրենց ճակատագրերը: Ընտրյալների անունները մտքերում պահած, մանր քարերն ամուր սեղմում էին սրբազան պատերին և կպչելու դեպքում՝ ուրախանում սպասվելիք բարեհաջող բախտից:

Չամուսնացածները երբեմն Վարդավառի նախորդ գիշերն (ինչպես Ս. Սարգսի տոնի նախորդ երեկոյան) աղի կերակուրներ էին ուտում և ամբողջ օրը ջուր չխմելով քնում՝ գիշերը երազ տեսնելու սպասումներով: Որ աղջիկը կամ տղան իրենց ջուր տա երազում, ըստ այդմ, գուշակություններ էին անում ապագա հարսնացուի կամ փեսացուի վերաբերյալ:

Տոնի կապակցությամբ եկեղեցիներին հասկեր էին նվիրում և, աղերսում՝ արտերն ու այգիները զերծ պահել աղետներից: Այս առումով, առանձնակի նշանակություն էր տրվում **Նուրին**⁵⁷ անձրևաբեր ծիսաշարին, որն ուղեկցվում էր երգ ու

⁵⁷ Հայոց ավանդական կենցաղում բավական տարածված էին **Նուրինի** հետ կապված անձրևաբեր և մասամբ՝ անձրևախափան ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում էին նաև Վարդավառին: Նուրինն իր մեջ պահպանում է ջրային տարերքը խորհրդանշող աստվածուհու պաշտամունքի որոշակի հետքեր:

Նուրինը հայտնի էր անվանումների բազում տարբերակներով: Խարբերում այն կոչվում էր՝ Խուձկուլուլու և Խուչկուլուլու, Վանում՝ Խունձկուլուլու և Խուրձկուլուլու, Նոր Բայազետում և Շիրակում՝ Նուրին, Խուշկուրուրիկ, Խուչկուրուրիկ, Խուչկուրուրա, Ապարանում՝ Հուչկուրուրու, Արաբկիրում՝ Մամաչթթիկ, Նոր Նախիջևանում՝ Նորին կամ Նորին-Նորին Նազարեթ, Լոռիում՝ ճուլի, Նուրին-Նուրին Նազարո, Արարատյան հովտում, Արագածոտնում, Արցախում՝ ճուլի, Գողի, Բաբերդում՝ Ուրբաթեկին, Գյումուշ-խանեում՝ Մանկակուրտ, Ախալցխայում՝ Չամչախաթուն, Կարինում, Ակնում և Արմաշում՝ Չիչիմամա, Քղիում՝ Պուպլատիկին, Ախալքալաքում՝ Պուրպատիկ, Սալմաստում՝ Շերեփ տիկնիկ և Շապին-Գարահիսարում՝ Ուշխուրունի: **Նուրին** անունն առանձնապես տարածված էր արևելահայերի շրջանում, **Պուրպատիկ** և մյուս անվանաձևերը, մեծ մասամբ արևմտահայերի:

Նուրին պատրաստելու համար փայտածողի վրա լաթեր էին փաթաթում և կնոջ ձև տալիս: Ախալքալակում այդ նպատակով ցախավելին փայտե թևեր էին անցկացնում, կանացի շոր հագցնում և գլխին քող գցում: Նոր Բայազետում Նուրինի գլխին փափախ էին դնում: Շատ տեղերում Նուրինն իրենից ներկայացնում էր մի մեծ խաչափայտ, որին սպիտակ երկար շորեր էին հագցնում: Խարբերում և Վանում պատրաստում էին խաչաձև փոքր փայտից և դարձյալ շորեր էին հագցնում: Շիրակում այն ցախավելին փաթաթած փալասի տեսք ուներ: Սալմաստում տիկնիկը ձևավորում էին՝ մեծ շերեփին շորեր փաթաթելով:

Նուրինի խումբը գլխավորապես կազմված էր դեռատի աղջիկներից և այրի կանանցից: Բացառիկ դեպքերում մասնակցում էին նաև պառավ կանայք: Տղաներից կազմված խմբեր գրեթե չկային, բայց լինում էին նաև բացառություններ: Տղաները սովորաբար կատակներ էին անում և այդ ձևերով փորձում «**չարչարել, անհանգստացնել**» Նուրին տիկնիկին և շրջող աղջիկներին: Իսկ աղջիկների խումբը կանգ էր առնում յուրաքանչյուր տան մոտ՝ ընտանիքի անդամներին հղելով մաղթանքի երգեր, տանտիրուհուց խնդրում կաթնամթերք, ձու, ալյուր և այլ բարիքներ: Այդ նպատակով նրանց ուղեկցում էին մթերքը հավաքողները՝ իրենց հատուկ անաններով: Ավանդույթի համաձայն խմբին դիմավորում և սպասարկում էին տանտիկիները: Տեղի էր ունենում երկխոսություն, որի ընթացքում երեխաները հասցնում էին ջրել Նուրինի ողջ խմբին:

Երգ-մաղթանք երկխոսությունը Կարսում կատարում էին հետևյալ կերպ.

պարով ու խաղիկներով: Պատահական չէ, որ Վարդավառը շատ հաճախ զուգահիս-
պում էր խոտհնձի և բերքահավաքի շրջանին:

Առատությունն ապահովելու նպատակով ծառերի ոստերով ու ծաղկեփնջերով
զարդարում էին ընտանի կենդանիների, մասնավորապես՝ կթան կովերի ճակատնե-
րը և ներկում եզների կամ խոյերի եղջյուրները: Այգեհովտի (Ուզունթալա) տա-
վարածները «Վըրթիվերի» օրը Դամբլուտի սարում գույնզգույն ծաղիկներ էին
հավաքում և դրանցից խաչաձև գեղեցիկ փնջեր կազմելով որպես ծաղկախաչ, կա-
պում յուրաքանչյուր տան կթան կովի ճակատին: Գեղեցիկ տեսարան էր. զար-
դարված կովերը «հպարտ» քայլերով գնում էին դեպի իրենց տերերի վրանները.
նրանց երգ ու պարի հանդիսությամբ էին դիմավորում գյուղի երեխաները.

Ական, ական, ական ի կովին,
Չալ չալ աչքեր *բախրի*⁵⁸ կովին,
Ես քե մատաղ, Սուրբ Ուհանես,
Ամեն *բիւզի*⁵⁹ իմն ընկանես,
Մատաղ անեմ ղաբուլ կանես,
Քօռլուղինը քարնըօր անես՝
Իմն աղաքսըր անես:

Խումբ

Նուրին Նուրին եկել է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է.
Մեր Նուրինին փայ տվեք,
Տաշտերով ալուր բերեք,
Մաղերով ջուր բերեք,
Մեր Նուրինին կշտացրեք,
Ուտենք-խմենք, քեֆ անենք:


Տանտիրուհի

Մեշքերդ պինդ էղնի,
Կամքերդ ամուր էղնի,
Անձրևը թեժ էղնի,
Հացը առատ էղնի:
Խումբ
Տաշտ ու մաղդ լիք էղնի,
Քու հացդ առատ էղնի,
Գերանդին չկարա կտրի:


⁵⁸ *եղջերու*

⁵⁹ *երեկո*

60



61



62



63



⁶⁰ «ԽՆՂՈՒՄ ԵՊՈՒՆ» / Ագուլիս. 19-րդ դ. /

⁶¹ Մակարավանք, վարդավառյան ուխտատեղի. 11-13 դդ. / լուսանկարը՝ Դ. Առաքելյանի /


⁶² Սրվելի վանք, վարդավառյան ուխտատեղի. 12-13-րդ դդ.

⁶³ Վարդավառի ծիսական խնձոր՝ բախտագուշակ դրամով. 20-րդ դ. վերջ / լուսանկարը՝ Ս. Սեպետյանի /

Վարդավառի խորհուրդը, սրբազան ջուրն ու «անմահության խնձորը» թող այսուհետ էլ նպաստեն մարդկանց ազնվագույն իղծերի իրականացմանը: Այլևս թող չլինեն աղետներ, ջրհեղեղներ, իսկ վարդավառյան ջրցանությունները թող կրկնվեն ամեն տարի՝ իբրև արգասավորության, պտղաբերության և մայրության խորհրդանշան:

11. ՆԱՎԱՍԱՐԴ

64



Նավասարդը, ըստ հայոց ազգային օրացույցի, տարվա անդրամիկ ամիսն էր, որը տևում էր օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ը: Այդ ամսվա առաջին օրը՝ ավանդական Նոր Տարին կամ Ամանորն էր:

Ուշագրավ է, որ «Նավասարդ» բառի լեզվաբանական ստուգաբանությունը, թե պարսկերեն («ՆԱԼԱ-ՍԵՐԻՏՈՒ»=նոր տարի), և թե սանսկրիտ («ՆԱԼԱ-ՍԱՐԱՏԱՅ» = նոր տարի, նոր շար, նոր ջրոց տոն) անվանումներով ամբողջությամբ համապատասխանում է հայոց կենցաղում տարածված ավանդական հիշյալ տոնի բնույթին:

Նավասարդը, ըստ Անանիա Շիրակացու և Յովհաննես Իմաստասերի, եղել է Հայկ նահապետի դուստրերից մեկի անունը, որով և մեր նախահայրն անվանել է տարվա առաջին ամիսը:

Հայկական արեգակնային տարվա շարժականության պատճառով Նավասարդ-Ամանորը, ժամկետային առումով, որոշակի փոփոխություններ է կրել: Այն նախապես նշվել է **գարնանային օրհավասարին (մարտի 20–21)**: Հետագայում, կապված տոնարական առանձնահատ-

կությունների հետ, այն ժամկետային որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Կան տեսակետներ, որ այդ ժամկետը մ.թ. 428թ.-ին համընկել է **օգոստոսի 11-ին**, որը հայտնի է **Ապոկատաստագի տարի**, Հայկական կամ Հայկյան շրջափուլ անվանումներով: Հայկյան առաջին շրջանը կամ բուն թվականը համարվում է մ.թ.ա. 2492թ.⁶⁴ Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի տարին, որը առավելապես

⁶⁴ Հայկի և Բելի կռիվը

հիմնավորվում է բանահյուսական և ազգագրական աղբյուրներով: Նույնիսկ XIX դ. վերջերին, նախիջևանցիների կենցաղում Նավասարդի տոնին դեռևս պահպանվում էին Հայկ նահապետի այդ հաղթանակի մասին ավանդազրույցները⁶⁵:

Նավասարդը ժամկետային տեղաշարժերի արդյունքում վերածվեց աշնանային բերքահավաքի տոնի՝ «նորոց պտղոց կամ հունձքի տոն»:

Քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց հետո այն փոխարինվեց քրիստոնեական գլխավոր սրբեր՝ Հովհաննես Մկրտչին և Աթանազիսին նվիրված տոնով:

XVIII դ., երբ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի մշակած նոր տոնացույցում հունվարի սկիզբը հաստատվեց որպես Նոր Տարի կամ Տարեմուտ, հայ էթնոսի մի նկատելի հատված կենցաղում շարունակում էր պահպանել իր ավանդական Ամանորը՝ Նավասարդը:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայոց մեջ դեռևս կենցաղավարող Նավասարդի տոնը չուներ անցյալի տարածվածության մեծ շրջանակները: Ձևափոխումներով հանդերձ, այն առավելապես պահպանվել էր Գանձակում, Վարանդայում, Սյունիքում, Գողթնում և Պարսկահայքում, որի կատարման ժամկետները տատանվում էին ամռան վերջերից մինչև ուշ աշուն՝ տեղ-տեղ զուգակցվելով հունվարյան ամանորյա ծիսաշարի հետ: Չնայած որոշ առանձնահատկություններին, նավասարդյան այդ տոներն ունեին ընդհանրական գծեր: Դրանք հիմնականում նշվում էին աշնանը՝ հանընկնելով բերքահավաքին, այգեկութին, նախրաթողին և, միևնույն դեպքում, իրենցից ներկայացնում էին նաև գյուղատնտեսական աշխատանքային պայմանադրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ: Այդ երևույթը նկատվում էր, օրինակ, Տավուշում (Աչաջուր, Այգեհովիտ) և Արմավիրում (Ջանֆիդա, Փշատավան), ուր գրեթե մոռացվել էր **Նավասարդի**՝ տոն լինելու հանգամանքը:

Նավասարդի կապակցությամբ յուրաքանչյուր տուն պատրաստում էր տոնի գլխավոր կամ նվիրական ուտեստները՝ կորկոտն ու հարիսան: Նախիջևանի և Երևանի գավառներում տարածված էր հարիսան, իսկ Արցախում՝ քեաշկեն (կամ քեշկեկ-հերիսա): Գողթնում հարիսայի հետ միասին նաև խաշ էին եփում, իսկ խնձորեսկում այդ օրվա պարտադիր ուտեստներից էր բոգբաշը: Այստեղ յոթ տեսակի

⁶⁵ Վանեցիների շրջանում Վարդավառին (այն ժամկետային և իմաստային առումներով ընդհանրական եզրեր ուներ ավանդական Նավասարդի հետ), բավական տարածված էին պարսատիկներով խաղ-կռիվները պատանիների խմբերի միջև, որոնք բաժանված էին Հայկի և Բելի բանակների:

միրգ էր դրվում սկուտեղի վրա, որը տանտիկինը մատուցում էր ընտանիքի անդամներին և հյուրերին:

Տոնական սեղանները լի էին աղանձեղենով, ընկույզներով, քաղցրահամ մրգերի ու չրեղենների հարուստ տեսակներով: Սիսիանում աղանձը սովորաբար պատրաստում էին ցորենի լավ տեսակից, ոսպից, կանեփից, կտավատից և նոխուղից, որոնց նաև չամիչ ու ընկույզ էին խառնում: Այս առումով շատ հագեցած էր մեղրեցիների տոնածիսական ուտեստը: Նավասարդի տոնը մեղրեցիների շրջանում տարածված էր մինչև XX դ. 30-ական թթ., որը կենցաղում հայտնի էր **Շըմբըլքե** կամ **Շըմբըլքե անվանմամբ**: Տոնը նշվում էր նոյեմբերին, որի գլխավոր արարողությունը կամ խորհուրդը՝ հասունացած մրգերի ու պատրաստած չրեղենի մեծարումն էր: Նավասարդ-Շըմբըլքեի կապակցությամբ տարածված էր փեսացուների կողմից չոր մրգեղենի նվիրատվությունը հարսնացուներին, ինչպես նաև փոխնվիրատվությունն ազգականների միջև: Մրգերի հետ միասին նվիրում էին նաև ալյուր, մեղր, հալվա, յուղ և այլն: Մեղրեցիների ավանդույթով, մինչև Նավասարդի տոնը, մեկ շաբաթ պետք է պաս պահեին (երկուշաբթիից մինչև ուրբաթ): Տոնի առթիվ միմյանց այցելում և նվերներ էին մատուցում բարեկամները, խնամիները և դրացիները: Մինչև Շըմբըլքե-Նավասարդ, պասի պատճառով, չորացված մրգեղեն ուտելն արգելվում էր⁶⁶:

Նավասարդյան ուտեստային համալիրում նկատելի տեղ էին զբաղեցնում ծիսական հատուկ թխվածքները: Ուշագրավ է, որ նիժեցիների մոտ Նավասարդը հայտնի էր **«քեաթա ախսերա» (=Կաթայի Ջատիկ)** անունով, որի նվիրական ուտեստը եղահունց գաթան էր:

Տոնն աչքի էր ընկնում հատկապես շնորհավորական փոխայցելություններով: Նախընթաց օրը՝ երեկոյան, երբ մարդիկ, ընտանիքներով ընթրում էին տոնական սեղանների շուրջ նստած, նրանց բարեկամները (հատկապես՝ խնամիները կամ քավորանք) գնում էին հարսնացուի տուն, երդիկից պարանով իջեցնում թաշկինա-

⁶⁶ Այդ տոնի որոշ մանրամասներ, նույնիսկ 20-րդ դ. վերջերին, մտապահել էր մի տարեց մեղրեցի: Վերջինիս վկայությամբ, իրենք անցյալում ունեցել են մի շատ գեղեցիկ տոն՝ **«Չիմպելիք»** անվանմամբ, որը նշվել է ուշ աշնանը և **«աշխարհում ոչ մի ուրիշ տեղ չկա»**: Այն նվիրված էր մրգերի մեծարմանը, բնության այդ բարիքների օրհնանքին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ «Չիմպելիք» կոչված տոնը, միևնույն Շըմբըլքեի վերափոխված տարբերակն է: Հայոց ներթմնիկ առանձին խմբերի, այդ թվում՝ մեղրեցիների խոսվածքներում «չափազանց առատ» ածականն ունեցել է իր զուգահեռը կամ հոմանիշը, որը «շմբլան» էր կոչվում և որը հետագայում մոռացվել է: Վերոհիշյալ անվանումները «շըմբլանի» տարբերակներն են, որոնք ամբողջությամբ արտացոլում են ավանդական **Նավասարդ-բերքի** տոնի էությունը:

կի մեջ կապած ընկույզ, տանձ ու խնձոր և աննկատ հեռանում: Գանձակում այդ երդիկներից կախում կամ գցում էին ընկույզներ և ճլուլանք (գաթաների, խնձորների և հավերի շարան): Ընկույզը երդիկից երբեմն այնպիսի հնարքով էին նետում, որ տանտերերը գուշակում էր նվիրատուի ով լինելը: Կորկոտի մեջ ընկած ընկույզները չէին հանում՝ դրանք համարելով նվիրական ուտեստի ծիսական բաժին: Այս ծեսը գրեթե նույնությամբ տարածված էր Սիսիանում, այն տարբերությամբ, որ այցելուներն այստեղ երեխաներն էին և նրանք ոչ թե նվիրատուներ էին, այլ՝ նվերներ ակնկալողներ: Վերջիններս՝ երգելով շրջում էին գյուղում և երդիկներից կախում հատուկ պատրաստած տոպրակներ կամ գուլպաներ, որոնց մեջ տանտիրուհիները թխվածք, աղանձ, չամիչ կամ մետաղադրամներ էին լցնում: Այդ արարողությունը շարունակվում էր մինչև կեսգիշեր:

Նավասարդի նախօրեին մարդիկ աշխատում էին հաշտվել միմյանց հետ, մոռանալ հին խռովությունները, որպեսզի լիարժեք դառնան փոխայցելություններն ու բարենաղթանքները: Այցելությունները սկսվում էր առավոտյան: Տղամարդիկ՝ օղի, խնձոր կամ *մի չափ* ցորեն վերցրած գնում էին նախ՝ քահանայի տուն և շնորհավորում նրա Նավասարդը: Օրհնելով հյուրերին, քահանան նրանց հաջողություններ էր մաղթում գալիք տարվա կապակցությամբ: Այնուհետև գյուղացիները փոխադարձաբար այցելում էին միմյանց տները: Նավասարդյան շնորհավորանքների համալիրում պատվավոր տեղ էին զբաղեցնում նաև քյոխվաներն ու վարպետները: Արցախում, եթե Նավասարդին որևէ աշակերտ իր վարպետին ընծա չտաներ, նա այլևս իրավունք չունեի նրա երեսը տեսնելու, քանի որ **«թշնամին անգամ Նավասարդին պետք է գնա իր ոսոխի տունը և իր հայկական բարի լույսը տա նրան»**:

Տան մեծը մի շիշ օղի և խնձոր (սովորաբար՝ մեջն արծաթե դրամ դրած) վերցրած գնում էր **շնորհավորելու** տանուտիրոջ **Նոր Տարին**: Անցյալում՝ ժողովուրդը նման ընծաներով այցելել է նաև մելիքներին և համբուրելով նրանց ձեռքերը, շնորհավորել տոնը: Մելիքները, որպես շնորհակալական պատասխան, եզներ են մորթել ու դաշտերում հասարակական խնջույքներ կազմակերպել՝ հրավիրելով համայնքի բոլոր անդամներին:

Ավանդական այդ տոնին՝ մարդիկ իրար հանդիպելիս, միայն բարիքներ են մաղթել՝ **«քաղցր պառավես Նավասարդի պես, շնորհավոր Նոր Տարի, որդիով, դուստրով, բարով մեկ էլ այսօր հասնես»** օրհնանքով:

Բավական տարածված էին շնորհավորական փոխայցելությունները՝ հատկապես նորապսակներ ունեցող բարեկամների միջև: Նշանված աղջիկների սկես-

րանք թարմ և չոր մրգեր էին նվիրում հարսնացուներին և նրանց հարազատներին, իսկ վերջիններս էլ՝ իրենց հերթին, ընծաներ էին մատուցում փեսացուներին:

Տարին ուրախ, հաջող և բերքառատ տեսնելու ցանկությանը ու սպասումներով, մարդիկ ծառերի ճյուղերին կարմիր շորեր կամ կտորներ էին կապում:

Նավասարդի նախորդ գիշերվանից տանտիրուհիները մաքրում էին գոմերը, անասունների տակ գարի ցանում և նրանց ագիններին կարմիր թելեր կապում՝ դարձյալ «տարին առատ և կարմիր օրերով» անցկացնելու ակնկալիքով:

Բազմազան էին նաև նավասարդյան խաղերը: Արցախում երիտասարդներն ու պատանիները հիմնականում ջղլախտի, կասկարանքի, կնդափետի, հեծի, կռանթոփի և հալի-հալի էին խաղում: Շատերը կոխ էին բռնում կամ դոչ (խոյ) կռվեցնում, իսկ կալերում, սովորաբար, ջիդիր (ճիլիթ-ձիարշավ) էին կազմակերպում:

Նավասարդի հետ առնչվող ավանդույթներ էին պահպանվել նաև՝ կապված անուսնական արարողությունների թույլատրելիության հետ: Խաչենցիների շրջանում մինչև Նավասարդ արգելվում էին հարսանիքները, քանի որ նրանց սովորույթով, Սուրբ Սարգսից մինչև Նավասարդ ընկած ժամանակաշրջանն «անիծված» էր հարսանիքների համար:

Այսպիսով, Նավասարդը՝ տարվա բարեհաջողությունները զանազան ծեսերով, արարողություններով անրագրելով, ստանձնում էր նաև աշնանացանն ապահովելու կարևոր դեր: Այդ երկու գործառույթներն էլ Վասպուրականում մարմնավորված էին **խվվիկ** կոչված ոգու մեջ, որը համարվում էր լավ բերքի ապահովման հիմնական երաշխավորը: Հարքում այդ ոգին **խիպիլիկ** էր կոչվում, որը երբ մտնում էր բարդված խրձերի տակ՝ օրանն «անսպառ» էր լինում: Մեկ այլ վկայությանը, Նավասարդի **խվվիկը** բրդոտ գլխարկով սատանա էր, որը «թշնամի» էր երեխաներին և մեծերին: Սալմաստում **խվվիկ** էր կոչվում 8-12 տարեկան երեխաների խումբը, որը **խվվիկի** տոնին՝ Նավասարդին, այցելելով համագյուղացիների տները և երդիկներից գուլպաներ կախելով, չամիչ, ընկույզ, փշատ, պնդուկ ու այլ մրգեր էին պահանջում: Ստանալով նվերները, երեխաները երգերի ուղեկցությամբ օրհնում էին առատածեռը նվիրատուին՝ «**Աստված Ձեր հարսին ու փեսային միշտ պահապան լինի**» խոսքերով:

Տոնակատարության բնույթից երևում է, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայոց կենցաղում Նավասարդն առավելապես եղել է բերք ու բարիքի, կյանքի հարատևումը խորհրդանշող տոն: Նրա ուտեստային համալիրի գլխավոր

բաղադրիչները՝ հարիսան, կորկոտը և մրգեղենը կոչված են եղել ապահովելու հաջողությունները հատկապես տնտեսության (այգեգործություն, դաշտամշակություն, անասնապահություն) ոլորտներում, ինչպես նաև՝ անձնական-ընտանեկան կյանքում: Ամենահին էլ պատահական չէ, որ հայագիտության մեջ եղած որոշակի տեսակետների համաձայն, Նավասարդն իր ակունքներով կապված է բերքի հովանավոր, հյուրասիրության ու հյուրընկալ հեթանոսական աստծո՝ Ամանոր-Վանատուրի հետ, պահպանելով հանդերձ Հայկ-Արամազդյան ժառանգորդությունը:

67



*Հայոց
խորհուրդը
րիք,
ու երջան-*

*Նավասարդի
թող բերք ու բա-
խաղաղություն
կություն*

*պարզևի բոլոր ընտանիքներին: Հայկ Նահապետի անպարտ ոգին թող քաջություն
ու արդարություն սերմանի իր ժառանգների հոգիներում:*

⁶⁷ Նավասարդյան տոնը Հառիժում. 1980թ. / Լուսանկարը՝ Պ. Պողոսյանի /ց


12. ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ԽԱՂՈՂՕՐԻՆԵՔ



68



69



Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխումը՝ Տիրամորը նվիրված հայոց եկեղեցական տաղավարային գլխավոր տոներից է, որը կենցաղում առավել հայտնի է **«խաղողօրհներ»** անվամբ: Ըստ կրոնական ավանդության՝ **Աստվածամայրը խաղաղ մահ է ունեցել, ննջել և երկինք է փոխադրվել կամ վերափոխվել:**

Տոնը նշվում է օգոստոսի 15-ի մերձավոր կիրակի օրը: Հայոց կենցաղում տարածված այդ տոնի ընդհանուր համատեքստում առանձնանում էին **ուխտագնացությունները, մատաղները և հատկապես՝ խաղողօրհների արարողությունները:**

Խաղողօրհները հեթանոսական-բնապաշտական ծագում ունեցող ծես է, որն առնչվում է ավանդական Նավասարդի և հատկապես՝ բերք ու պտղի առատությունն ապահովող հավատալիքների հետ: Այդ ծեսն անցյալում կատարվում էր մեծ հանդիսությամբ, քանի որ խաղողը հայոց մեջ ընկալվում էր իբրև ազնվագույնը մրգերի ընդհանուր համալիրում: Աստծո որդին ևս հաճախ նմանեցվել է խաղողի

⁶⁸ Անահիտ Աստվածուհի և Մարիամ Աստվածածին

⁶⁹ Խաղողօրհներ / նկ. Կ. Նահապետյանի /

որթի, իսկ սուրբ պատարագի արարողակարգի գինին պատրաստում էին խաղողից: Հայտնի է նաև, որ Հիսուսը վերջին ընթրիքի ժամանակ՝ գինի մատուցելով իր աշակերտներին, ասել է. «այս է իմ արյունը»:

Ժամանակի ընթացքում հեթանոսական այդ տոնը քրիստոնեական երանգներ է ստացել և ամրապնդվել հայոց եկեղեցական տոնացույցում:

Մինչ Ս. Աստվածածինն նվիրված այս տոնը, **խաղողը** պաս էր համարվում (Վարդավառից առաջ նույն կարգավիճակում էր խնձորը):

Տոնը հատկապես տարածված էր այգեչատ շրջաններում, ուր խաղողը եկեղեցիներում օրհնելու արարողությունը որոշակի մրցակցային երանգներ էր ձեռք բերել: Այգետերերը՝ ամենաընտիր խաղողը թաշկինակների մեջ կապած, օրհնելու էին տանում նշանավոր վանքերը կամ եկեղեցիները: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր առաջինը տեղ հասնել, որպեսզի առաջին օրհնությունն իրենց խաղողի և այգիների վրա լինի: Խաղողօրհնեքի արարողությունից հետո սրբազան այդ վայրերում այգետերերը կազմակերպում էին խնջույքներ, որից հետո դիուզումնայի ուղեկցությամբ՝ օրհնված խաղողի ողկույզներով վերադառնում էին տները և շարունակում քեֆ-ուրախությունները:

Անցյալում խաղողօրհնեքի ծեսը հիմնականում տեղի էր ունենում այգիներում, երբ քահանան մի ձեռքին մկրատը, իսկ մյուսին՝ խաչը բռնած, այցելում էր եկեղեցու կամ տվյալ բնակավայրի երեցփոխի այգիները և հենց այնտեղ էլ կատարում խաղողի օրհնության արարողությունը: Խաղողից բաժին էին հանում նաև թռչուններին, որոնց համար օրհնված ողկույզները կախում էին աղբյուրների կամ խաչքարերի վրա:

Հայաստանի շատ բնակավայրերում տոնը վերածվել էր երիտասարդության ծանոթության, շփման, աղջիկների և նորահարսների գեղեցկության ցուցադրման մի յուրատեսակ արարողության:

Տոնի կապակցությամբ կազմակերպվում էին ուխտագնացություններ: Յուրաքանչյուր բնակավայր ուներ Տիրամորը նվիրված ուխտագնացության իր սրբատեղին: Հին երևանցիների և մերձակայքի բնակչության համար այն հիմնականում Նորքի Ս. Աստվածածին եկեղեցին էր՝ իր մրգառատ այգիներով: Ջավախքցիների համար՝ Վարձիայի Վերափոխման տաճարն էր, Շիրակի բնակչության համար՝ Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին, Օձունի և մերձակա բնակավայրերի համար՝ Օձունի Ս. Աստվածածին (նաև՝ Խաչգունդ կամ Խաչգոնդ) եկեղեցին, Ջնաբերդի համար (ուր այդ տոնը հայտնի էր «Մաղաղ» անունով)՝ գյուղի բար-

ձր լեռնային **Խաչի յուրդ** ամառանոցի տարածքում գտնվող Ս. Աստվածածնի մատուռը, մեղրեցիների համար՝ քաղաքի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցին և այլն:

Ուխտագնացություններն ուղեկցվում էին մատաղի արարողություններով: Սովորաբար զոհաբերում էին ուլ, ոչխար և աքլոր: Այդ տոնին համեմատաբար շատ մատաղներ էին խոստանում, քանի որ Աստվածամայրը ժողովրդի կողմից ոչ միայն սիրելի էր, այլև՝ զորավոր, իրենց իղձերն ու ցանկություններն ամբողջությամբ իրականացնող:

Մուսալեռցիների կենցաղում բավական տարածված էր Ս. Աստվածածնի տոնին հարիսայի մատաղ-օրհնության արարողությունը, որի կազմակերպիչները թաղական խորհուրդներն էին:

Մեղրեցիները՝ Մեծ թաղի Ս.Աստվածածին եկեղեցում, օրհնել էին տալիս խաղողը և այնուհետև տոնախմբություն կազմակերպում **բազարի** չինարիների պուրակում: Խնջույքներն ուղեկցվում էին երգերով ու պարերով, սազանդարների ելույթներով, որից հետո գնում էին ամառանոցային Լիշկվազ և այնտեղ շարունակում ուրախ հանդիսությունները: Մեղրեցիների ավանդույթով, ով ամենից շուտ էր հասնում Լիշկվազ, նրան «աղվես» էին անվանում, իսկ ամենաուշ ժամանողին՝ «**նալ հավաքող**» կամ «**հեզին**»:

Տոնի հաջորդ երկուշաբթին մեռելոց էր: Յուրաքանչյուր տնից ծիսական կերակուրներ և մասնավորապես խաղող էին տանում գերեզմանատուն կամ եկեղեցի, ուր միասին ճաշակում էին՝ միաժամանակ բաժին հանելով նաև աղքատներին: Վերջում կատարվում էր հոգեհանգիստ՝ «համայն ննջելոց համար»:



Աստվածամոր օրհնանքն ու բերքի հովանավոր հնագույն ոգիների ուժը թող միշտ հաջողություն բերի բարիքների հավերժական արարողին՝ հողի մշակին:


⁷⁰ Խաղողօրհնեքի արարողությունը Նորքի Ս. Աստվածածին եկեղեցում. 21-րդ դ. սկիզբ /Լուսանկարը՝ Դ. Առաքելյանի /

⁷¹ Խաղողօրհնեքի արարողությունը Նորքի Ս. Աստվածածին եկեղեցում. 21-րդ դ. սկիզբ /Լուսանկարը՝ Դ. Առաքելյանի /

13. ԽԱՉՎԵՐԱՑ - ՍՈՒՐԲ ԽԱՉ

72

Խաչվերաց կամ յոց եկեղեցական տաճորը վերաբերում է Հի-խաչելության հիշատատունը պատմական է: Խոսքով Բ. Փարվիզ թա-լով Բյուզանդիայի դեմ, մը, ուր գերության է փայտը, որի վրա տան-Քրիստոսին: Հերակլ կայ-թել պարսիկներին և վե-խաչի ազատագրման ունեցել բյուզանդական զորքուն կռվող հայկական զորագունդը՝ իշխան ՄԺԺ Գ-նունու հրամանատարությամբ:



Սուրբ Խաչի տունը հա-ղավարային տոներից է, սուս Քրիստոսի կին: Ակունքներով այս Մ.թ. 610 թ. պարսից գավորը պատերազմե-նվաճում է Երուսաղե-վերցնում այն խաչա-ջահար էին արել սրին հաջողվում է հաղ-րադարձնել խաչը: Սուրբ գործում մեծ ավանդ է

Սրբազան Խաչը գերությունից ազատագրելու հիշատակը հավերժացնելու կապակցությամբ, քրիստոնյա բոլոր եկեղեցիներում հաստատվեց **Խաչվերացի** տո-նը:

Ազատագրված Խաչի վերադարձի ճանապարհը (**Պարսկաստան-Կոստանդնուպոլիս - Երուսաղեմ**) անցնում էր Հայաստանի տարածքով, որի հետ կապված պահպանվել են բազում ավանդույթներ: Դրանցից մեկը՝ Կարնո աշխար-հի հարավ-արևելյան մասում գտնվող լեռան ամենաբարձր գագաթի մասին է, որը կոչվում է Խաչափայտ:

Պարսիկները, չհամակերպվելով այդ պարտությանը, որոշ ժամանակ անց փոր-ծեցին կրկին գերել Սուրբ Խաչը, սակայն հայերը կարողացան հաղթել նրանց: Ուշագրավ է, որ իրադարձությունների այդ ընթացքում ազատագրված խաչափայ-տի տեղանքը վերածվել էր սառը և վճիտ սրբազան աղբյուրի:

⁷² «Ամենափրկիչ խաչքարը», 1279 թ., Արարատի շրջան / Լուսանկարը՝ Հուսիկ Մելքոնյանի /

Կարնո լեռների ստորոտում էր գտնվում նաև Խաչկա վանքը, որը Խաչվերացի տոնին նվիրված ամենագանգվածային ուխտավայրերից էր:

Մինչև XX դ. սկզբները Խաչվերացի տոնը (այն կենցաղում հիմնականում տարածված էր **Սփխեչ** կամ **Սըբխեչ** անունով) նշում էին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից: Երբեմն յուրաքանչյուր բնակավայր ուներ տոնը նշելու իր օրը: Չնայած կենցաղում Խաչվերաց տոնի կատարման ժամկետային մասնակի տարբերություններին, այն մեծմասամբ նշվում էր կիրակի օրը: Սակայն Հայոց եկեղեցու կողմից այդ տոնը որոշակիորեն կանոնարկված է և նշվում է սեպտեմբերի 11-ից մինչև 17-ը ընկած կիրակի օրը:

Ամենուր նախապատրաստվում էին՝ տոնը հանդիսավորությամբ նշելու: Այդ ժամանակ հիմնականում արդեն ավարտվել էին բերքահավաքի աշխատանքները: Տանտիրուհիները կարգի էին բերում բնակարանները, տնտեսությունը և սպասում՝ ուխտավոր հյուրերին:

Սուրբ Խաչի տոնը աչքի էր ընկնում ուխտագնացություններով: Յուրաքանչյուր բնակավայր ուներ տոնին նվիրված իր ուխտավայրը: Մինչ այժմ էլ Խաչվերաց տոնի նշանավոր ուխտավայրերից է Վայոց Ձորի Արկազի Սուրբ Խաչ եկեղեցին: Ձնաբերդցիների համար ևս ամենամեծ ժողովրդականություն վայելող տոներից էր Խաչվերացը՝ նախնիների հիշատակման օրը: Այն տեղական բարբառով **Խրով** է կոչվում՝ տոնի ծիսական գլխավոր ուտեստի՝ թոնրի մեջ ամբողջական զոհաբերված-խորոված ուլի անվամբ:

Ձոհաբերության նպատակով ուխտավորներն իրենց հետ տանում էին մատաղացու կենդանիներ և թռչուններ (ուլ, այծ, աքլոր և այլն): Տոնի կապակցությամբ եկեղեցիներին ևս մատուցում էին որոշակի նվերներ (ուլեր, գորգեր, տարբեր գործվածքներ և այլն): Այնքան համատարած էր Սուրբ Խաչին ուլ մատաղ անելու սովորույթը, որ կենցաղում այդ տոնը շատ հաճախ ուներ նաև նշված երևույթը բնութագրող անվանումներ՝ **Ուլոց** (Ուլոց), **Ուլերի կտորած**, **Խրով** և այլն:

Մատաղացու կենդանիներին ջր, որից հետո մորթում կամ՝ ա-
Ուխտավայրերում կազմակերպ-
և, մասնավորապես, ազգային-
հանդիսություններ, որոնք առանձնակի շքեղություն էին հաղորդում սրբավայրե-
րում կազմակերպված ընդհանուր արարողություններին:



պատեցնում էին եկեղեցու շուր-
կանջները կտրում:
վում էին նաև տոնավաճառներ
երաժշտական ու խաղային

Ուխտի էր գնում գրեթե ողջ համայնքը, մասնավորապես տարեցները՝ կանանց որոշակի գերակայությամբ: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում հիվանդները, որոնք փրկության հույսը դնելով սրբի վրա, տասնյակ կիլոմետրեր էին ոտքով անցնում՝ բաղձալի ուխտավայրը հասնելու համար:

Տարածված էին Սուրբ Խաչի տոնին՝ հանգուցյալներին նվիրված հոգեհանգստյան արարողությունները, որոնց նկատելի մասը նշվում էր տոնի պահոց՝ ուրբաթ օրը: Տարոնում և Մուշում առավոտյան, ժամերգությունից հետո, կանայք խաղող, ձմերուկ և հաց վերցրած գնում էին գերեզմանատուն, օրհնել էին տալիս մերձավորների գերեզմանները և ուտելիքներից բաժին հանում քահանային ու աղքատների: Մնացածը տանում էին տուն և բաժանում ընտանիքի անդամներին:

Նոր հանգուցյալ ունեցող ընտանիքներում Խաչվերացի նախորդ՝ ուրբաթ օրը ոսպով շորվա էին եփում և բաժանում որպես հոգեբաժին:

Վասպուրականում մեծ տարածում ուներ այդ օրվա կապակցությամբ փայնաքեօշ (համեմով հաց) թխելու և այն աղքատներին բաժանելու սովորույթը:

Մուսալեռցիները՝ հավատարիմ մնալով ավանդույթներին, այդ օրը (ինչպես իրենք էին ասում՝ «**խաչեյն Ջաղագ**») ուխտի էին գնում Թովմաս Առաքյալի վանքը, ուր քահանայի կողմից պատարագ մատուցելուց հետո պատրաստում էին սրբազան ուտեստը՝ հարիսան: Յողունօլուքցին, հաջիհաբիբլիցին և մերձակա գյուղերից եկածները, նախապես, իրենց հետ ուխտավայր էին տանում մատաղացու կենդանիներ և ցորեն: Թմբուկը և հարիսայի պատրաստությունն այստեղ մասնավորապես յողունօլուքցիների մենաշնորհն էր: Նմանատիպ հանդիսություններ կատարվում էր նաև Քաբուսիեի Վերին աղբյուրի թթաստանում:

Սուրբ Խաչի հետ կապված ժողովրդական ավանդույթներից էր հանգուցյալների ընտանիքներին՝ հարազատների կողմից ուլ կամ գառ նվիրելու սովորույթը: Դրանք թոնրի մեջ խորովելով, բլղուր ձավարով ու փլավի վրա դրված, բաժանում էին սգի մեջ գտնվող մերձավորների ընտանիքներին:

Հին Երևանում շատ տարածված էր այդ տոնին (նշվում էր սեպտեմբերի 15-ին) ուլեր խորովելու ավանդույթը: Գրեթե ամենուր բարեկամները սգավոր ազգականներին ուլեր էին նվիրում: Ուլը մաշկում էին ու այն՝ ամբողջապես շամփուրի վրա հագցնելով, կախում թոնրի մեջ: Դնում էին այնպես, որ մեջտեղը մի փոքր կախ ընկնի և ճարպը հալելիս հոսի տակը դրած կճուճով ձավարե փլավի վրա: Թոնրի բերանը ծածկում էին կավե կափարիչով և շուրջը ցեխով այնպես էին պատում, որ ամբողջ տաքությունը մնա թոնրի մեջ: Տաշտի՝ թոնրի բերանը ծածկող կավե կա-

փարիչի կենտրոնում լցնում էին բռունցքի մեծությամբ ցեխագունդ, որի միջոցով որոշում էին խորովի վերջնական պատրաստ լինելը:

Սուրբ Խաչի նախորդ շաբաթ օրն արգելվում էին հարսանիքներն ու կնունքները:

Տոնի հաջորդ՝ երկուշաբթի օրը, մեծ մեռելոց է. այդ օրը գրեթե բոլորն այցելում են իրենց հարազատների շիրիմներին:

73



74



Աստծո որդու սուրբ Խաչափայտը թող բարի ու ազնիվ մարդկանց մշտական պահապանը լինի: Նրա հավերժական օրհնանքը լինի բոլոր ողջերին ու նահատակներին:

ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՈՒՄ

Հանրապետության բնակչության շրջանում ներկայում կենցաղավարող տոները արդյունք են՝ էթնիկ ավանդույթների էվոլյուցիայի, որը պայմանավորված է սո-

⁷³ Ուխտագնացություն Արկազի Սուրբ Խաչի եկեղեցի. Վայոց Ձոր, 1986 թ. (լուսանկարում հեղինակի մայրն է՝ Երևանաբնակ վայոցձորցի /գ. Ազատեկ/ Արևիկ Աղասու Միքայելյանը և մորեղբայրը՝ Լյուդվիգ Աղասու Միքայելյանը)

⁷⁴ Արկազի Սուրբ Խաչ եկեղեցին. Վայոց Ձոր, 1861 թ. / լուսանկարը՝ Դ. Առաքելյանի/

ցիալական, տնտեսական, պետական-քաղաքական, մշակութային և կրոնական ու-
որտներում կատարված որակապես տարաբնույթ գործընթացներով:

Հայոց արդի տոնական համակարգի ձևավորման գործընթացում նշանակալից
դեր են ունեցել Հայաստանի երեք հանրապետությունները, որոնք միմյանցից տար-
բերվում են ինչպես քաղաքական կառուցվածքով, էթնիկ կապերի ուղղվածու-
թյամբ, կրոնի կամ հավատքի հանդեպ վերաբերմունքով, սոցիալ-տնտեսական
գործընթացների ու մշակութային կապերի ինտենսիվությամբ, այնպես էլ՝ ավանդա-
կան մշակութային տարրերի ադապտացիայի ներուժով: Այս տեսանկյունով են դի-
տարկվել հայոց տոնական համակարգի զարգացման հետևյալ փուլերը.

1. Հայաստանի Առաջին Հանրապետություն (1918-1920 թթ.):
2. Հայաստանի Երկրորդ կամ Խորհրդային Հանրապետություն (1920- 1990 թթ.):
3. Հայաստանի Երրորդ Հանրապետություն (1991- 2006 թթ. ...):

Ինչպես տեսանք, ընդհուպ XX դ.-ը, հայոց կենցաղում ամենից տարածված տո-
ներն էին՝ Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդը, Սուրբ Սարգիսը, Տեառնընդառաջը, Բա-
րեկենդանը, Մեծ Պասը, Ծաղկազարդը, Ջատիկը, Համբարձունը, Վարդավառը, Ս.
Աստվածածինը և Ս.Խաչը⁷⁵, որոնցից յուրաքանչյուրը ծեսերի և սովորությունների
մի միկրոհամալիր էր՝ իրենց նվիրական ուտեստով, խնջույքներով, խաղերով, հա-
վատալիքներով, ավանդազրույցներով, եկեղեցական հատուկ արարողակարգով,
շնորհավորական փոխայցելություններով, նվիրատվություններով, հարգանքի մա-
տուցման ձևերով և այլ հիմնական բաղադրիչներով: Գոյություն ուներ որոշակի-
րեն ձևավորված տոնական համակարգ, որը, տեղական առանձնահատկություննե-
րով հանդերձ, ուներ համընդհանուր բնույթ, ինչը և վկայում էր դրանց համաժողո-
վրդական կամ համազգային նկարագրի մասին:

Մինչև XX դ. սկզբները, ազգային պետականության տևական բացակայության
պայմաններում, ավանդական տոների պահպանման մենաշնորհը՝ Հայոց
Առաքելական եկեղեցունն էր:

Ավանդական այդ տոները հետագայում էլ շարունակեցին գոյատևել, չնայած
դարասկզբին կատարված եղերական իրադարձություններին՝ թուրքերի կողմից
արևմտահայության զանգվածային կոտորածներին և տեղահանությանը: Անշուշտ,
այդ ամենը պիտի ազդեր տոների անկմանը, քանի որ ֆիզիկապես ոչնչացվեց հար-
յուրամյակներ շարունակ տոներ նշող էթնոսի գենոֆոնդի զգալի հատվածը, դրա-

⁷⁵ Նշված տոներից առավել տարածված էին՝ Ջատիկը, Վարդավառը, Քրիստոսի Ծնունդը
և, մասնավորապես՝ Նոր Տարին: Վերջինս մյուս տոներից տարբերվում էր առավել աշ-
խարհիկ բովանդակությամբ:

նով իսկ՝ խզում առաջացնելով միջսերնդային ժառանգորդության օբյեկտիվ գործընթացում: Բացի դրանից, եղեռնից փրկվածները և նրանց սերունդները զրկվեցին հայրենիքից, հայրենի սրբավայրերից՝ տոների կենցաղավարման, սնուցման հիմնական աղբյուրից, որը դարձյալ նպաստեց ավանդական տոների անկմանը:

Տոների, և ընդհանրապես, ազգային մշակույթի պահպանման գլխավոր երաշխիքը դարձավ 1918 թ. ստեղծված Հայկական Առաջին Հանրապետությունը, որը, որպես ազգային պետություն, ոչ միայն կարողացավ նպաստավոր պայմաններ ստեղծել ավանդության տոների պահպանման ու տարածման համար, այլև ձևավորեց իր պետական տոնական համակարգը՝ հիմնականում անցյալի ավանդույթային-կրոնական, ինչպես նաև նոր՝ աշխարհիկ բովանդակությամբ տոների հիմքի վրա: Դրանք՝ իրենց ծագմամբ, կապված էին ազգային և միջազգային նշանակություն ունեցող պետական-քաղաքական նշանակալից իրադարձությունների հետ: Այդ տոներից էին Հայաստանի Հանրապետության պառ լամենտի բացման օրը (Օգոստոսի¹), Հայաստանի Հանրապետության Անկախության օրը (Մայիսի 28), ինչպես նաև Աշխատավորների (Մայիսի 1) և Ռուսական Մեծ հեղափոխության (փետրվարի 27– նոր տոմարով՝ Մարտի 12) օրերը:

Ազգային զարթոնքի այդ ժամանակահատվածում կենցաղում գերակշռում էին այն տոները, որոնք XIX դ. վերջերին տարածված էին Պատմական Հայաստանի բոլոր գավառներում և հայկական գաղթօջախներում: Այդ տոներն էին՝ Նոր Տարի-Ամանորը, Քրիստոսի Ծնունդն ու Սկրտությունը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ջատիկը, Համբարձունը, որոնք ամբողջությամբ, ինչպես նաև Վարդանանց, Թարգմանչաց և Գրիգոր Լուսավորչին նվիրված տոները Հանրապետության կողմից սահմանվեցին որպես հանընդհանուր պետական տոներ, միաժամանակ ընդունելով դրանց եկեղեցական կարգավիճակը:

Հայաստանի Առաջին Հանրապետության կողմից սահմանված տոնացույցում տեղ էր հատկացվել նաև այդ երկրում բնակվող այլէթնիկ հանրություններին: Պետության կողմից հատուկ տոներ էին սահմանվել ռուսների համար (Ավետում, Աստվածածնի Վերափոխում, Խաչվերաց, Նիկողայոս հրաշագործի տոն, Պողոս Առաքյալի և Հովհաննես Սկրտչի [Կարապետի] օրեր, Քրիստոսի Ծնունդ և Սկրտություն, Բարեկենդան, Ջատիկ ու Համբարձուն)⁷⁶:

⁷⁶ Հայաստանի Առաջին Հանրապետության պետական տոնացույցում (մասնավորապես՝ հայերի և ռուսների համար նախատեսված մասում) որոշ բացթողումներ կային, որոնք, ըստ երևույթին, պայմանավորված էին այն հանգամանքով, որ տոնաստեղծ «Խորհուրդները» չհասցրեցին մշակել իրականությանը համապատասխանող պետական տոնացույցի

Առաջին Հանրապետությունը մահմեդականների համար ևս առանձին տոների ու հիշատակի օրեր էր սահմանել՝ նախապես հաշվի առնելով կենցաղում դրանց առավել տարածվածության իրողությունը⁷⁷:

Առաջին Հանրապետության տոնացույցի նման կառուցվածքն ինքնին վկայում է նորաստեղծ հայոց պետության ժողովրդավարական բնույթի մասին: Այն, ըստ էության, արտացոլում է ոչ միայն հայության այդ հատվածի էթնիկ ավանդույթները, այլև՝ երկրի էթնոքաղաքական ռեալ իրավիճակը:

Պետական տոնացույցում ռուսական կրոնական և աշխարհիկ (քաղաքական) տոների առկայությունը պայմանավորված էր՝ ինչպես Հանրապետությունում ռուսական էթնիկ զանգվածի գոյությամբ, այնպես էլ՝ Ռուսաստանի հետ քաղաքական, կրոնական և մշակութային կապերի ավանդույթներով:

Խորհրդային կարգերի հաստատմամբ հայոց տոնական համակարգը մտավ զարգացման նոր փուլ, որը բնութագրվում է պետության կողմից՝ ավանդույթային-կրոնական տոների դեմ բացահայտ անհանդուրժողականությամբ: Ավանդական տոների նկատմամբ պետական հալածական քաղաքականությամբ հատկապես առանձնանում է Հայաստանի Խորհրդային Հանրապետության սկզբնական շրջանը՝ 1920-1930-ական թթ.: Բոլշևիկյան պետության վարած այդ քաղաքականության պայմաններում էլ՝ «հին» տոները շարունակեցին գոյատևել:

1920 թ. իշխանափոխության արդյունքում Հայաստանում փոխվեց նաև նախորդ պետական տոնական համակարգը: Նախ և առաջ վերացվեց Հայաստանի Առաջին Հանրապետության պետական տոնացույցը: Ասպարեզ եկան տոներ, որոնք բովանդակությամբ ապազգային լինելով հանդերձ, գրեթե ամբողջությամբ կապված էին միջազգային հեղափոխական շարժման գաղափարախոսության հետ:

վերջնական, հստակ տարբերակը, այլապես, օրինակ, Վարդավառի տոնը չէր բացակայի ընդհանրապես, իսկ Աստվածածնի և Խաչվերաց տոները չէին հայտնվի միայն ռուսների համար նախատեսված հատվածում: Այդ երեք տոներն էլ հայերի կենցաղում բավական տարածված էին: Նույն թերացումները կային նաև ռուսների համար սահմանված տոների բաժնում, քանի որ էթնիկ այդ փոքրամասնությանը վերաբերող տոները ևս տոնացույցում հստակորեն խմբագրված չէին (աշխարհիկ և կրոնական տոների տարբեր մասերում էին ներկայացված: Բացի դրանից նշված չէին կրոնական առանձին տոների (օրինակ՝ Քրիստոսի Ծնունդ և Մկրտություն, Ջատիկ և այլն) կատարման ժամկետները, որոնք տարբերվում էին հայկականից:

⁷⁷ Մահմեդականների (մասնավորապես՝ թաթար-թուրքերը. այսպես էին կոչվում ադրբեջանցիները ոչ վաղ անցյալում) շրջանում առավել տարածվածությամբ առանձնանում էին՝ Նովրուզ Բայրամը և Իմամ Յուսեյնի հիշատակի («Մուհարեմի տոնը») օրվան նվիրված հանդիսությունները:

Ուշագրավ է, որ ավանդութային-կրոնական առանձին տոներ, շատ կարճ տևողությամբ նույնիսկ, մուտք գործեցին Հայոց Խորհրդային (Երկրորդ) Հանրապետության պետական տոնացույց: Չնայած այդ պետության հակակրոնական ուղղվածությանը և բնականաբար՝ ազգային-կրոնական արժեքների նկատմամբ հալածական քաղաքականությանը, դրանք կենցաղում դեռևս տարածված էին, քանի որ բավական խորը արմատներ ունեին: Խորհրդային պետական կառույցները հենց այդ գործոնն էին նկատի առել՝ նոր տոնացույցը մշակելիս: Կենցաղավարում էին հիշյալ տոների ավանդական գրեթե բոլոր բաղադրիչները. տոնածիսական ուտեստ, խնջույքներ, ուխտագնացություններ, մատաղներ, ազգային երգ ու պարով և խաղերով ուղեկցվող հանդիսություններ, ազգականների միջև փոխայցելություններ, նվիրատվություններ և այլն:

Սակայն արդեն իսկ նկատվում էր ավանդական տոների աստիճանական անկման որոշակի միտում, որը պայմանավորված էր մասնավորապես դրանց կրոնական-եկեղեցական բաղադրիչների մերժողական քաղաքականությամբ: Քրիստոնեական այդ տոները՝ կենցաղից դուրս մղելու նպատակով, պետությունը շատ հաճախ կազմակերպում էր հակակրոնական բնույթի միջոցառումներ՝ երթեր, միտինգներ, թատերականացված ներկայացումներ:

Ավանդական հին տոների դեմ պայքարի հիմնական կազմակերպիչը Խորհրդային պետությունն էր՝ իր գաղափարախոսական ողջ զինանոցով:

Հաճախ, այդ տոներին հակակշիռ, ասպարեզ էին գալիս նոր ծես-միջոցառումներ, որոնք թե՛ կատարման ժամկետով և թե՛ անվանմամբ (բացառությամբ՝ հեղափոխական բովանդակությամբ նոր տիտղոսների) «նմանվում» էին ավանդութային-կրոնական տոներին: Բայց այդ նմանությունը թվացյալ էր, արհեստածին, և միտինգային բնույթի նման միջոցառումները նպատակաուղղված էին՝ կենցաղից դուրս մղելու հին մտածողությունը Խորհրդանշող կրոնական տոները և փոխարենը՝ գովերգելու հեղափոխական նոր իրականությունը: Սրանք էին նորաստեղծ բուլշևիկյան տոների հիմնական գործառույթները, և այդ առումով պայքարի սլաքը ուղղված էր մասնավորապես Քրիստոսի Ծննդյան և Հարության (Ջատկի) տոների դեմ:

Վերը նշված տոներին «փոխարինելու» եկան «Կարմիր ծնունդը» (վերջինիս ամենատարածված բաղադրիչը՝ «Կարմիր կնունքի» արարողությունն էր) ու «Կոմերիտական Ջատիկը»: Դրանք միտված էին՝ ծննդյան և զատկական տոների ժխտմանը: Կրոնական տոների ռե-ակցիոն էությունը պրոպագանդե-լուն էին ուղղորդված լայն մասսաների շրջանում կազմակերպված միտինգները, երթերը,

դասախոսությունները և թատերական ներկայացումները:

Նմանատիպ պետական միջոցառումներ կազմակերպվում էին նաև ավանդութային-կրոնական այլ տոների առիթներով. բոլշևիկյան տարբերակներում ևս հիմնականում պահպանվում էին տոնական արարողակարգերի ավանդական ժամկետները: Այդ միջոցառումներն ուղեկցվում էին իշխանությունների կողմից եկեղեցիների փակման և հոգևորականների հալածանքի համընդհանուր արշավով, որոնք բացասաբար էին անդրադառնում եկեղեցու և հոգևորականների հետ անմիջականորեն առնչվող ավանդական տոների մի շարք բաղադրիչների (օրինակ՝ մկրտություն, հուղարկավորություն, պատարագ, ժամերգություն և այլն) վրա:

Պետության ամենաեռանդուն մասնակցությամբ աստիճանաբար նեղանում էին ավանդութային տոների տարածման շրջանակները: Տոնածիսական արարողակարգերում եկեղեցու և նրա սպասավորների գործառույթները աստիճանաբար օտարվում էին ժողովրդի կենցաղից: Այդ տոների կիրարկման հիմնական ոլորտը շարունակում էր մնալ ազգակցական-դրացիական միջավայրը և հատկապես՝ ընտանիքը, որը նույնպես զերծ չմնաց պետական «հալածանքներից» (խոսքը վերաբերում է, օրինակ, ծիսական ուտեստեղենի պատրաստմանը, տոնական նվերների վաճառքին, տոնածառին, շնորհավորական փոխայցելություններին և այլն): Նույնիսկ այդ պայմաններում Քրիստոսի Ծննդյան և Հարության տոների հետ միասին կենցաղում դեռևս պահպանվում էին ավանդութային-կրոնական բոլոր գլխավոր տոները՝ Սուրբ Սարգիսը, Տեառնընդառաջը, Վարդավառը, Մեծ Պասքը, Համբարձումը, Սուրբ Աստվածածինը, Սուրբ Խաչը և իհարկե՝ Նոր Տարին: Ինչ վերաբերում է Նոր Տարուն, ապա այն շարունակելով մնալ կենցաղում ամենատարածված և սիրված տոներից մեկը, սկզբնական շրջանում ևս արժանացավ բոլշևիկյան «տեսաբանների» մերժողական վերաբերմունքին, նրանց կողմից ընկալվելով որպես քրիստոնեության հետ կապված և նոր հասարակարգ կառուցող «պրոլետարիատի մտքին ու զգացմունքին ոչինչ չասող տոն»: Փոխարենն առաջարկվում էր «պրոլետարիատի համար» ստեղծել իր Տարեմուտի տոնը, որը պետք է կապված լինի «հեղափոխության պատմության ամենանշանավոր մոմենտի հետ»:

Խորհրդային ժամանակաշրջանում նոր ասպարեզ եկած տոներից հատկապես առանձնանում էին՝ Մայիսի 1-ը (Աշխատավորների միջազգային օրը) և Մարտի 8-ը (Կանանց միջազգային օրը), որոնք, չնայած օտար ծագմանը և իրենց առջև դրված զուտ հեղափոխական-պրոպագանդիստական խնդիրներին, աստիճանա-

բար ամրապնդվեցին հայկական տոնական համակարգում, հետագայում նույնիսկ ներթափանցելով ընտանեկան-ազգակցական միջավայր: Հեղափոխական այդ ժամանակաշրջանն իր արտացոլումը գտավ նաև նորաստեղծ բուլղարիայի «պրեզիա-յուն» և «ֆոլկլորում», որոնցում մեծ մասամբ ծաղրի էին ենթարկվում ավանդու-թյուն-կրոնական տոների ու ծեսերի «գլխավոր կերպարները» (Հիսուս Քրիստոս, Մարիամ Աստվածածին, Սուրբ Սարգիս և այլն) և նրանց «ոչ գիտակից» համախոհ-ները:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ավանդութային տոները որոշակի աշխուժացում ապրեցին. դրանք հիմնականում պայմանավորված էին տարածաշրջանի բարդ իրավիճակով: Ռազմաճակատ մեկնած մարտիկի ճակատա-գիրը դարձավ նրանց հարազատների մտահոգության առաջնահերթ խնդիրը: Թի-կունքում մնացած տարեց անձանց, մասնավորապես՝ կանանց մոտ վերադարձացան ազգային ծեսերն ու սովորությունները: Իրենց ավանդական խառնվածքով, նախապաշարուններով, հատկապես՝ ուխտերով, մատաղներով, մեռելոցներով, մոնավառություններով, աղոթք-օրհնանքներով նրանք փորձում էին աջակցել ռազմաճակատում գտվող հարազատներին, դրանցով իսկ՝ զերծ պահել նրանց վերահաս վտանգներից:

Ինչ վերաբերում է խորհրդային պետական տոներին, ապա դրանք դարձյալ ա-ռանձնանում էին միտինգայնությամբ, ուր նախկինում գերակշռող աթեիստական բնույթի խնդիրները տեղի էին տվել բուն պատերազմական հիմնահարցերին: Այդ տոներն իրենցից ներկայացնում էին ռազմաճակատային հաջողությունների և ա-ռանձին սխրագործությունների փառաբանման, զոհվածների հիշատակի մեծար-ման միջոցառումներ:

Գրեթե նույն հատկանիշներով էր բնութագրվում հայոց տոնածիսական համա-կարգը՝ զրկանքներով, կորուստներով և սպասումներով հագեցված ետպատե-րազմյան շրջանում:

Հետագա տարիներին՝ խորհրդային պետության կողմից շարունակաբար տար-վող հակակրոնական քաղաքականության և քաղաքագոյացման (ուրբանիզացիոն) գործընթացների հետևանքով՝ աստիճանաբար քանդվում էին կենցաղի ու մշակույ-թի հնագույն ձևերի կենսագործունեության հիմնական ոլորտ հանդիսացող ավանդ-ական-սոցիալական կառույցները: Դրա արդյունքում էլ ազգային տոների անկումն առավել արագ ընթացք ստացավ: Դրանց զուգահեռ, «վերելք» էին ապրում խորհր-դային պետական տոները, որոնք ընկալվում էին նաև որպես պետության ռազմա-

կան և տնտեսական հզորության խորհրդանիշներ: Այս և շատ այլ գործոններով (խաղաղ պայմաններ, կենսամակարդակի աստիճանական աճ, ժամանցի հնարավորություն, իմաստային տրանսֆորմացիա և այլն) էր պայմանավորված կենցաղում խորհրդային պետական տոների տարածման մասշտաբների ընդլայնումը:

Խորհրդային այդ տոների հիմնական ակտիվ մասնակիցը, ետպատերազմյան հիսնականներին, արդեն իսկ խորհրդային արժեքներով դաստիարակված երիտասարդ և մասամբ՝ միջին սերունդն էր, իսկ ավանդության տոների գլխավոր կրողը հանդիսացող տարեց սերունդը կյանքի ասպարեզը բնականաբար փոխանցում էր նորերին:

Ընդհուպ 1980-ական թթ.-ը, կենցաղում արդեն ամենից շատ տարածված էին խորհրդային համապետական տոները, որոնք ընդամենը տասնամյակների պատմություն ունեին: Ինչ վերաբերում է ավանդության-կրոնական տոներին, ապա բացառությամբ Նոր Տարվա, Ջատկի, մասամբ՝ Վարդավառի), բավական քիչ էին կենցաղավարում:

Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով, 1980-ական թթ. սկզբներին ավանդության տոներն ունեին ցածր վարկանիշ: Չնայած անկման միտումներին ու կենցաղային փոխակերպումներին, դրանք բավական տարածված էին պատմաազգագրական մարզերի գյուղական բնակչության շրջանում: Այդ ուսումնասիրությունների միջոցով նաև բացահայտվեցին տոների տարածվածության մասշտաբները՝ հայ էթնոսի ներէթնիկ և միգրացիոն խմբերում: Այս առումով ուշագրավ են երևանցիների սեռա-տարիքային և սոցիալ-մասնագիտական տարբեր շերտերում 1970-ական թթ. վերջերին անցկացված ուսումնասիրությունների արդյունքները: Այդ դիտարկումներով, մայրաքաղաքի երիտասարդությունը (նույնիսկ՝ մտավոր աշխատանքով զբաղվածները) երբեմն առավել հակված էին նույնիսկ ձևափոխված ազգային ավանդույթներին: Մասնավորապես, դա վերաբերում էր Վարդավառին, որն ամենից շատ նշվել էր տարիքային վերոհիշյալ խմբի մտավոր ոլորտում զբաղված գյուղական վերաբնակների շրջանում: Այդ երևույթը հիմնականում պայմանավորված էր քաղաքային միջավայրում ազգային ավանդույթները կրող ներէթնիկ խմբերի կենտրոնացմամբ և սերունդների շրջանում էթնոմշակութային այդ արժեքների ադապտացիոն գործընթացներով: Ընդհանուր առմամբ, ավանդության տոներն ամենից շատ տարածված էր գյուղական միգրանտների և հայրենադարձների շրջանում: Այս առումով ամենացածր վարկանիշն ունեին քաղաքային վերաբնակները:

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ցույց տվեցին, որ ավանդութային-կրոնական տոներն առավել տարածված էին ընտանեկան-ազգակցական և մասամբ՝ դրացիական և ընկերային ոլորտներում: Վերջիններս, ոչ միայն դրանց կենցաղավարման ամենատարածված սոցիալական կառույցներն են, այլև՝ այդ արժեքները սերունդներին փոխանցող տեղեկատվական գլխավոր մեխանիզմները: Հատկապես խորհրդային ժամանակաշրջանում, ինֆորմացիոն այլ աղբյուրների բացակայության կամ սակավության պայմաններում, հիշյալ գործառույթը գլխավորապես կատարում էին ընտանիքներն ու սոցիալական այդ խմբերը:

Վերակառուցման և հատկապես՝ Արցախյան շարժման ալիքի վրա սկիզբ առած համազգային նոր զարթոնքը ամբողջությամբ արտացոլվեց հայոց տոնածիսական համակարգում:

1980-1990-ական թթ. կատարված սոցիոլոգիական և ազգագրական համեմատական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեղի են ունեցել տոնածիսական վարքագծային որոշակի փոփոխություններ: Խորհրդային տոների կտրուկ անկմանը զուգընթաց, ավանդութային տոների և ծեսերի նկատելի աճը 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբներին հիմնականում պայմանավորված էր համազգային նոր զարթոնքով, որի արդյունքում ստեղծված հայոց նորանկախ Երրորդ Հանրապետությունը հռչակվեց որպես ազգային և կրոնական արժեքների հիմնական կրող ու ժառանգորդ: Գյուղական բնակավայրերում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների (1990թ.) տվյալներով ավանդական տոների վարկանիշը արդեն բավական բարձր էր: Նմանատիպ պատկեր ցույց տվեցին 1992-1999 թթ. ՀՀ քաղաքներում, այդ թվում՝ Երևանում կատարված հետազոտությունների արդյունքները:

Տեղի ունեցած այդ փոփոխություններն ունեին ոչ այնքան խորքային-կենցաղային, որքան արժեքային, էթնոհոգեբանական երանգավորում, որոնք պայմանավորված են **համազգային զարթոնք** երևույթի առանձնահատկությամբ:

Ուշագրավ էին նաև տոնի մասնակիցների սոցիալ-մասնագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Ետխորհրդային շրջանում ավանդութային բոլոր տոները գրեթե հավասարաչափ տարածվածություն ունեին սոցիալ-մասնագիտական բոլոր խմբերում: Արդեն էապես փոխվել էր ֆիզիկական, մտավոր և հատկապես՝ ղեկավար աշխատանքով զբաղված անձանց վերաբերմունքի մեջ եղած բևեռային տարբերությունները նշված այն տոների նկատմամբ, որոնք բնորոշ էին խորհրդային շրջանին: Այս առումով սոցիալական այդ շերտերի համահարթեցման

գործընթացը հատկապես նկատելի էր 1990-ական թթ. սկզբներին, որը սերտորեն առնչվում էր անկախ պետականության վերականգնման, էթնիկ և կրոնական արժեքների վերագնահատման համազգային բնույթի գործընթացների հետ:

Ինչպես նշվեց, 1980-ական թթ. համազգային զարթոնքը արտահայտվեց հատկապես կենցաղում ավանդության-կրոնական տոների վերընթաց և խորհրդային տոների վարընթաց հակադիր գործընթացներով: Ավանդության տոները ստացան նաև պետական հովանավորություն, որովհետև նորաստեղծ Հանրապետությունը հռչակվեց որպես ազգային և կրոնական ժառանգության հիմնական կրող:

Տակավին 1970-ական թթ. վերջերին և 1980-ականների սկզբներին արդեն իսկ նկատվում էին ավանդության տոների «վերականգնման» միտումներ: Այդ գործում որոշակի նախաձեռնություն էր ցուցաբերում խորհրդային պետությունը: Բայց վերջինիս հակակրոնական ուղղվածության պատճառով, հիմնական ուշադրությունը դարձվում էր այն տոներին, որոնք համեմատաբար «քիչ էին քրիստոնեացված», հետևաբար՝ առնչությունը կրոնի կամ եկեղեցու հետ թույլ էր: Տվյալ չափանիշներին համապատասխանում էին Համբարձումը, Վարդավառը, Վարդանանցը, Նավասարդը և այլն: Այդ տոներն իրենցից ներկայացնում էին՝ հատուկ սցենարներով կազմակերպված մարզա-երաժշտական միջոցառումներ և թատերականացված ներկայացումներ, որոնց նախաձեռնողները, իսկ շատ հաճախ նաև կատարողները մշակության և պետական հաստատություններն էին: Դրանք առաջին փորձերն էին պետության կողմից ավանդության տոների վերականգնման և, դրանով իսկ, բնակչությանը՝ էթնիկ ավանդույթներին հաղորդակից դարձնելու առումով:

Խորհրդային տոնական համակարգը կարիք ուներ նմանօրինակ ավանդության տոների և ծեսերի, որոնք իրենց յուրատեսակ ազգային կոլորիտով հնարավորություն կընձեռնեին՝ ընդգրկելու հանդիսատեսների ավելի լայն շրջանակ: Նման տոնախմբությունների նկատմամբ խորհրդային պետության աջակցությունը ինքնանպատակ չէր, քանի որ այստեղ գործում էր **«ազգային ձև և սոցիալիստական բովանդակություն»** գաղափարական մոդելը, որում գերակա դերը հատկացվում էր **ազգային տոնի սոցիալիստական բնույթին:**

Այդուհանդերձ, տվյալ ժամանակաշրջանում ազգային-ավանդության տոների նկատմամբ պետական ուշադրությունն ու աջակցությունը, որոշակի վերապահումներով հանդերձ, դրական երևույթ էր:

Այսպիսով, հայոց տոնական համակարգի էվոլյուցիան վերջին հարյուրամյակում իրենից ներկայացնում է որակապես տարբեր պատմական շրջափուլեր՝

պայմանավորված յուրատեսակ քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման առանձնահատկություններով: Հայաստանի Առաջին, Երկրորդ և Երրորդ հանրապետությունները դրսևորեցին հայեցակարգային (կոնցեպտուալ) տարաբնույթ մոտեցումներ:

Առաջին Հանրապետությանը բնորոշ էր դրական (պոզիտիվ) դիրքորոշումը ժառանգաբար փոխանցված էթնիկ ավանդույթների նկատմամբ: Իր գոյության կարճատև շրջանում կենցաղում տարածված ավանդույթային տոները համալրվեցին աշխարհիկ բովանդակությամբ ազգային նոր տոնացանկով:

Երկրորդ (խորհրդային) Հանրապետության յոթանասուն տարիները բնութագրվում են անցյալի և մասնավորապես՝ Առաջին Հանրապետության տոնական համակարգի նկատմամբ տրամագծորեն հակառակ դիրքորոշմամբ, չնայած այս պարբերաշրջանը ևս իր հերթին ընդգրկում է զարգացման երեք գլխավոր ենթափուլեր: Առաջին ենթափուլի ամենաբնորոշ հատկանիշը՝ էթնիկ ավանդույթների և ազգային-կրոնական տարրերի մերժումն ու ոչնչացումն է: Երկրորդ ենթափուլը բնութագրվում է խորհրդային տոների աճին զուգահեռ՝ ավանդույթային-կրոնական տոների և ծեսերի վերակենդանացմամբ, որը պայմանավորված էր պատերազմական և ետպատերազմյան ժանր ու լարված իրավիճակով (զինվորների ճակատագրերի անորոշություն, բավական մեծ զոհեր. ավելի քան 300 հազար զոհ տվեց այդ պատերազմում հայ ազգը, չհաշված հազարավոր հաշմանդամներն ու անհայտ կորածները): Երրորդ ենթափուլի համար բնորոշ էր պետության կողմից ավանդույթային տոների նկատմամբ մերժողական վերաբերմունքի ոչ միայն մեղմացումը, այլև՝ իսպառ վերացումը:

Տոնական վարքագծային փոփոխությունները մեծ չափով պայմանավորված էր էթնոսի համար վճռորոշ նշանակություն ունեցող պատմական իրադարձություններով: Նկատի ունենք, նախ և առաջ՝ Մեծ Եղեռնը, բռնագաղթերը, բնական աղետները և այլն:

Հանրապետության տնտեսական բարեփոխումները կարևոր նշանակություն ունեցան այդ համակարգի էվոլյուցիայի համար, որի ընթացքում ձևավորվեցին ուրբանիստական երանգավորմամբ ավանդույթներ: Բացի դրանից, գյուղական բնակչության զանգվածային ներհոսքը քաղաք, հայրենադարձությունը, նախկին ԽՍՀՄ հանրապետություններից հայ էթնոսի առանձին խմբերի ներգաղթը և այս բնույթի այլ երևույթներ պայմաններ ստեղծեցին էթնոսի համախմբման որակապես նոր գործընթացների համար, որի համատեքստում ձևավորվեց քաղաքային տիպի ծիսա-

կան արարողակարգ, և որն էլ առավել ուժեղացրեց էթնիկ ավանդույթների ակցենտավորումը:

Վերը նշված գործոնների այս համալիրով է հիմնականում պայմանավորված հայոց արդի տոնական համակարգի ձևավորման և փոփոխման առանձնահատկությունները XX դ. ողջ ընթացքում:

Հայոց տոնածիսական համակարգի էթնոսոցիոլոգիական հետազոտություններն անցկացվել են **Հանրապետության Այրարատ, Գեղարքունիք, Լոռի, Տավուշ, Շիրակ և Սյունիք պատմաազգագրական մարզերում**, որոնցից յուրաքանչյուրի բնակչության՝ պատմականորեն ձևավորված կենցաղամշակութային ուրույն համալիրը բնութագրվում է նաև տոնական համակարգերի առանձնահատկությամբ: Այդ հետազոտությունների ընթացքում դիտարկվել են հայ էթնոսի ներէթնիկ հանրույթների տարիքային և մասնագիտական հետևյալ խմբերը. **Տարիքային խմբեր**– 1/ 18-29 տարեկան, 2/ 30-49 տարեկան, 3/ 50 տարեկան և բարձր: **սոցիալ-մասնագիտական խմբեր**–Ա. բարձրագույն կրթություն, մասնագիտական բարձր որակավորում ունեցողներ, ղեկավար աշխատողներ, Բ. ծառայողներ (առանց մասնագիտական կրթության), Վ. արդյունաբերական–ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ, Գ. ոչ արդյունաբերական–ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ:

Ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ բնակավայրերում. 1) **Այրարատ** (Երևան, Հոկտեմբերյան [այժմ՝ Արմավիր], Աշտարակ, Բյուրեղավան, Էջմիածին քաղաքները և Էջմիածնի շրջանի Արշալույս, Դաշտ, Մրգաստան, Ջրառատ, Տարոնիկ գյուղերը), 2) **Սյունիք** (Կապան, Սիսիան քաղաքները և Սիսիանի շրջանի Ախլաթյան, Բնունիս, Բռնակոթ, Շաղաթ և Տոլորս գյուղերը), 3) **Շիրակ** (Լենինական [այժմ՝ Գյումրի], Ախուրյան քաղաքները և Ախուրյանի շրջանի Լեռնուտ, Կապս, Մարմաշեն և Վահրամաբերդ գյուղերը), 4) **Լոռի-Տավուշ** (Իջևան, Կալինինո [այժմ՝ Տաշիր], Կիրովական [այժմ՝ Վանաձոր] քաղաքները և Այգեհովիտ, Գետահովիտ, Դիտավան ու Ծաղկավան գյուղերը), 5) **Գեղարքունիք** (Կանո [այժմ՝ Գավառ], Հրազդան քաղաքները և Արզական, Բջնի ու Քաղսի գյուղերը): Հարցման ենթարկված անձինք ներկայացնում են Հայաստանի քաղաքային և գյուղական ողջ բնակչությունը:

